

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
Ժնեի համալսարան

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ

[ՃԱՌՔ ԸՆԴԴԵՄ ԱՂԱՆԴՈՑ]

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ
(Շարունակութիւն)

Ը. ԵՐԿԻ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

1. Աղբիւրների հարցը

«Երկնքի տակ նորութիւն չկայ», եւ Եզնիկը չի խոստովել այս ճշմարտութիւնից: Անկարելի էր, որ նա իր երկը շարադրէր եւ դրա առաջին բառից մինչեւ վերջինը գրէր՝ մինչ այդ չստեղծ կամ չկարգացուած մտքեր արտայայտելու համար, մանաւանդ երբ խօսքը կրօնական, աստուածաբանական, իմաստասիրական, աստղաբաշխական նիւթերի մասին է, որոնցով նա հոգեպէս սնուել էր, թարգմանել էր դրանց վերաբերող գրքեր: Եթէ ստեղծագործելիս նոյնիսկ աչքի առաջ կամ իր գրասեղանի վրայ չունենար որոշ գրուածքներ, որոնցից նա օգտուել է անկասկած, անկարելի էր, որ այդ պահին նրա միտքը ողողուած չլինէր իր ընթերցած կամ լսած գաղափարներով, եւ նրա կողմից սրանք գրի չառնուէին կամ չօգտագործուէին շարադրանքի այս կամ այն մասում, կամ նա չհետեւէր դրանց հեղինակներին: Նրա ժամանակ շրջում էին իմաստասիրական, աստուածաբանական, մեկնողական եւ այլ կարգի ընդհանուր տեղիներ դարձած մտքեր, արտայայտութիւններ, փաստեր ու փաստարկման ձեւեր, պատկերաւոր համեմատութիւններ եւ այլն, մանաւանդ երբ խօսքը Աստուծոյ եւ աստուածաբանութեան, հերետիկոսութեան դատապարտման կամ փիլիսոփայութեան մասին է, ինչպէս Եզնիկի գրքում, եւ որոնց նկատմամբ մշակուած էր Եկեղեցու հայրերի կամ տեսաբանների տարածուած եւ Եզնիկի համար էլ պարտադիր դարձած վարդապետութիւն: Ինչպէ՞ս կարելի էր այս բոլորին չհանդիպել Եզնիկի երկում, որն այլ կերպ մի շատ հազուադէպ բացառութիւն կը լինէր իմաստասիրական-աստուածաբանական գրականութեան մէջ: Այն գրաւոր վարդապետութեան երկերը, որոնք այս կամ այն կերպ օգտագործել է Եզնիկը (կամ որեւէ այլ հեղինակ), բանասիրութեան մէջ ընդունուած է կոչել աղբիւրներ:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ հայ եւ օտար բանասէրներ յայտնաբերել են Եզնիկի երկի այդպիսի աղբիւրներ: Բանասէրների փաստարկումն այն է, որ Եզնիկից առաջ ապրած որոշ հեղինակների ինչ-որ գործերի որոշ մտքեր բառացի կամ ազատ շարադրանքով, կրճատուած կամ ընդլայնուած տեղ են գտել Եզնիկի երկում, ինչ որ, ըստ մեզ, միանգամայն բնական եւ օրինաչափ է, եւ նա այս խնդրում բացառութիւն չէ: Այն հին ժամանակներում սովորութիւն չէր՝ նշել օգտագործուած աղբիւրները, նոյնիսկ եթէ փոխ առնուած կամ մէջբերուած մտքերը կամ վկայութիւնները Ս. Գրքից լինէին: Ուստի աղբիւրների յայտնաբերումը բանասէրներից պահանջում է մեծ ջանք, Եզնիկի երկի եւ հին յունական, բիւզանդական, ասորական, պարսկական գրականութիւնների խոր գիտակութիւն: Այդ որոնման նպատակն է եւ եղել է՝ աւելի լաւ հասկանալ Եզնիկի գործը, նրա կառուցուածքը, մի քանի մութ նախադասութիւնները (որոնք թերեւս միացել են գրիչների անուշադրութեան հետեւանքով), որոշ բառեր, ակնարկումներ, յայտնաբերել Եզնիկի «գրադարանը», որի որոշ գրքեր ցարդ անծանօթ են մնացել ընդհանրապէս. Եզնիկի փոխ առած մասերը կարող են ուղեցոյց լինել վերջիններիս յայտնաբերման, կամ եղածների լրացման, նրա երկի եւ այդ գրքերի աղ-

ճատուած տեղերի վերականգնման: Եզնիկի աղբիւրների յայտնաբերումը, որ պէտք է շարունակուի, նրա համար երբեք նսեմացում չէ, հակառակ ոմանց կարծիքին:

Լ. Մարիէսն այն հայագէտ բանասէրն է, որ ամենից շատ աղբիւրներ է յայտնաբերել Եզնիկի գործում. սակայն նա երկից կրկնել է հետեւեալ միտքը. «Նոյնիսկ եթէ ապացուցուի, թէ Եզնիկի ամբողջ շարադրանքը փոխ առնուած հատուածներից է բաղկացած, այնուհանդերձ կը մնայ փաստ, որ նիւթերի դասաւորումը եւ ազուցուածքը նրա գործն են» (*De Deo*, էջ 33). կամ՝ «Որքան էլ ընդարձակ լինեն նրա փոխառութիւնները, [. . .] դրանք օգտագործելու հարցում Եզնիկը մնում է ինքնուրոյն [. . .]: Յատակագիծը իրենն է: Այդ յատակագիծը [. . .] ի յայտ է բերում մի մարդու, որ ի բնէ իմաստասէր է, բարեպաշտ, բայց իմացական աստուածաբան: Ուստի կարող ենք վստահութեամբ սպասել Եզնիկի փոխառութիւնները բոլոր պրպտողների որոնումների արդիւնքին» (ն. տ., էջ 92-93):

Լ. Մարիէսը 1924-ին լոյս տեսած իր *De Deo* ուսումնասիրութեան մէջ, էջ 34-93, նշել եւ մասամբ վերլուծել է իրենից առաջ եւ իր կողմից յայտնաբերուած աղբիւրները: Սրանք նշելիս՝ միւսները եւ ինքը հետեւել են այն հերթականութեանը, որով դրանք հանդիպում են Եզնիկի երկում: Նոյն կարգին կամ աղբիւրներ յայտնաբերած բանասէրների ժամանակին հետեւելու փոխարէն՝ մենք հետեւում ենք օգտագործուած հեղինակ-աղբիւրների անունների այբբենական կարգին, սակայն նրանց շարադրանքի լեզուների՝ յունարէն, ասորերէն եւ հայերէն, բաժանումներով: Աղբիւրները մեծ մասամբ եղել են յունարէն, ոմանք լատիներէնից թարգմանուած յունարէն, մի քանիսը ասորերէն (կամ պարսկերէն) եւ, ըստ ոմանց, հայերէն:

2. Երկի յայտնաբերուած աղբիւրների հեղինակների ցանկ

- ա) Եզնիկի երկի յունարէն աղբիւրների հեղինակներից են եղել՝
 1. Ադամանտիոս կամ Ադամանտ (Adamantius), գրել է 270-280-ի եւ 313-ի միջեւ.
 2. Արիստիդէս Իմաստասէր Աթենացի (Aristide), գրել է 138-141 թթ. միջեւ.
 3. Աքիլլէոս Ստատիոս (Achilleus Staios), չ. 200 թ..
 4. Բարսեղ Կեսարացի (Basile de Césarée), չ. 379.
 5. Գրիգոր Նիւսացի (Grégoire de Nysse), † 394 թ..
 6. Դիոդոր Տարսոնացի (Diodore de Tarse), † չ. 392 թ..
 7. Եպիփան Կիպրացի (Épiphanes), չ. 315-403.
 8. Թէոդորետոս (Théodore), † 458 թ..
 9. Թէոդորոս Մոպսուեստացի կամ Մամուեստացի (Théodore de Mopsueste), † 428 թ..
 10. Իրենէոս (Irénée), † չ. 202 թ..
 11. Հիպոլիտոս (Hippolyte), գրել է 200-235 թթ..
 12. Մեթոդիոս Ողիմպիացի կամ Պատարացի (Méthode d'Olympe), † չ. 311 թ..
 13. Որիգինէս (Origène) † 254 կամ 255 թ.:
- բ) Եզնիկի երկի ասորերէն աղբիւրների հեղինակներից են եղել՝
 14. Եփրեմ Ասորի (Ephrem), † 373 թ..
 15. Վկայք Պարսից (*Syrische Polemik gegen die persischen Religion*).
 16. Թէոդոր Բար Սունի (Théodore Bar Khouni), 7-րդ դարի սկիզբ:
- գ) Եզնիկի երկի հայերէն աղբիւրներից է, ըստ ոմանց՝
 17. «Հարցումն սրբոյն Գրիգորի Պարթեի» (կամ Լուսաւորչի) գրուածքը:

Ծան. - Ն. Աղոնցը գրել է, թէ Եզնիկն օգտագործել է նաեւ հայերէն այլ աղբիւրներ, սակայն անուններ չի տուել:
 18. «Յաճախապատում ճառք», ըստ ոմանց:

Եզնիկի աղբիւրների որոնումը կամ յայտնաբերումը, բնագրային գուգադրումները, քննարկումը մեր ծրագրից դուրս են, քանի որ դրանց համար մի մենագրութիւն անհրաժեշտ կը լինէր: Զուգադրումների համար տես՝ Լ. Mariès, *De Deo*, էջ 34-128: Մենք բաւարարուած ենք յայտնաբերուած աղբիւրների մասին որոշ տեղեկութիւններ տալով:

3. Յայտնաբերուած աղբիւրների մասին

ա) Յունարէն աղբիւրներ (Հեղինակների այբբենական կարգով)

1. Ադամանտիոս. Հաւանաբար Եղեսիայում 270-ից կամ 280-ից մինչեւ 313 թ. ընկած ժամանակաշրջանում կազմուած նրա գործը կամ «Տրամախօսութիւնը» անվերնագիր է հասել, ինչպէս Եղնիկինը. լատիներէն կոչել են De recta fide ad Deum [«Վասն ուղիղ հաւատայ յԱստուած»]: Ուսումնասիրողները գտել են, որ Ադամանտիոսը մեծապէս օգտուել է Մեթոդիոս Ողիմպիացու [De autexusio] կամ [De libero arbitrio] [«Վասն անձնիշխանութեան»] յունարէն անվերնագիր գրուածքից, որից նոյնչափ օգտուել է նաեւ Եղնիկը, ինչպէս ցոյց տուեց Գ. Գալէմբեարեանը (Նորագոյն աղբերք, էջ 17-89): Ըստ Գ. Գալէմբեարեանի՝ «Եղնիկ ոչ թէ այս [Ադամանտիոսի] Տրամախօսութեան՝ այլ ուղղակի Մեթոդիոսէ կ'առնու» (Նորագոյն աղբերք, էջ 22, ծան. 2): Լ. Մարիէսը իր De Deo ուսումնասիրութեան էջ 100-104-ում աւելի մանրամասնօրէն քննելով հարցը՝ եկել է հետեւեալ եզրակացութեան. «Մենք կարծում ենք, որ խնդրի իսկական լուծմանն աւելի մօտ կը լինենք ընդունելով, որ Եղնիկն իր տրամադրութեան տակ միաժամանակ ունեցել է թէ՛ Ադամանտիոսի մէկ օրինակը եւ թէ՛ Մեթոդիոսի «Վասն անձնիշխանութեան» երկի ամբողջական մի օրինակը» (De Deo, էջ 101-102): Այժմ հետազոտութիւնը կարելի է շարունակել, քանի որ երեք մատենագիրների երկերը լոյս են տեսել քննական հրատարակութեամբ: Ն. Ադոնցի կարծիքով նոյնպէս՝ օգտուել է Ադամանտիոսի գրքից (տես նրա Քննական նշմարներ Եղնիկի մասին յօդուածը, «Բազմավէպ», 1925, էջ 294-296):

2. Արիստիդէս Իմաստասէր Աթենացի, «Ջատագովութիւն». Գ. Գալէմբեարեանն է յայտնաբերել այս աղբիւրը (Նորագոյն աղբերք, էջ 7-14): 1878 թ. Ս. Ղազարում լոյս են տեսել «Ջատագովութեան» հայերէն հին թարգմանութեան հատակոտորներ: 1889 թ. հրատարակուել են Սինայի լեռան Ս. Կատարինէ վանքի մատենադարանում յայտնաբերուած ասորերէն թարգմանութիւնը եւ յունարէն բնագրի հատակոտորներ, որոնք քաղուած են «Պատմութիւն Բարդամու եւ Յովասափայ» գրուածքից: 1893 թ. տպագրուել է գերմաներէն թարգմանութիւնը: «Արդ, - գրել է Գ. Գալէմբեարեանը, - այս Ջատագովութիւնը մեզ կը ներկայանայ իբրեւ գործ մը, գոր Եղնիկ ընթերցած եւ «Ընդդէմ աղանդոց» գործոյն համար օգտուած եւ նաեւ փոքրիկ մաս մը մէջէն քաղած է» (Նորագոյն աղբերք, էջ 8): Եւ քանի որ այդ «փոքրիկ մասը» չկայ Ս. Ղազարի հրատարակութեան մէջ, ուստի Գ. Գալէմբեարեանը գրաբար իր թարգմանութեամբ այն զուգադրել է Եղնիկի համապատասխան հատուածին, նկատել տալով, թէ Եղնիկը «Նոյն իսկ նոյն բառերով խօսքեր կ'առնու» (ն. տ., էջ 9): Քանի որ Արիստիդէսի այդ հատուածը հայերէն հին թարգմանութեամբ պահպանուած է, ուստի այդ «նոյն իսկ նոյն բառերը» Գ. Գալէմբեարեանն է փոխ առել Եղնիկից՝ Եղնիկի փոխառութիւնն աւելի համոզիչ եւ ակնառու դարձնելու համար: Արիստիդէսի եւ Եղնիկի հատուածների առադրման այս դատապարտելի եղանակից իսկ երևում է, որ Գ. Գալէմբեարեանի այն պընդումը, թէ Եղնիկը «Արիստիդէսի Գ. հատուածէն քաղուած կ'ընէ» (ն. տ., էջ 9) խիստ չափազանցութիւն է. եթէ նրա պէս դատելու լինենք, Եղնիկին մնում էր լուրջ, եթէ Արիստիդէսից կամ մէկ ուրիշից յետոյ իրաւունք չունէր իր սեփական բառերով դատապարտելու չորս տարրերի պաշտամունքը: Գ. Գալէմբեարեանը ընդգծելով զուգադրել է, օրինակ, հետեւեալ տողերը (ն. տ., էջ 10).

Արիստիդէս	Եղնիկ
«քանզի երկիր բրի եւ տնկի եւ պեղի եւ գաղբ եւ գաղտեղութիւն մարդոյ եւ վայրի եւ ընտանի անասնոց յինքն ընդունի»:	«գերկիր, գոր հանապազ բրեմք եւ ցանկ կոխեմք եւ գաղբ գմեր եւ գանասնոց մերոց ի նա հեղումք»:

Մօտաւորապէս նոյն մտքերն արտայայտուած են տարբեր բառերով եւ տարբեր շարահիւսութեամբ: Մ. Շմիդը Եղնիկի իր գերմաներէն թարգմանութեան ներածութեան մէջ գրել է. Ֆէտտէր «Յատուկ յօդուած մը գրած է՝ «Արիստիդէսէ վկայութիւններ հայ մատենագրութեան մէջ»:

Ասոր մէջ կ'ընդունի Ֆէտտէր թէ երկուքին մէջ (Եղնիկայ եւ Արիստիդէսի) թէեւ նոյնաբանութիւններ կան, սակայն Եղնիկայ Արիստիդէսէ յատկապէս կախում ունենալն (ընդդէմ Հ. Գալէմբեարեանի) ապացուցուած չի համարի (անդ էջ 530), այլ Եղնիկ միայն օգտուող է անկէ՝ անկախ մնալով (անդ էջ 534)» (Նորագոյն աղբերք, «Յաւելուածք», էջ 12, ծան. 5):

3. Աֆիլէոս Ստատիոս

Աղբիւրը յայտնաբերող Մարիէսը զուգադրել է (De Deo, էջ, 57-57) երկու հատուած երկրագնդի շրջապտոյտի վերաբերեալ՝ յունարէն բնագրով եւ Եղնիկի հատուածի Փրանսերէն իր թարգմանութեամբ, նկատել տալով, թէ Եղնիկի երկու ուրիշ հատուածներ հեռաւոր նմանութիւն ունեն Ստատիոսի գրածի հետ:

4. Բարսեղ Կեսարացի, «Ճառք վասն վեցարեայ արարչութեան» կամ պարզապէս «Վեցարեայ», Յ. Թորոսեանն իր «Եղնիկ եւ իւր երկասիրութիւնն» յօդուածում (Բազմավէպ, 1889) մի քանի անգամ նկատել է տուել, որ Եղնիկն օգտուել է Բարսեղի այս գրուածքից, եւ նրա այս կամ այն նախադասութիւնը «Թուի թէ ներշնչութիւն մի է՝ եթէ ոչ եւ քաղուած ինչ ուրիշ մը» (ն. տ., էջ 200). կամ՝ «Թուի՝ թէ մերս Եղնիկ մեղմով իմն կ'երթայ զկնի հետոյն Ս. Բարսղի» (ն. տ.). «Գրեթէ հետեւողութիւն մ'է Վեցօրէից եթէ ոչ բառից՝ գոնեա իմաստից եւ օրինակաց» (ն. տ., էջ 202). կամ էլ 314, ծան. 1՝ «Լուսաւորաց վրայ խօսելու միջոց, օգտուել է Եղնիկ Ս. Բարսղի Վեցօրէից ձառերէն, ինչպէս օրինակ իմն» եւ այլն. տես նաեւ ն. տ., էջ 317-ի օրինակները:

Գ. Գալէմբեարեանն իր Նորագոյն աղբերքում նշել է (յանուանէ) Յ. Թորոսեանի 1-ին օրինակը («Բազմավէպ», էջ 200)՝ «Եթէ աղբերք մշտաբուխք» եւ այլն:

Յ. Թորոսեանը «Ս. Բարսեղ Կեսարացի. իր «Վեցօրեայ» ցատերը եւ հայ թարգմանութիւնը» յօդուածում («Բազմավէպ», 1934, էջ 412-422) դարձեալ անդրադարձել է այս գրքից Եղնիկի օգտուելու հարցին:

Վարդան Սոմունճեանը (կամ Հացունին) 1893 թ. «Բազմավէպ»-ում հրապարակած յօդուածում («որուն՝ ըստ օրինաց բնութեան, արձագանքը տուին Կովկասու մութ խորերը», Գ. Գալէմբեարեան, Նորագոյն աղբերք, էջ 5) փորձել է ժխտել Յ. Թորոսեանի արձանագրած փաստերը (բացի Եպիփանից օգտուած լինելը), որոնք, սակայն, ակնյայտ են եւ ընդունուել ուրիշ բանասէրների կողմից:

Ըստ Ն. Ադոնցի, «Շատ կէտերում նկատուած է մօտ առնչութիւն Բարսեղի եւ Եղնիկի մտքերի մէջ, առնչութիւն, որ երբեմն նոյնանում են եւ լեզուական դարձուածներով» (այսպէս, Քննական նշմարներ, «Բազմավէպ», 1925, էջ 371): Յօդուածի շարունակութեան մէջ Ն. Ադոնցը տուել է բազմավիւ օրինակներ (ն. տ., էջ 1926, էջ 70-72):

Կ. Մ. Մուրադեանը նոյնպէս իր «Բարսեղ Կեսարացիի եւ նրա «Վեցօրեայ» հայ մատենագրութեան մէջ» գրքում (էջ 207-208) ի յայտ է բերել Եղնիկի նմանութիւններ Բարսեղի հետ: Ահա նրա չափաւոր եզրակացութիւնը. «Ինչպէս միշտ, աւելի սեղմ ու կուռ է Եղնիկի ասելիքը, գերծ, այսպէս կոչուած, անհարկի նկարագրութիւններից, բացատրականութիւնից [. . .]: Մի դէպքում, ինչպէս ցոյց է տալիս առանձին հատուածների համադրումը, խօսքը բացայայտ ընդհանրութեան կամ, աւելի ճիշտ, գրեթէ բառական նոյնութեան մասին է, իսկ երկրորդ (աւելի յաճախադէպ) պարագայում արդէն գործ ունենք «Վեցօրեայում» սպառիչ քննութեան ենթարկուած առանձին խընդիրների վերահարցադրման ու Կեսարացու որոշ հետեւութիւնների Կողբացու շարադրման հետ: Նման դէպքերում, անշուշտ, դրականն այն է, որ Կողբացին սոսկ ընդօրինակող է» (նշ. աշխ., էջ 209, ընդգծումը մերն է):

Մ. Գարագաշեանի կարծիքով՝ Եղնիկը հաւասար է «հռչակաւորագուցից ի հարց Յոյն եկեղեցուց, Բարսղի, Ոսկեբերանի, Կիւրղի, ոչ խորելով ինչ գնոցայն» (Ճաշակ, Բ, 16):

5. Գրիգոր Նիւսացի. Լ. Մարիէսը նկատել է (De Deo, էջ 58), որ հիւանդութեան փուլերի համեմատ դեղեր նշանակող բժշկի եւ յարմար ժամանակին իր Որդուն աշխարհ առաքած Աստուծոյ

Համեմատութիւնը ընթերցում է Գրիգոր Նիւսացուն վերագրուող մի կասկածելի գրուածքում (Migne, P. G., հատ. 46, 1129-1130). Մարիէան այս աղբիւրը հարցականի տակ է դրել (ն. տ., էջ 85):

6. Դիոդոր Տարսուսացի (տե՛ս մեր Մատենագիտութեան մէջ Diodore, էջ 94, 7-րդ հատուած). Լ. Մարիէսը նշել է (De Deo, էջ 56), թէ (1826 թ.) Եզնիկ, էջ 188. 9-12 հատուածը յիշեցնում է այս մատենագրի «Ծննդոց գրքի» մեկնութեան մի հատուածը:

7. Եպիփան Կիպրացի. Յ. Թորոսեանը «Եզնիկ եւ իւր երկասիրութիւնն» յօդուածում («Բազմավէպ», 1889) երկու հատուած է մատնանշել, որ Եզնիկը փոխ է առել այս մատենագրի Panarion կամ Adversus Haereses [Ընդդէմ հերձուածոց] գրուածքից: Նա Եզնիկին համադրել է Եպիփանի լատիներէն թարգմանութիւնից: Առաջինը («Բազմավէպ», 1889, էջ 315) վերաբերում է Պրիթագորեաններին, Պրատոնեաններին եւ Ստոյիկեաններին (Եզնիկ, 1826, էջ 200-208), տե՛ս Epiphanius, Anecéphaléos [Համառօտումն], էջ 163-166: Մարիէսը նկատել է (De Deo, էջ 54-55), որ Եզնիկը չի պահպանել իր աղբիւրի շարադրանքի ընթացքը, եւ որ Եպիփանի այս հատուածը մի ընդհանուր տեղի էր դարձել եւ նոյնը կայ նաեւ, օրինակ, Յովհ. Դամասկացու մօտ (Migne, P. G., հատ. 94, 677 եւ յաջ.): Յ. Թորոսեանից առաջ Գ. Զարբհանաւեանը դիտել տուել էր հետեւեալը. «Եպիփանու Հերձուածոց դէմ գրած մատենին մէջ՝ շատ տեղ Պարսից աղանդոյն եւ Մարկիոնի դէմ խօսած ատեն՝ համաձայն կը գտնենք զնա ընդ Եզնիկայ»¹⁴⁰: Գ. Գալէմբարեանը սրամտօրէն առարկել է՝ «Ինչո՞ւ ոչ զԵզնիկ ընդ Եպիփանու» եւ հակասելով գրել է. «Մենք «Պարսից աղանդոյն եւ Մարկիոնի» մասերուն մէջ՝ Եպիփանու եւ Եզնիկայ համաձայնութիւնը տե՛ղ մ'ալ չկրցանք գտնել՝ բաց ի Մարկիոնի կենսագրութենէն» (Նորագոյն աղբերք, էջ 3-4):

8. Տաշեանը երկար խօսել է Եպիփանի «Ընդդէմ հերձուածոց» գրուածքի մասին (տե՛ս մեր Մատենագիտութեան մէջ): Նա հաստատել է Յ. Թորոսեանի նշած հատուածները եւ աւելացրել. «Գիրք հերձուածոցին գոնէ մասնական թարգմանութիւն մ'եղած է Եզնիկու, - եւ այն՝ ի՞նչ գեղեցիկ թարգմանութիւն, - նոյն իսկ Եզնիկայ ձեռագր: Մեկնութիւնն այս է որ Եպիփանու ճիշդ այս կտորներէն բաւական բան մը թարգմանած է Եզնիկ բառ առ բառ եւ իւր գրոց մէջ առած. - միայն սոյն կտորներուն դիրքն այլայլած է [. . .]: Եւ կան նշաններ՝ թէ մասեր ալ կրնան գրչաց անհոգութեամբ դուրս ինկած ըլլալ, այսպէս մանաւանդ սկիզբը»¹⁴¹: Նոյն տեղում, էջ 92-99, համադրել է Եզնիկի եւ Եպիփանի (յունարէն) հատուածներ, էջատակում անելով շատ հմտալից դիտողութիւններ:

8. Թէոդորեոս. տե՛ս վերեւում Գրիգոր Նիւսացի. ըստ Մարիէսի, նոյն հատուածը կայ նաեւ այս մատենագրի մօտ (Migne, P. G., հատ. 83, 988):

9. Թէոդոր Մոպսուեստացի (Մամուեստացի). Փոտ պատրիարքը յիշատակել է նրա ցարդ անյայտ մի գիրքը՝ Περὶ τῆς ἐν Περσίδι μαγικῆς, մազեկականութեան մասին (տե՛ս Migne, P. G., հատ. 66, 64-65 եւ Փոտ, հատ. 103, 281): Կարծիք կայ, թէ Եզնիկը ծանօթ եղած լինի դրան (L. Mariès, De Deo, էջ 54, 86-91). տե՛ս նաեւ Ն. Աղոնց, «Մաշքոց եւ նրա աշակերտները ըստ օտար աղբիւրների» մեր Մատենագիտութեան մէջ: Սա գրել է. «Պարսից քէչին նուիրած էջերը շատ մօտ աղբրս ունին Թէոդոր Մամուեստացու մի գրութեան հետ» («Քննական նշմարներ», «Բազմավէպ», 1925, էջ 369 եւ շար., էջ 196-ում՝ «Պարսից կրօնի վերաբերեալ հիմնական յօդուածը թարգմանածոց է»: Նոյնը ենթադրում են նաեւ ուրիշ բանասէրներ:

10. Իրենէոս, Adversus Haereses [Ընդդէմ հերձուածոց]. Մարիէսն է հարցադրել, թէ «Եզնիկն ուղղակի կամ անուղղակի ձեւով օգտագործել է արդեօք սուրբ Իրենէոսի Ընդդէմ հերձուածոցը. դժուար է վստահօրէն պատասխանել» (De Deo, էջ 60): Նա գուգաղբել է Մարկիոնին վերաբերող հատուածներ, որոնցից մէկը Եզն. 1826, էջ 241-ն է: Սակայն 1974-ին պարզուեց, որ Մարիէսի ենթադրութիւնը ճիշտ չէր. տե՛ս ստորեւ Հիպոլիտոսի մասին:

¹⁴⁰ Հայկական հիմն դպրութեան պատմութիւն, 1-ին տպ. 1866, էջ 304, ծան. 1:
¹⁴¹ Յ. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւն, մասն առաջին, 1895, էջ 90-91:

11. Հիպոլիտոս. Գ. Գալէմբարեանը (Նորագոյն աղբերք, էջ 92-97) համադրել է Փարիզի «Bibliothèque Nationale» գրադարանի թ. 46 հայերէն ձեռագրում պահպանուած մի հատուած: Մարիէսը կարծել էր, թէ Եզնիկ (1826), էջ 241-ը սրանից է փոխ առնուած: Ինչպիսիք բանասէր, հայագէտ Միշէլ Վան էսբրուկը «Le passage d'Eznik (P. 241) dans le «De Universo» d'Hippolyte» հաղորդման մէջ (տե՛ս մեր Մատենագիտութիւնը) յայտնի դարձրեց Մարսել Ռիչարի այն յայտնաբերումը, թէ այդ էջում Եզնիկը ներշնչուել է Հիպոլիտոսի մասամբ պահպանուած «De Universo» գրուածքից: Այս աղբիւրը հայերէն մամուլում ծանուցուցինք «Եզնիկի մի նոր աղբիւր» («Բազմավէպ», 1976, թ. 1-2, էջ 121-125) մեր հաղորդման մէջ:

12. Մեթոդիոս Ողիմպիացի, Περὶ αὐτεξουσίου, De libero arbitrio [Վասն անձնիշխանութեան], գիտական նորագոյն հրատարակութիւնը տե՛ս մեր Մատենագիտութեան մէջ՝ Vaillant A., ուր էջ 8-28՝ հեղինակի եւ գործի մասին: Ըստ Գ. Գալէմբարեանի, որին այս աղբիւրը մատնանշել է Ք. Սպենեանն իր «Ուսումն դասական հայերէն լեզուի» աշխատութեան մէջ, Եզնիկն այս «գիրքը գիտակցաբար փոփոխելով՝ իբրեւ իւրը ներկայացուցած է» (Նորագոյն աղբերք, էջ 18): Այդ ապացուցելու համար նա, յունարէն եւ սլաւոներէն պահպանուած հատուածները թարգմանելով գրաբար՝ օգտագործելով Եզնիկի բառապաշարը, շարահիւստութիւնը եւ ոճը (ինչ որ մենք դատապարտելի ենք համարում այս դէպքում)¹⁴², դրանք գուգաղբել է Եզնիկին (1826, էջ 19-58), եւ աւելի կարճ երկու հատուած եւս, որոնց տեղերը Եզնիկը փոխել է (Նորագոյն աղբերք, էջ 22-86): էջ 87-89-ում նա արձանագրել է իր գուգաղբումից հանած եզրակացութիւնները. հարկ եղած դէպքում Եզնիկը կրճատել է աղբիւրը, ընդլայնել, շեղուել նրանից: Այսպիսով այն տպաւորութիւնն է ստացուել, թէ Եզնիկը մի կեղծարար կամ հասարակ բանագող է: Ճիշտ է գրել Գարեգին Ուշատուրեանը Եզնիկի իր հրատարակութեան ներածութեան մէջ (էջ ԺԴ-ԺԵ). «Որտեղ է Հ. Գալէմբարեանի քննադատական կեցուածքը Եզնիկի գիրքին դէմ [. . .]: Եզնիկ ստրկօրէն ընդօրինակող մը չէ եւ ունի իր սեփական կարծիքներն ու դատողութիւնները՝ իր ձեռնարկին տալու իր սեփական կնիքը»: Պարզ է, որ Գ. Գալէմբարեանը չափազանցել է, «իր գործն առաջ է տարել Եզնիկին մեղադրելու միտումով» (Ա. Ա. Աբրահամեան, Եզնիկ, 1970, էջ 23): Մեթոդիոսի երկի գիտական հրատարակութեան հեղինակ Ա. Վայանը իր ներածութեան էջ 30-ում գրել է, որ Եզնիկը ոչ թէ բառացի թարգմանելով իր երկի մէջ ներառել է Մեթոդիոսի գրուածքից մասեր, այլ՝ կրճատումներով, հեղինակի մտքերը իւրովի շարադրելով եւ յաճախ շատ ազատօրէն փոխելով իմաստն ու յարմարեցնելով: Ըստ Ադ 296-ի՝ դա մի «ազատ թարգմանութիւն» է, որ նոյնպէս ճիշտ չէ:

13. Որիգենէս. Լ. Մարիէսը (De Deo, էջ 56) այս մատենագրի Ծննդոց գրքի մեկնութիւնից մի հատուած կասկածանքով գուգաղբել է Եզնիկին (1826, էջ 163.26-164.4):

Ծան. - Յ. Ոսկեբերանի «Մեկնութիւն Եպիփանի մարգարէի» գործը հաւանաբար Եզնիկի աղբիւրներից է եղել, գուցէ եւ ինքն է թարգմանիչը:

բ) Ասորերէն աղբիւրներ

14. Եփրեմ Ասորի. Լ. Մարիէսը (De Deo, էջ 70-78) ընդհանուր մտքեր է գտել Եփրեմի «Ընդդէմ հերձուածոց» գրքի 3-րդ ճառի եւ մանաւանդ «Ճառ ընդդէմ Մարկիոնի» հատուածի եւ Եզնիկի գրքի միջեւ: Դրանք կարող են վկայել, թէ Եզնիկն ազդուել է այս գրուածքից, քանի որ երկու մատենագիրների քննադատած մարկիոնականութիւնը մեծ մասամբ նոյնն է, թէեւ կան տարբերութիւններ:

15. «Վկայք Պարսից». Լուի Մարիէսը (De Deo, էջ 41-47) վերատպել է Թէոդոր Նյուդեկէի (Th. Nöldeke) գերմաներէն մի յօդուածը եւ հրատարակած վարքագրական բնագիրը գերմաներէն թարգմանութեամբ՝ «Syrische Polemik gegen die persische Religion», որի մէջ խօսուում է նաեւ գրուանականութեան մասին: Մարիէսը, Փրանսերէն թարգմանութեամբ, վարքագրութեանը համադրել է Եզնիկի համապատասխան հատուածները: Սակայն իր աշխատութեան էջ 85-ում նկատել է տալիս, որ այդ գրուածքը Եզնիկի մի աղբիւր չի կարող լինել բառիս բուն իմաստով:

¹⁴² «Անթոյլատրելի է, երբ նոյնականութեան տպաւորութիւն ստեղծելու համար Եզնիկն օգտագործուած է Եզնիկի դէմ» (Ա. Ա. Աբրահամեան, Եզնիկ, 1970, էջ 24):

16. Թէոփոր Բար Խունի, «Որմզդի եւ Արիմնի ծնունդը». ըստ Փրանսիացի բանասէր-հայագետ Օգ. Կարիէրի, այս գրուածքը Եզնիկի աղբիւրներից է. բայց քանի որ այս Թէոփորը 7-րդ դարի սկիզբի մարդ է, իսկ գրուածքը 8-րդից է, ուստի Եզնիկը թերեւս տեսել է դրա բուն աղբիւրը: Ասորերէն բնագիրը հրատարակուեց Փարիզում 1899 թ.¹⁴⁵, իսկ Կարիէրն այն հրատարակեց առանձին, չորս սիւնակներով՝ ասորերէն բնագիրը, Փրանսերէն իր թարգմանութիւնը, Եզնիկի եւ Նղիշի համապատասխան հատուածները: 1900 թ. ՀԱ-ում (էջ 183-186) Յ. Տաշեանն այն վերահրատարակեց ասորերէնի Փրանսերէն թարգմանութիւնը փոխարինելով գրաբարով, նշելով, որ «Թարգմանութիւնն ըստ կարելույն բառացի ըրինք. կարելի էր աւելի Եզնիկայ մերձեցնել». ուրախալի է, որ չի «մերձեցրել», ինչպէս արել է Գ. Գալէմբարեանը Մեթոդիոսի եւ Եզնիկի հատուածները բաղադատելիս: Կարիէրի կարծիքով, այս գրուածքը քաղուած է մի հնագոյն բնագրից, որ հաւանաբար պահպանուած էր թարգմանուած ասորերէն. իսկ Եզնիկը կարող է տեսած լինել այդ հնագոյն բնագրի աւելի հաւատարիմ թարգմանութիւնը (ինչո՞ւ ոչ բուն պահպանուածները կամ հին պարսկերէնը): Ինչ վերաբերում է Նղիշին, ապա Կարիէրը մտածում է, որ նա Եզնիկից է քաղել Միհր Ներսէսին իբր ուղարկուած յայտնի նամակը:

Ծան. - Վինդիշմանի կարծիքով (տե՛ս մեր Մատենագիտութեան մէջ՝ Windischmann, Recension)՝ Մարկիոնի դէմ գրելիս Եզնիկն օգտուել է ասորի գնոստիկեան Բարդեմայնի մի գրուածքից, որ Մարկիոնի քննադատութիւն է, կամ հենց Մարկիոնի *Antithèse* [Հակադրութիւն] գրուածքից կամ նրա աշակերտներից մէկի մի գրուածքից: Սակայն Հառնակը (տե՛ս մեր Մատենագիտութեան մէջ՝ Harnack, Beiträge) մերժել է Վինդիշմանի ենթադրութիւնը: Այս բոլորի մասին տե՛ս Գ. Գալէմբարեան, Նորագոյն աղբերք, «Յաւելուածք», էջ 13, որ Շմիդի՝ Եզնիկի գերմ. թարգմանութեան ներածութիւնից է:

17. Այիթալախի հովուական կամ վարդապետական թուղթը, տե՛ս Յ. Թորոսեան եւ Ն. Ն. Բիւզանդացի մեր Մատենագիտութեան մէջ:

գ. Բանասէրների կարծիքները յունարէն եւ ասորերէն աղբիւրների մասին

Իսկական աղբիւրներն ըստ Մարիէսի 12 կամ 13 հատ են: Սակայն նա կարծում է, որ այլ աղբիւրներ եւս թաքնուած են Եզնիկի երկում, ինչ որ ասել են նաեւ ուրիշ բանասէրներ: Նա նշել է դրանց յայտնաբերման անհրաժեշտութիւնը, թէեւ դա դիւրին չէ, որովհետեւ Եզնիկը վերամշակել է իր աղբիւրները: Բացի դրանից, այն բոլոր գրուածքները, որոնցից Եզնիկը կարող է օգտուած լինել, ցարդ անյայտ են:

Ն. Ադոնցի կարծիքով՝ «Դժուար թէ Եզնիկն անմիջապէս այդ հեղինակներից քաղած լինի այն հատուածները, որ նմանութիւն ունին: Աւելի շուտով գոգադիպումներն են, որ առնուած են ընդհանուր աղբիւրից» (Քննական նշմարներ, «Բագմավէպ», 1925, էջ 294):

Յ. Տաշեանը Եզնիկի երկը համարել է «կիսա-ինքնագիր գիրք» (ՀԱ, 1969, էջ 461):

Ն. Ադոնցն էլ Մարիէսի պէս է մտածել Երկի եւ աղբիւրների յարաբերութեան մասին. «Յամենայն դէպս Եզնիկի գործը մի գրական գողտրիկ շէնք է, թէեւ տարբեր նիւթերից, տարբեր՝ ըստ որակի եւ ըստ ծագման» (ն. տ.):

դ. Երկի հայերէն «աղբիւրներ»

1. Ն. Ադոնցը իր «Քննական նշմարներ Եզնիկի մասին» յօդուածում գրել է, թէ օտար աղբիւրներից բացի, «Եզնիկն օգտուել է նաեւ մի հին յիշատակարանից, որ կոչւում է «Հարցումն եւ պատասխանիք սրբոյն Գրիգորի Պարթեի»: Սորան է պարտական Եզնիկն մանաւանդ հայ Փոլկո՛-

¹⁴⁵ M. Pognon, *Inscriptions mandaites des coupes de Khoubir*, Paris, 1899, p. 111.

րի վերաբերեալ թանկարժէք նիւթերը» (Բագմավէպ, 1925, էջ 366-367): Այս ապացուցելու համար նա հրատարակեց «Le Questionnaire de saint Grégoire l'Illuminateur et ses rapports avec Eznik» յօդուածը (տե՛ս մեր Մատենագիտութեան մէջ) եւ «Կանոն Բ Սրբոյն Գրիգորի Պարթեի հարցումն եւ պատասխանիք նորա» բնագիրը (ն. տ., էջ 311-322), սրան կցելով Եզնիկի այն ընդարձակ հատուածները, որոնք, նրա կարծիքով, քաղուած են այդ գրուածքից: Նա նոյն տեղում Փրանսերէն է թարգմանել Հարցումը եւ այնուհետեւ մանրամասն քննարկել իր առաջադրած վարկածը: Ադոնցն իր ուսումնասիրութեան հիմնական մասը, առանց Հարցումի եւ Եզնիկի հատուածների, հայերէն հրատարակեց Բոստոնի «Հայրենիք» ամսագրում (1928, 7, 79-81): Իսկ Մ. Սոստիկեանի կարծիքով «Եզնիկի գրքի ամենարժէքաւոր մասերն էլ հենց դրանք [այսինքն՝ «Փոլկո՛րի վերաբերեալ նիւթերն». ՄՄ.] են» («Ազգագրական հանդէս», 1916, էջ 138):

Լեւոն Սաչիկեանն իր «Գրիգոր Պարթեի վերագրուած «Հարցումը», որպէս հայ մատենագրութեան երախայրիք» յօդուածում («Բանբեր Մատենագրարանի», 1964, թ. 7, էջ 301-328) պնդեց Ադոնցից յետոյ, թէ դա իրօք Եզնիկի հայերէն մէկ աղբիւրն է. սակայն, ի տարբերութիւն Ադոնցի, նա դա համարեց Մեսրոպ Մաշտոցի գրչից ելած: Նա բազմաթիւ վրիպակներով վերահրատարակեց նոյն բնագիրը եւ հանդիպադրեց Եզնիկի նոյն հատուածները (1959 թ. տպից առնելով):

Մենք մեր «Գրիգոր Պարթեի կամ Մ. Մաշտոցի վերագրուած «Հարցումը» եւ Եզնիկ Կողբացի» յօդուածում (ՀԱ, 1971-1973) ջանացինք փաստելով մերժել Ադոնցի եւ Լ. Սաչիկեանի ենթադրութիւնը: «Հարցումը» Եզնիկի հայերէն մէկ աղբիւրը չէ, այլ, ընդհակառակն, քաղուած է Եզնիկի նշուած հատուածներից. այսպիսով միացանք ականաւոր մի քանի բանասէրների կարծիքին: Լ. Սաչիկեանը կրթոտ արտայայտութիւններով հակառակուելով մեզ՝ իր տեսակէտը կրկնեց «Օտարալեզու հայ գրականութիւնը չորրորդ դարում» յօդուածի վերջին մասում (ՊՀ, 1973, 3, էջ 27-51, յատկապէս էջ 44-50), յամենայն դէպս այդ միջնադարեան գրուածքի հայրութիւնն այս անգամ վերագրելով, ինչպէս Ադոնցը, Գրիգոր Լուսաւորչին: Մենք հաստատ մնալով մեր տեսակէտին՝ պատասխանեցինք «Դարձեալ «Հարցումն եւ պատասխանիք» գրուածքի մասին» յօդուածով («Բագին», Բեյրութ, 1980, 3, 60-66):

2. «Յանախապատում»-ն իբր Եզնիկի աղբիւր. եւրոպացի հայագետներ կարծել են, թէ «Գանի մը տեղ կան հետքեր Ս. Գր. Լուսաւորչի վերագրուած Յանախապատում գրքէն, որ ըստ Ֆէտտէրի՝ Ս. Մեսրոպայ († 441) երկասիրութիւնն ըլլալու է» (Միք. Շմիդ, Եզնիկի գերմ. թարգմանութեան ներածութիւն, տե՛ս Գ. Գալէմբարեան, Նորագոյն աղբերք, «Յաւելուածք», էջ 13): Սակայն հայ որոշ բանասէրների կարծիքով «Աներկբայ է՝ թէ Յանախապատումի՝ հեղինակն Եզնիկէն օգտուած ըլլայ» (Գ. Գալէմբարեան, Նորագոյն աղբերք, էջ 16, ուր տրուած է մի օրինակ): Ուստի սխալուած է Ա. Ա. Աբրահամեանը գրելով՝ «Իբրեւ աղբիւր Գ. Գալէմբարեանը ցոյց է տալիս [. . .] նաեւ «Յանախապատում ճառք»-ը» (Եզնիկ, 1970, էջ 24):

Ի տարբերութիւն միւս բանասէրների, Ն. Ն. Բիւզանդացու կարծիքով Յանախապատումը դասական շրջանի թարգմանութիւն է, բայց յետագայում խմբագրուել է (Կորիւն վարդապետ, էջ 54, ծան.). 1893 թ. սեպտեմբերի 20-ին Գ. Գալէմբարեանին գրել է. «Իմ կարծեաւ՝ Յանախապատումն փառից ունեցած ենք հնագոյն թարգմանութիւն, եւ զայս թուին հաստատել մանրիկ նոյնութիւնը Եզնիկայ եւ մեր արդի Յանախապատումին, իբր ի նաւաբեկութենէ զերծեալ նշխարք» (Վիեննայի Միսիթարեան դիւան):

Եզնիկի երկը վերլուծելիս Մ. Աբեղեանը ընդարձակ մէջբերումներով ցոյց է տուել Եզնիկի երկի եւ «Յանախապատում»-ի առնչութիւնները, սակայն առանց ասելու, թէ ո՞վ ումից է օգտուել (տե՛ս նրա Հայոց հիմն գրականութեան պատմութիւն, Երկեր, Գ, էջ 149 եւ շար.):

Մ. Աբեղեանից առաջ Ն. Ադոնցն էլ գրել էր. «Յանախապատումի մէջ ուշադրութեան արժանի են այն կէտերը, ուր շեշտուած է անձնիշխանութեան նշանակութիւնը, որով մօտեցում է եւ յաբուս Եզնիկին» («Բագմավէպ», 1926, էջ 72, ընդգծումը մերն է):

Ըստ Առ.՝ 99-ի՝ «Յանախապատում քառ» կոչուած ժողովածուն [. . .] գրուած է Եզնիկի Լեզուով եւ [. . .] Եզնիկը այդ գրքից օգտուել է անպայման, որովհետեւ բովանդակութեան ու լեզուածական կապը բացայայտ է դրանց միջեւ . . .»:

3. Բարսեղ Սարգիսեանի «Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն» աշխատութեան իր գրախօսութեան մէջ Յ. Տաշեանը գրել է. «Իննբորդ գլխոյ մէջ մտադրութիւն գրաւող չորս էջ համեմատութիւն մը կայ [Ագաթանգեղոսի] Վարդապետութեան եւ Եզնիկայ գրոց, որով կը ջանայ ցուցնել հեղինակն՝ այս երկու գրոց իրարու ունեցած կապակցութիւնը: Դժբախտաբար այս համեմատութեանց հազիւ մի քանին կրնան գուցէ խնդրոյ նիւթ ըլլալ. այլք անյաջող են: Գոնէ եւ ոչ միոյն վրայ կրնանք ապահովութեամբ ըսել՝ որ անհրաժեշտ իրարմէ առնուած են: Միւս կողմանէ Եզնիկայ անուամբ յիշուած կտորներուն մեծ մասն (եթէ ոչ ամբողջը) է Եզնիկայ մտաց գիւտ, այլ գիտենք այսօր ստոյգ՝ որ թարգմանութիւն է յոյն սուրբ հօր մը, որուն վրայ այժմ տեղւոյս է խօսիլ: Անոր համար աւելի ընդունելի է (թէեւ նաեւ այս ըստ իմիք) հեղինակին այն կարծիքը, թէ «եղած է հասարակաց եւ հնագոյն աղբիւր» մը այս գրոց, քան թէ ըսել՝ «վերջինն եղած է նախագաղափար Եզնիկայ»» (ՀԱ, 1891, էջ 249-250):

Ծանօթ. - 1. Եզնիկը մէջբերումներ ունի Ս. Գրքից, ոչ միշտ բառացի, կամ ակնարկում է այս ու այն տեղին. սակայն Աստուածաշունչը Եզնիկի աղբիւր չեն համարում այս բառի բուն իմաստով. այս սրբագան գիրքը բոլորինն էր համարուած:

2. Ն. Ն. Բիւզանդացին Եզնիկի իր կազմած բնագրի ծանօթագրութիւններում եւ իր տպագիր օրինակում նշել է որոշ բառերի առթիւ, թէ «Առնու յիսկեբերանի Մատթէի . . . յնայեայ Մեկնութեմէն» կամ «Բարսղի Վեցաւրեայէն» եւ այլն, սակայն այս թարգմանութիւնները չի կարելի Եզնիկի հայերէն աղբիւրներ համարել:

Թ. ԿԱՐԾԻՔՆԵՐ ԲՆԱԳՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՐԱԿԻ ՄԱՍԻՆ

Ձանց ենք անում յաջորդական գրչագրութիւնների ընթացքում Եզնիկի ձեռագրի գլխին եկած բազմաթիւ եւ բազմազան «փորձանքների» մասին արտայայտուած ընդհանուր մտքերը, ենթադրութիւնները, գրիչներին ուղղուած մեղադրանքները եւ այլն:

Գաղտնիք է, որ հայերէն հին ձեռագրերը աղաւաղուել են. հայերէն աւետարանի ձեռագրերի մասին Ա. Մեյէն գրել է. «Իրանք հնարաւորութիւն են տալիս նաեւ պատկերացնելու, թէ ի՞նչ աղաւաղումներ կարող են կրել եւ պէտք է կրած լինեն յետագայ ձեռագրերով միայն յայտնի դարձած բնագրերը, այսինքն դասական բոլոր բնագրերը, բացառութեամբ աւետարանի բնագրի» (Մե, էջ 454):

Ինչպէ՞ս Եզնիկի երկը կարող էր բացառութիւն կազմել համեմատաբար. մասամբ թերեւս նրանով, ասել են ոմանք, թէ իր բովանդակութեամբ հանրամատչելի չլինելու շնորհիւ աւելի քիչ է ընդօրինակուել, եւ դրանով իսկ բնագիրը նուազ է վնասուել: Այնուհանդերձ որոշ ուսումնասիրողներ նրանում նշել են հատուածների ետեւառաջութիւններ կամ տեղաշարժեր, թերիներ կամ պակասներ, բայց եւ յաւելումներ կամ ընդմիջարկութիւններ, աղաւաղուած, ուստի եւ սրբագրութիւն պահանջող տառեր, բառեր ու նախադասութիւններ: Հետեւաբար բանասէրների միջեւ բանավէճեր են ծագել այդ հարցերի շուրջը: Եղել են բնագիրը սրբագրելուն կողմնակիցներ, այլեւ պահպանողականներ: Ուրիշներ լուռ են մնացել այս կամ այն պատճառով: Ոմանք մերժել են որեւէ սրբագրութիւն այն պատճառաբանութեամբ, թէ ձեռագիրը միակն է, եւ առաջարկուած սրբագրութիւնը չի հիմնաւորուում ուրիշով: Եղել են նաեւ բանասէրներ, որոնց կարծիքով բնագիրը համեմատաբար լաւ է պահպանուել: Նպատակայարմար ենք համարում բնագրի կարգի, քանակի եւ որակի հարցեր նշել համառօտ ընդհանուր ակնարկով, քանի որ ամէն մի սրբագրութիւն իր տեղը գտնելու է մեր հրատարակութեան մէջ, տողատակում կամ ծանօթագրութիւնների մէջ:

ա) Ետեւառաջութիւնների, պակասների, ընդմիջարկութիւնների շուրջ կարծիքներ

Ինչպէս գիտենք, երկի ձեռագրերը, գոնէ զմիւռնեանը եւ այսօրուանը (որոնք նոյնը չեն) չեն ունեցել ներքին բաժանումներ ըստ ճառերի, գրքերի, գլուխների, որոնք առաջին եւ երկրորդ հրատարակիչների գործն են: Նկատելի է, որ շատ բանասէրներ մեծ կարեւորութիւն են տուել դրանց, ոմանք մինչեւ իսկ կարծելով, թէ դրանք ձեռագրային են: Արդ, պարզում է, այդ հատուածաւորումը մեծապէս խանգարել է գրեթէ բոլորին, նոյնիսկ երկն ուսումնասիրողներին, ճիշտ եւ իր ամբողջութեան մէջ ու իր կառուցուածքով ըմբռնելու այդ գիրքը: Այս հարցում խիստ քննադատական, բայց իրաւացի ձայն բարձրացնողը եղել է Փրանսիացի հայագետ Լ. Մարիէսը իր *De Deo* աշխատութեան մէջ, ուր եւ առաւել լաւ իր քննական հրատարակութեան մէջ վերականգնել է երկի յատակագիծը:

1. Ոմանց, ինչպէս Եզնիկի երկի մասին առաջին արտայայտուողներից էրնեստ Մորդանին (E. Mordant) թուացել է, թէ երկի «չորս մասերը [կամ գրքերը] որոշակի եւ իրար միջեւ կապ չունեցող գրուածքներ են» (Ezriig, 1868, էջ 13):

2. Նորայր Ն. Բիւզանդացին իր Գննաւեր-ի 2-րդ պրակում, էջ 3, գրել է. «Պիտի ցուցանեմ թէ խառնակութիւնք կան ի գիրս Եզնիկայ ի յետեւյառաջութեանէ թերթից գրչագրաց», սակայն, ինչպէս յայտնի է, նա չկարողացաւ շարունակել իր հանդէսը, որովհետեւ չէր վաճառուում, եւ նա նիւթապէս տուտում էր: 1893 թ. սեպտեմբերի 20-ին նա գրել է Գ. Գալէմքեարեանին. «Նկատմամբ [Եզնիկի] բնագրին ներքին պայմանին եւ հանգամանաց, շատ աղաւաղ եւ խառնափնդոր կը գրտնեմ զմատենիկն Եզնիկայ: Ի բազում տեղիս թուղթք անկեալ են, եւ հրատարակիչքն որով, ուստի, բայց բառերով կը կապեն այնպիսի հատուածներ՝ որ բնաւ կապ չունին: Կան եւ մեծամեծ յետեւյառաջութիւնք, ինչպէս վաղ ըսի ի Գննաւերի: Թող զհարիւրաւոր վրիպակ, անիմաստ, անքերական ընթերցուածսն» (Վիեննայի Միլիթարեան դիւան): Պիտի ասենք, որ նրա նշած կապակցող բառերը երկի յայտնաբերուած ձեռագրում են: Յայտնի է, թէ Նորայրն իրականացրել էր արդեօք խառնակութիւնները կարգաւորելու իր մտադրութիւնը, յամենայն դէպս փորձել է, եւ այս փորձերը (կամ նրանց մի մասը) մնացել են նրա դիւանում (Թղթ. Ց.օ. 25:1-66, Վաւ. 25:4)՝ «Կարգադրութիւնք երեսաց քառիցն Ընդդէմ Աղանդոց Եզնիկայ Կողբացոյ» վերնագրուած, 8 էջ սեւագրութիւն, եւ 11 էջ, ուր նշել է տալի զանազան էջերում քննարկուած հարցերը եւ երբեմն էլ կցկցել է այն մասերը, որոնք նրա կարծիքով պէտք է իրար շարունակութիւնը կազմէին: Սակայն պահպանուած կիսատ սեւագիր եւ մաքրագիր բնագիրը (նրա իսկ ձեռքով) ցոյց է տալիս, որ նա իր կատարած կարգաւորութիւնը չի մտցրել բնագրի մէջ, եւ հարցական է, թէ նա վերջնականապէս իրականացրել է իր այդ մտադրութիւնը, թէ՞ դժուարութիւնը նրան թելադրել է բնագրի ընթացքին ձեռք չտալ. հաւանաբար վերջինն է ճիշտ, քանի որ դասաւորման իր սեւագրութեան մէջ նա հարցականով է թողել շատ կէտեր: Նրա կատարել փորձած աշխատանքի մասին գաղափար տալու համար այստեղ հրատարակում ենք «Փորձ կարգադրութեան 5-241 երեսաց Եզնիկայ» վերնագրած էջերը նոյնութեամբ:

Նորայր Ն. Բիւզանդացու «Փորձ կարգադրութեան 5-241 երեսաց Եզնիկայ» [Դիւան, Թղթ. Ց.օ. 25:1-66, Վաւ. 25:4]

«ա. Եւ որ առողջ միտս ունին», երես 11, տողք 7-8 մինչեւ «քանզի էական եւ անշարժական է», երես 12, տողք 4-5, փոխադրելի է (թուի) յերես 208, գլինի [վերեւում՝ յետ] բառիցն «որով եւ արարածքն իսկ իւրաքանչիւր շարժմամբք եւ փոփոխմամբք զԱրարչէն քարոզեն», տողք 21-24:

- «բ. Նոյնպէս եւ ի բանջարս է ինչ», երես 66, տողք 19-20, մինչեւ «թէ չիք ինչ որ բնութեամբ չար է (իցէ ?)», երես 68, տողք 2-3, փոխադրելի է յերես 11, յետ բանիցն «որ զապակահիւսն միմեանց՝ խառնուածովք արար աւգտակարս իրերաց», տողք 5-7. (Համեմատե՛ա «Չիք ինչ չար որ բնութեամբ չար իցէ», 10, եւ «Չիք ինչ որ բնութեամբ չար (ից)է», 68:
- «գ. Եւ այս յայտ անտի է, զի», երես 88, տող 11, մինչեւ «այլ զի յափշտակեացէ եւ ցրուեսցէ», երես 89, տողք 2-3, փոխադրելի է յերես 172, յետ բանիցն «թէ իւր զնա այնպէս ստեղծեալ էր յորովայնէ», տողք 18-19:
- «դ. Այլ մեք ըստ Գրոց Սրբոց՝ զՀրեշտակս», երես 107, տողք 25-26, մինչեւ «եւ փրկութեան սատարք մեզ լինին», երես 108, տողք 22-23, փոխադրելի է յերես 211, յետ բանիցն «ուստի ոմանք եւ Հրեշտակս վարիչս եղին նոցա», տողք 22-23:
- «ե. Եւ ոչ արգասիս Նիւթ(ոյ), յորմէ Աստուած ընտրեաց զբարին ի մի թեր, զչարն մըրախառն ի միւս կողմն, ուստի ջանայ մըրախառն(ն) զյստակն պղտորել», երես 27, տողք 13-17, փոխադրելի թուի յերես 36, յետ բանիցն «այլ զչարսն ոչ անձնաւորս կարծել, այլ կամածինս», տողք 24-26. (Գալէմբ. այլազգ կարծէ):
- «գ. Եւ եթէ կացեալ միտ զնիցես, անդէն անդ(ր)էն մթացեալ անաւթն լուսաւորի առ սակաւ, մինչեւ ամենեւին յարդարի», երես 218, տողք 4-8, փոխադրելի է յերես 201, յետ բանիցն «եւ որչափ մերձենայ, այնչափ առ սկսաւ սակաւ աճէ ի նա լոյսն», տողք 9-11. (Համեմատե՛ա ընդ «մինչեւ ամենեւին նուազէ», «մինչեւ ամենեւին յարդարի»):
- «է. Եւ պատերազմաց սկիզբն», երես 81, տող 11, մինչեւ ի վերջին տող երեսին, յայտ է թէ հատածը չէ յիւրում տեղւոյ, այլ թէ ո՛ւր փոխադրելի իցէ՝ չգիտեմ:
- «ը. Հատածն «եւ ձիւն եւ սառն եւ կարկուտ» յերես 195, տող 14, մինչեւ «յիրաւի կոչին», երես 196, տողք 1-2, թուի մասն ճառին Ընդդէմ Բեշին Պարսից, այնու զի ասէ «թէ յայլմէ արարչէ էին», եւ «զվիշապս եւ զգազանս եւ զխաւար եւ զփայլատակունս, գոք ի չարէ դնեն». (Համեմատե՛ա ընդ 69-70). կարգադրիչ քայքայեալ Ձեռագրին Եղնըկայ թուի վասն այնորիկ կցեալ զայս հատուած ընդ նախորդին՝ զի եւ յայսմ հատուածի ասի «ոչ կոչէր զնոսա Հոգին ի փառատրութիւն». (կամ թերեւս ամբողջ Ի՛նչ հատածն եւ մասն Ի՛նչ հատածին պատշաճի ճառին Ընդդէմ քեշին Պարսից):
- «թ. Լուսին, ասեն, քան զարեգակն երեսուն աւր» եւն, երես 199, եւ հերքէ զայդ յերես 187 (!):
- «ժ. Լուսին, ասեն» եւն, 199. (բնաւ չպատշաճի ասելն յերես 201, «Ջայս ամենայն ասեն հայթայթանաւք, զի զերկինս եւ զուսաւորսն կենդանիս եւ աստուածս կարծեցուցեն»:
- «ժա. Այլ մեք զԳրոց Սրբոց զհետ երթիցուք», երես 211, տողք 23-24, մինչեւ «եւ ոչ այլ ուրուք», երես 213, տողք 5-6, (կամ «եւ ոչ այլոյ ուրուք», անդ, տողք 8-9), բնաւ չպատշաճի նախաճառելոցն՝ ուր բանք են զփրկիստիպից Յունաց, եւ ի փրկիստիպիցն ոստնու ի Սատանայ. («ձիւն եւ կարկուտ» յիշին յերես 195):

[Յաջորդող համարակալումը մերն է:]

- [ժբ.] «Բան զայս երիս ջոկս», 97. այդ թուի զնելի յառաջ քան «եւ երեքեան ջոկքս այսորիկ» որ յերես 91:
- [ժգ.] «Եւ ոչ ընդ ծով, որպէս ասենն», 189. այդպիսի ինչ չասաց Եղնիկ ի դիմաց փրկիստիպից. որով թերի թուի «ի ծովէ ելանէ», 190:
- [ժդ.] Կարելի է թէ «Յորժամ զԱնեբեւութէն» եւն, երես 5, փոխադրելի է յետ 241 երեսին, զի ասէ. «Չի յորժամ զնորա մեծարոյ կարիսն գձձեսցուք, եւ հանցուք զնա յաչաց իւրոցն խաբեցելոց, ապա ցուցցուք թէ ո՛վ Աստուած է, եւ զի՛նչ նորա արարածք», 241. երաշխաւորէ այսմիկ յերես 14, «զերկնոց մեծացն անաւթոց». իսկ արդ յերես 194 մեկնի թէ զի՛նչ են երկու մեծ անթթքդ, այսինքն երկինք եւ երկիր. - դարձեալ յերես 6 ըսելն՝ «Եւ արդ՝ քանզի մի էութիւնն» կը ցուցնէ թէ յառաջագոյն խօսած է այդ մի էութեան վրայ,

- ապա թէ ոչ՝ չկարէր ըսել եւ արդ. - նոյնպէս յերես 12, «Եւ զի մի էութիւն մշտնջենաւորական է եւ պատմառ ամենեցուն լինելոյ» թուի թէ գայ յետ 220 երեսի, «մի միութիւն՝ պատմառ ամենայնի»:
- [ժե.] «Երես 96 տեղափոխելի թուի անդը ուր խօսի զարեգականէ եւ զայլ լուսաւորաց. «եւ երկնաւորաց՝ արեգական . . . եւ զի զնոցանէ (զլուսաւորաց) ասէ, եւ ոչ զՀրեշտակաց»:
[Սրանից յետոյ գրել է Գր. Գալէմբարեանի հրատարակած մասերի վերաբերեալ իր դիտողութիւնը, որ մեր աշխատանքի այլ մասում է:]
- [ժզ.] «Այս ամենայն ասացաւ», 96-97. թուի տեղափոխելի անդ ուր ճառէ զարեգականէ եւ զատեղաց, պատշաճ թերեւս 201, ուր ասէ. «Ջայս ամենայն ասեն հայթայթանաւք, զի զերկինս եւ զլուսաւորսն՝ կենդանիս եւ աստուածս կարծեցուցեն»:
- [ժէ.] «Ուսնակութիւն կայ յերես 179. թերի թուի:
- [ժը.] «Թերի թուի յերես 217, զի բոլորովին անիմաստ է ասելն «թէ ի կալ մի փոքրիկ ամփոփիցի եւ կթիցի անստինն»:
- [ժթ.] «Յասացելոյն յերես 111 այնպէս իմն թուի զի Եղնիկ գրեալ է
ա. Ընդդէմ իմաստնոցն Յունաց եւ Հիւրեայ. այլ յիշին «մոզքն» ի 222, 235, ուր եւ ինքնամանն.
բ. Ընդդէմ Պարսից.
գ. Ընդդէմ Մարկիոնի:
- [ի.] «Թերի թուի եւ Մարկիոնի մասնն զի չիք բանն զոր յիշէ յերես 196 [այսինքն՝ «Եւ ոչ որպէս Մարկիոնն դանդաչէ՝ թէ արդարոյն արարածոց պարտ է աւտարին բարույ պաշտաւն մատուցանել վասն բարեբարութեան. զորոյ անհամութիւնն ի դէպ ժամանակի յանդիմանացուք»]:
- [իա.] «Տեղափոխելի թուի 274, «Այլ յոյժ մոլորեալ են», Մարկիոն, 243-252, մինչեւ «որք յամուսնութենէ դնեն զաստուածսն իւրեանց»:
- [իբ.] «Յերես 279 զկնի բանին «եւ նոքա մոլին թէ հակառակ ուսուցանէ նոցա Յեսուն», թուի կցելի 252-254 «Արդ ցուցցեն, ո՞ր հոգի . . . ընդ վայրս զբանսն աճէ»:
- [իգ.] «Տեղափոխելի թուի «եւ դարձեալ՝ թէ ձեռնհաս ինչ ոք էր» 273:
- [իդ.] «Տեղափոխելի թուի «Այլ այնչափ, ասեն», 275-276, յերես 290 յետ բանին «մի տուիչ է հնոյն եւ նորոյս»:
- [իե.] «Տեղափոխելի թուի 290, «Այլ մեք, ասեն»:
- [իզ.] «Տեղափոխելի թուի 253 «Այլ Պաւղոս», յետ 259 երեսին, ուր գրէ գերբորդ երկինս»:
«Եղնըկայ Ընդդէմ Արամեոց յորինեալ ի թուականին Բրիտտոսի 420-30 (Մատենադարան Հայկական Քարգմանութեանց նախնեաց, 208» [Գար. Ջարբհանալեան, Վեներիկ, 1889], որ կապ չուի նախորդներին հետ:

3. Երկի 1-ին հրատարակութեան բաժանումները թերեւս ամենից շատ խանգարել են Յ. Թորոսեանին: Եղնիկի եւ նրա գործի արժանիքները ջերմօրէն դրուատելուց յետոյ (իր «Եղնիկ եւ իւր երկասիրութիւնն» յղուածում, 1889 թ.) նա գրել է. «Կը պակսի ի նմա մի այնպիսի կատարելութիւն, որ յատկանիչ է ամենայն մեծամեծ հանճարներու, այսինքն է, ո՞՞ կամ կարգ խօսից եւ գրութեան [. . .] կապ մի իմաստից». իբր կապ չկայ «ոչ եթէ գլխոց, այլ եւ պարբերութեանց, եւ բազում ուրեք եւս՝ մի եւ նոյն պարբերութեան մէջ գտնուած իմաստից» («Բազմապէս», 1889, էջ 19): Նա մատնացոյց է արել հատուածներ, որոնք «ամենեւին անյարմար են այնտեղ», որտեղ են, կամ կրկնութիւններ են, եւ նման բազում թերութիւններ. «Մեր ոսկեղարեան ինքնագիր մատենագրաց մէջ՝ չկայ մէկն որ այնքան փոփոխութիւն կրած ըլլայ (գոնեա ըստ այլ այլութեան կարգին), ինչպէս մեր ոսկեթօսիկն Եղնիկ: Վասնզի ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ մեկնել այն ամէն ետեւառաջութիւնք եւ ընդհատմունք իմաստից՝ որք յաճախ կը պատահին ընթերցողին աչաց, եթէ չընենք այսպիսի օրինաւոր ենթադրութիւն մի (ենթադրութիւն՝ զոր ստիպեալ ենք ընել գրեթէ մեր բոլոր

ձեռագրաց նկատմամբ), թէ օտարաց ձեռք կամ օրինակողք խանգարած ըլլան այն հոյակապ շէնքը, որոյ երկու գեղեցիկ ձիրքերն էին՝ ճոխութիւն իմաստից եւ հմտութեանց, որ յետ այնքան այլալուծութեանց ցարդ իսկ անաղօտ կը փայլէ ի նմա, եւ պայծառ կարգ մը՝ որ գրեթէ նուազեր է» (Անդ, էջ 199-200): Իր ընդհանուր կերպով ասածները հաստատութեան համար նա նշել է տեղեր, որոնք, նրա կարծիքով, համապատասխանում են իր խորհրդածութիւններին. թուում է, թէ այսինչ հատուածը «բոլորովին յօրինակողաց ներմուծեալ լինի եւ կամ անդր փոխադրեալ ուրիշ տեղէ մի» կամ «օրինակողի ուրուք արդիւնք է» (էջ 201) եւ այլն: Նրանից առաջ դարձեալ է. Մորդանը գրել էր, թէ «Ըստ երեւոյթին այս գիրքը մեզ չի հասել այնպէս, ինչպէս դուրս էր եկել Եգիպտոսի գրչից» (Ez-nig, էջ 13):

4. Եգիպտոսի աղբիւրների մասին խօսելիս տեսանք, որ Յ. Թորոսեանը յայտնաբերել է սրանցից մի քանիսը. սակայն ըստ Գ. Գալէմբարեանի, «Հ. Թորոսեանի դիտել տուած Եգիպտոսի անկապակցութիւնը, շատ տեղ աննշանակ խօսիլը եւ հակառակ եզրակացութեանց հասնիլը» (էջ 19) առանց ընդօրինակողներու վրայ - ըստ սովորութեան - մեղքը բառնալու, շատ պարզ կը լուծուէր, եթէ կարելի երեւար իրեն ենթադրել՝ որ Եգիպտոսի այլեւայլ աղբիւրներ ունի իւր գործոց, գործք մերթ անարատ պահելով, մերթ համառօտելով եւ փոփոխելով յիշեալ կերպարանաց բերած է տեղ տեղ» (Նորագոյն աղբերք, էջ 4): Պատճառներից մէկը գուցէ այս է: Մեթոդիստի [«Վասն անձնիշխանութեան»] գրուածքն իբրեւ Եգիպտոսի (1826 թ.) էջ 19-58 հատուածի աղբիւր յայտնաբերելուց եւ զուգադրելուց յետոյ Գ. Գալէմբարեանը (1893 թ.) գրել է. «Համեմատութիւնս կը ցուցնէ՝ որ Եգիպտոսի գործոյն ձեռագիրն այնչափ աղաւաղեալ չէ, որչափ կը կարծուէր առ հասարակ եւ ինչպէս մեր ուրիշ մատենագրաց ձեռագրաց վրայ կ'երեւայ: Քանի մը նախդիրներ, քանի մը բառեր ինկած են ձեռագրէն, որոնք կրնան նաեւ տպագրութեան միջոցին յառաջ եկած ըլլալ: Նտեւատալութիւն տեղ մը միայն կ'երեւայ, որ անշուշտ ընդօրինակողի մը կը վերաբերի: Առ հասարակ բնագիրը գրեթէ անարատ մնացած է. վասն զի նիւթն այնպիսի է՝ որ սակաւաթիւ ընթերցող, հետեւաբար եւ ընդօրինակող ունեցած է» (պէտք է աւելացնել)՝ միջնադարում (Նորագոյն աղբերք, էջ 86): Սակայն յիշենք, որ Եգիպտոսի երկն ունի 298 էջ. ի՞նչ ասել 59-ից յետոյ եկող էջերի անաղարտութեան մասին:

5. Յ. Տաշեանը խօսելով այն մասին, թէ Եգիպտոսի հատուածներ թարգմանելով Եպիփանի «Ընդդէմ Զ հերձուածոց» (Κατὰ αἰρέσεων) գործից՝ նոյնութեամբ գրել է իր գրքի մէջ, կասկածել է, թէ այդ հատուածներից մի քանիսը դուրս են ընկել երկից. «Եւ կան նշաններ՝ թէ մասեր ալ կրնան գրչաց անհոգութեամբ դուրս ինկած ըլլալ, այսպէս մանաւանդ սկիզբը [. . .]: Այնպիսի մասեր որոնք այժմու Եգիպտոսի մէջ դուրս ինկած են՝ ի հարկէ մեծաւ մասամբ գրչաց անմտադրութեան եւ կամ երկարժամանակեայ հնութեան պատճառաւ» եւ այլն (Մատեն. մանր ուսումնասիրութիւնք, Ա-2, էջ 91-92): Ն. տ., էջ 99, կարծիք է յայտնուած, թէ համեմատութիւնը ցոյց է տալիս «միւս կողմանէ նաեւ Եգիպտոսի այժմու բնագրին կրած աղաւաղութիւնը»:

6. Նորագիւտ ձեռագրի եւ 1863-ի տպագրի բնագրերը բաղդատելուց յետոյ Հր. Անառեանը, ինչպէս տեսանք, գրել է, թէ ձեռագրում «Տեղ տեղ կան պակասաւոր մասեր, որոնք հրատարակիչներն իրենց կողմէ լրացուցեր են» (Քննութիւն, էջ 70, 1904 թ.). էջ 66-ում ասել է, թէ «Սկսեալ էջ 279, տող 13 «Յետո այնչափ առ աստուածս ունի» միջնէ էջ 281, տող 1-2 «քանզի [. . .] ասելի է թէ» չիք», իսկ էջ 70-ում «էջ 280, տող 20 մինչեւ 281, տող 2» ներմուծուած հատուած կայ: Իրականութիւնն այն է, ինչպէս ժամանակին ցոյց է տուել Ե. Փէշիկեանը («Բագմավէպ», 1928, էջ 294), որ երկու հատուածներն էլ կան Գ. Տէր-Յովհաննիսեանի սրբագրած եւ Ա. Բագրատունու իբրեւ ձեռագիր օգտագործած տպագրում, ուստի եւ եղել են զմիւսների ձեռագրում, եթէ երբեք չի թերացել սրբագրողը, որը նոյն տեղում աւելացրել է 1-ին տպագրութեան մէջ մոռացուած մի երկու տող: Ուստի գուր է Հր. Անառեանի այդ շտապ դիտողութիւնը հրատարակիչների հասցէին: Նա Քննութիւն Զ գլուխը վերնագրել է «Եգիպտոսի կորսուած մասերը» (էջ 96-104): Ընդհանուր դիտողութիւններից յետոյ քննութեան է առել 7 հատուած, որ «պէտք է նկատել իբր փոքրագոյն թիւը (minimum), որոնցմէ աւելին գտնել դիւրին, բայց հատուածային բնակողութեան պատճառաւ իբր թերի հաստատելը դժուար է» (էջ 97): Ասացինք, որ Քննութիւն էջ 2-ում նա

յիշատակել է նաեւ, թէ 1097 ձեռագրում «էջ 300 եւ 301, ինչպէս եւ էջ 304 եւ 305 իրար փոխանակած են»: Նրա նշած պակասները իրենց տեղերում կը յիշատակուեն մեր հրատարակութեան մէջ:

7. Գ. Նահապետեանը 1908 թ. «Բագմավէպ»-ում (էջ 264-267) հրատարակեց Եգիպտոսի սրբագրութիւններ՝ «Եգիպտոսի վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոցն հեթանոսաց» («Առ Բագմէն Վ.» [Կիւլէսէրեան], որը 1907 թ. ՀԱ-ում հրատարակել էր, էջ 310-316, «Եգիպտոսի մանր դիտողութիւններ» (կամ սրբագրութիւններ): Յ. Թորոսեանից յետոյ Գ. Նահապետեանը նրանցից է, որոնց խանգարել է երկի բաժանումն ըստ գրքերի եւ գլուխների: Նրա կարծիքով՝ «Եգիպտոսի գիրքն ամբողջապէս հասած չէ. իսկ ներկայ խմբագրութիւնը անյաջող կերպով բաժնուեր է Ա. Բ. Գ. [Գ] գրքերու. որովհետեւ այդ գրոց բովանդակութիւնը կը պարունակէ իրարմէ անկախ նիւթեր, զորս մի եւ նոյն խորագրի տակ չէ կարելի դասաւորել» (անդ, էջ 264): Այնուհանդերձ նա առաջարկել է «Միտ դնելով բազմազան նիւթերուն՝ որոնց վրայ կը խօսի [Եգիպտոսի], պէտք է այլ եւ այլ մանր ճառերու բաժանել եւ ցրուած հատուածները ի մի դասաւորել ըստ իմաստին» (ն. տ.), որովհետեւ, իբր, հեղինակն իսկ իր գրուածքը բաժանած է եղել ճառերի, քանի որ նա օգտագործել է «ի խնդիր փառիցս» (էջ 22) եւ «յառաջին փառսն» (էջ 144) արտայայտութիւնները. ընթերցողը պիտի նկատի, որ հեղինակը մի նիւթի մասին ճառելը չաւարտած՝ ուրիշի է անցել: Յօդուածագիրը նոյնիսկ ասել է, թէ «սկզբնագրին մէջ առաջին ճառը [ինչպէս] լինելու էր» (ն. տ.): Ըստ նրա, «Գ. գիրքը պակաս է. նոյն իսկ պէտք է կանխել քան զԱ. գիրքը: Որովհետեւ» եւ այլն: Սա Հր. Անառեանի նշած Ե-րդ պակասն է (Քննութիւն, էջ 103). Եգիպտոսի խոստանում է «գոռութեան բանիւք» գրել Պլատոնի դէմ, բայց այդ «գիրքը» չկայ ձեռագրում. այս մասին քիչ յետոյ՝ Լ. Մարիէսի կարծիքների մասին խօսելիս:

8. Իր De Deo աշխատութեան մէջ (1924 թ., էջ 129-193) Մարիէսը նկատի առնելով նորագիւտ ձեռագիրը՝ ըստ Հր. Անառեանի եւ Գ. Տէր-Մկրտչեանի Քննութիւն քննարկել է Եգիպտոսի երկի բնագրի կարգի եւ քանակի վերաբերեալ արտայայտուած կարծիքներից մի քանիսը, պատասխանել է եղած առարկութիւններին, ուսումնասիրել առաջարկուած սրբագրութիւնները եւ իր կարգին արել սրբագրութիւններ:

ա) Լ. Մարիէսի պատասխանը Գ. Գալէմբարեանի եւ Հր. Անառեանի առաջարկած նտեւատալութիւններին

Գ. Գալէմբարեանն իր առաջարկած տեղափոխութիւնը (տե՛ս վերեւում) հիմնաւորել է Մեթոդիստի եւ Եգիպտոսի համապատասխան հատուածների համեմատութեամբ: Նոյնը աւելի խորը ուսումնասիրելով՝ Լ. Մարիէսը եկել է այն եզրակացութեան, որ եթէ այս քննադատի պէս դատելու լինենք, ապա ոչ թէ մէկ, այլ մի քանի հատուածների տեղափոխութիւններ անհրաժեշտ կը լինէին. «Ամենախելօքն է, - եզրակացրել է նա, - ոչ մի տեղափոխութիւն չկատարել եւ յարգել ձեռագրի կարգը, որ ներկայացնում է Եգիպտոսի ցանկացած կարգը» (De Deo, էջ 134): Ապա Լ. Մարիէսը աշխատել է պարզել Եգիպտոսի անձնական տրամաբանութեան պատճառները, որոնց հիման վրայ Մեթոդիստից (կամ Արամանտիոսից) օգտուելիս նպատակադրմար է սեպել շեղուել նրա կարգից:

Հր. Անառեանի ենթադրութիւնները՝ ձեռագրի բնագրում, իբր, պակասող հատուածների մասին, բխել են, ըստ Լ. Մարիէսի, այն բանից, որ նա երկը նկատի չի առել իր ամբողջութեան մէջ, առանց գրքերի եւ գլուխների բաժանումների: Նրա դիտողութիւնները քննելուց յետոյ Գ. Գալէմբարեանի եւ նրան հետեւողներին իբրեւ պատասխան Մարիէսը գրել է. «Ուստի հայերէն բնագրում, այսինքն նորագիւտ ձեռագրում ոչ մի տեղափոխութիւն պէտք չէ կատարել» (De Deo, էջ 144): Պէտք չէ մոռանալ, ասել է նա, որ Եգիպտոսի իր երկի համար ունեցել է իւրաքայտուկ, կապակցուած եւ տրամաբանական կառուցուածք, սակայն դրա բաղկացուցիչ մասերն արուեստով իրար միաձուլուելու եւ գօզելու միջոցով չէր տարել. տրամաբանօրէն դրանք իրենց տեղերում են. թէեւ դրանց կապը թոյլ է, սակայն դա պատճառ չէ, որպէսզի դրանք տեղափոխենք:

բ) Լ. Մարիէսի կարծիքը բնագրի պակաս մասերի վերաբերեալ

Մեծագոյն վէճը ծագել է այսպէս կոչուած «երրորդ գրքի» պակասի շուրջ:

Ըստ է. Մորդանի (Mordant)՝ «Այս գիրքը հաւանաբար մեզ չի հասել այնպէս, ինչպէս դուրս է եկել Եգիպտոսի գրչից. երրորդ մասի վերջաւորութիւնը, ուր վերջինս յայտարարում է, թէ «գոռութեան բանիւք» Տերքելու է Պղատոնին, մեզ անաւարտ է թուում» (էջ 13): Մարիէսն այս բանասէրին ուշադրութիւն չի դարձրել, որովհետեւ նա հայերէն չի իմացել եւ օգտագործել է Ֆլորիւպալի սխալ լաշատ ֆրանսերէն թարգմանութիւնը: Դա արհամարհանքի հիմնաւոր պատճառ էլն, եւ տեսանք վերելում, որ պակասը նշել էր նաեւ Գ. Նահապետեանը: Նոյնը աւելի յստակօրէն նշել է նաեւ Հր. Աճառեանը (Քննութիւն, էջ 103). «Բոլորովին պարզ է թէ հոս ասագին թերի մաս մը ունինք, եւ ինչպէս կը կարծեմ, թերեւս ամբողջ գիրք մը, որուն միայն վերջին տողերն են սոյն վեց տողերը»: Նոյնը կրկնել է Բ. Կիւլէսէրեանը (ՀԱ, 1907, 315). «Իրտած ենք նաեւ որ Եգիպտոսի Գ-րդ գիրքը պակաս է. այսինքն՝ Պղատոնի մասին բաներ մը կ'առաջադրէ գրել Եգիպտոսի եւ անմիջապէս կ'ընդհատի [. . .]: Թերին կամ ընդհատը ստոյգ է, բայց ատոր չափը ճշգրիտ չէ»: Ըստ Լ. Մարիէսի՝ Հր. Աճառեանի եւ միւսների այս ենթադրութիւնը, որ իրեն համար անընդունելի է, բխել է Եգիպտոսի բնագրի սխալ ըմբռնումից. Շմիդն ու Գ. Գալէմբեարեանը գերմ. թարգմանել են Հր. Աճառեանի մեկնաբանութեամբ, բայց պակասող «գրքի» մասին ոչինչ չեն ասել ծանօթագրութեան մէջ: Մարիէսը ֆրանսերէնի է թարգմանել, ծանօթագրել ու մեկնաբանել այդ հատուածը կամ էլ 241-ը հետեւեալ եզրակացութեամբ. «Կասկածելի ոչ մի պակաս չկայ այնտեղ» (De Deo, էջ 150): Կարեւորն այն է այդ էջում, թէ Եգիպտոսի ղ'ւմ է նկատի ունեցել Մարիէսի կարծիքով՝ այո՛, թէ՞ Պղատոնին (Հր. Աճառեանի եւ միւսների կարծիքով՝ այո՛): Այդ տողերին անմիջապէս յաջորդում է Մարիէսի քննադատութեան «գիրքը»: Մարիէսի De Deo ուսումնասիրութեան գրախօսութեան մէջ («Բազմավեպ», 1926, էջ 170-171) Հր. Աճառեանը, իր եւ Լ. Մարիէսի բացատրութիւնները Մ. Աբեղեանին, Յ. Մանանդեանին, Ն. Ակիմեանին, Ս. Շահաղիզին, Ա. Սաչատրեանին եւ Թ. Աւագաբեկեանին յայտնելուց եւ նրանցից իր կարծիքի հաստատումը լսելուց յետոյ, գրել է. «Հետեւաբար հիմա ալ կը պնդեմ՝ որ Եգիպտոսի գրած է ամբողջ գիրք մը Պղատոնի դէմ, որմէ կը մնան միայն վերջին վեց տողերը» (ն. տ., էջ 171): Լ. Մարիէսն առաւել եւս անդրդուելի մնաց եւ իր տեսակէտն ապացուցելու համար 1928-ին հրատարակեց իր Etude աշխատութիւնը, 132 էջ (տե՛ս մեր Մատենագիտութեան մէջ)¹⁴⁴:

9. Մարտիրոս Մինասեանը 1974 թ. մի յօդուածում¹⁴⁵ քերականական եւ իմաստային քննութեան ենթարկելով բանավէճի առարկայ էլ 241-ը, ինչպէս նաեւ Հր. Աճառեանի եւ Մարիէսի փաստարկումները, այն եզրակացութեան հանգեց, թէ այնտեղ, ինչպէս կարծում էր Հր. Աճառեանը, Եգիպտոսի Պղատոնին է նկատի ունեցել, եւ ոչ թէ Մարիէսին. իսկ սրա դէմ մի ամբողջ «գիրք» գրած կամ չգրած լինելու հարցում միացաւ Ե. Տէր-Մինասեանի հետեւեալ կարծիքին. «Այս մասում, ինչպէս երեւում է Եգիպտոսի խօսքերից, նա գրել է կամ մտադրութիւն է ունեցել գրելու, յատկապէս նաեւ Պղատոնի դէմ — «Եւ արդ ընդ նմա (ընդ Պղատոնի) իսկ մարտիցուք գոռութեան բանիւք», բայց այժմեան Եգիպտոսում այդ հատուածը բացակայում է, այսինքն՝ հերքումն սկսուած է, բայց մի երկու նախադասութիւնից յետոյ կտրուում է» (Պատմա-բանասիրական հետազոտութիւններ, էջ 300-301): Նկատենք, որ ի տարբերութիւն այս բանասէրի, Հր. Աճառեանի կարծիքով Եգիպտոսի մի

¹⁴⁴ Ժամանակին մեր ձեռքն անցաւ Հր. Աճառեանի «Քննութիւն» Լ. Մարիէսի օրինակը: Հր. Աճառեանի նկատած վեց պակաս տեղերի պատճառաբանութեան վերաբերեալ նա լուսանցքներում գրել է տողեր, ուր կտրականապէս մերժել է հաւատ ընծայել: Իսկ 7-րդ դիտողութեան մասին, որ վերաբերում է բնագրում մի պակասող տեղի, նա նշել է. «Լուրջ է: Տեսնել, թէ հրատարակիչները, որոնք ըստ երեւոյթի տեղափոխութիւն են կատարել, ճիշտ են վարուել թէ սխալ, որովհետեւ ոչինչ չեն ասել այդ մասին: Հրատարակիչներն են ամեն ինչ արել: էջ 279, տ. 13-ում պակաս կայ»: Լ. Մարիէսն անգիտանում էր, որ Ա. Բագրատունին¹⁴⁵ այդպիսի բան չի արել:

Չափազանցութիւն է Ն. Արոնցի հետեւեալ դիտողութիւնը. «Հայ բանասէրների կողմից, գլխաւորապէս Նորայրի եւ Աճառեանի, յայտնած քանի մի դիտողութիւններ, որոնք նկատում էին բացեր գտնելու Եգիպտոսի գործի մէջ, Լ. Մարիէսի խոհուն մտքի առաջ ընկրկում են եւ չբանում» («Բազմավեպ», 1925, էջ 196):

¹⁴⁵ M. Minassian, A propos d'un passage d'Eznik: P. 241, Le Museon, t. 86, fsc. 3-4, 341-363.

քանի տողերը Պղատոնի դէմ իբր գրուած գրքի վերջին տողերն են: Մ. Մինասեանն այժմ համոզուած է, որ Եգիպտոսի Պղատոնի դէմ մի ամբողջ «գիրք» չի գրել. արդարեւ՝ նրա յօդուածին (որ «Բազմավեպ»-ում լոյս տեսաւ նաեւ հայերէն¹⁴⁶) արձագանքեցին Մ. Ռիչարը եւ բելգիացի բանասէր հայագետ Վան Էսբրուկը, որոնք յայտարարեցին, թէ քննարկուող հատուածում Եգիպտոսի օգտուել է Հիպոդիտոսի «Յաղագս տիեզերաց» (De universo) մի գրուածքից, որից երեք հատուած է մնացել, եւ որոնց առաջինն մէջ գտնուած ենք Պղատոնի անունը, եւ նրա դէմ պայքարելու մասին խօսք կայ, որ Եգիպտոսի նոյնութեամբ պահել է: Քանի որ Հիպոդիտոսի պահպանուած երեք հատուածների միջեւ ընդհատում չկայ, ուստի Եգիպտոսի երկրից եւս այնտեղ մի «գիրք» դուրս չի ընկել: Վան Էսբրուկը ցոյց տուեց¹⁴⁷, որ Եգիպտոսի մի շատ կարեւոր տարբերութիւն ունի իր աղբիւր Հիպոդիտոսից. անտեսել է իր աղբիւրում եղած Պղատոնի քննադատութիւնը այն բանի համար, որ սա թաքցրել է իր եզրափակման աղբիւրը եւ նրանից սովորածի մի մասը. «Ուստի, — գրել է բանասէրը, — շատ հաւանական է թուում, որ Եգիպտոսի մէջ էջից աւելի չի յատկացրել այդ բնոյթի շարադրանքին: Պղատոնին հերքելու մտադրութիւնը նրանը չէ, այլ՝ Հիպոդիտոսին: Եգիպտոսի երկու թերի անտարակոյս չի հասնում ամբողջ մի գրքի, ինչպէս ենթադրում է Հր. Աճառեանը»:

10. Հր. Անառեանը «Քննութիւն» էլ 104-ում նշել էր տպագրի էջ 279-ի եւ 289-ի «խոչոր գանազանութիւնը [. . .] որ կամ թերութիւն եւ կամ առնուազն տեղափոխութիւն կ'ենթադրէ Եգիպտոսի բնագրին մէջ»: Լ. Մարիէսը, ընդհակառակն, կարծում էր, թէ պակասը մէկ կամ երկու տող է, թէ գրիչն անուշադրութեամբ բաց է թողել մի նախադասութիւն՝ մի տողի բառից մի ուրիշ նախադասութեան կամ տողի նոյն բառին անցնելով (De Deo, էջ 152-153): Սակայն, միւս կողմից, Մարիէսի կարծիքով, իրօք անտեղի է տպագրի էջ 279.13-280.20-ում կատարուած տեղափոխութիւնը, եւ հրատարակիչը անտեղի է աւելացրել 280.20-281.2 հատուածը: Բայց տեսանք, որ այդ բոլորը Ձմիւռնիայի սրբագրուած տպագրում էլ է այդպէս: Լ. Մարիէսը նկատել է տուել յամենայն դէպս, որ այս եւ նման հարցեր կարելի է լուծել անձամբ տեսնելով այդ սրբագրուած օրինակը, որ Ս. Ղազարում է պահուած, եւ որի մասին նա տեղեկացել է Շմիդի գերմ. թարգմանութեան ներածութեան մէջ Գ. Գալէմբեարեանի պատմածից, բայց անձամբ չի տեսել այդ սրբագրուած օրինակը եւ անտեղի է մեղադրել Ս. Ղազարի «հրատարակիչներին»:

11. Ե. Փէշիկեանը 1928-1929 թթ. «Բազմավեպ»-ում հրատարակած յօդուածում («Եգիպտոսի Եգիպտոսի աղանդոցի . . .») ուշադրութիւն է դարձրել Հր. Աճառեանի յիշատակած այն հատուածին, որ պակասում է նորագիտ ձեռագրում եւ կայ Գ. Տ.-Յովհաննիսեանի սրբագրած տպագիր օրինակում, որի ձեռագիրը նա աւելի լաւ է համարել (անդ, 1928, էջ 295 եւ 1929, էջ 275): Իսկ Ե. Դուրեանի կարծիքով՝ «Ձեռքէ ձեռք անցած եւ սրբագրուած այդ ընդօրինակութիւնները գիւրար լրացնելու դերին մէջ առաւելութիւն մը չունին, եւ բնագրական վերականգնումին համար հազիւ թէ մանր մունր նպաստներ կ'ընձեռեն, ամբողջ գործին մէջ» (Ամբողջ երկեր, 2, 404):

բ) Բնագրային սրբագրութիւնների անհրաժեշտութիւնը (Բնագրի որակը)

Մեր ներածութեան 4-րդ գլխի սկզբում աշխատեցինք համառօտ ցոյց տալ մէջբերումներով, թէ բանասէրները որքան բարձր են գնահատել Եգիպտոսի երկի լեզուն եւ ոճը: Ահա մի մեծ գիտակի կարծիքը եւս. «Մատենագրական հմտութեանց նկատմամբ՝ առաջինն է Եգիպտոսի լեզուն գեղեցկութիւնը: Երեք ազգ գեղոց կը նկատենք Եգիպտոսի գրոցը մէջ. նախ բառից ճշգրիտ նշանակութեամբ. երկրորդ՝ գուրցուածքի գեղեցկ կերպովը, եւ երրորդ՝ ընտիր դասաւորութեամբ» (Գ. Ջարբհանաւեան, Հայկ. հին դպրութ. պատմութ., էջ 304): Սակայն հիացմունքը չի խանգարել, որ բանասէրներ ու լեզուաբաններ Եգիպտոսի երկում չնկատեն ոչ յստակ կամ թերեւս աղաւաղուած բառեր,

¹⁴⁶ Մ. Մինասեան, Եգիպտոսի մի հատուածի մասին, «Բազմավեպ», 1974, 1-2, էջ 106-128.

¹⁴⁷ M. V. Esbroeck, Le Passage d'Eznik . . . , Le Museon, t. 87, fsc. 3-4, 1974, p. 441-444. Նոյնը հայերէն՝ Մ. Մինասեան, Եգիպտոսի մի նոր աղբիւր, «Բազմավեպ», 1976, 1-2, էջ 122-125, ուր, հակառակ յօդուածագրի, տեղ չի գտել Հիպոդիտոսի յունարէն բնագիրը, այլ տրուած է Վան Էսբրուկի ֆրանսերէն թարգմանութիւնից յօդուածագրի կատարած հայերէն թարգմանութիւնը:

տեղեր կամ նախադասություններ, քերականական անկանոնություններ, լեզուական եւ շարադրական այլ թերություններ, որ մեծ մասամբ վերագրել են գրիչներին, մասամբ միայն հեղինակին, բայց այս բոլորը միայն ենթադրաբար, քանի որ ձեռագիրը միակն է: Հենց դա է զարմանալին. միակ ձեռագրի դէպքում լեզուական քերականական կամ ուղղագրական սխալների, թէկուզ դրանց մի մասի պատասխանատուն համարել հեղինակին, երբ այժմեան ձեռագիրը (կամ զմրուհեանը) բուն նրանը չէ, նրա ձեռքով գրուած չէ. ուստի ամենեւին վստահ չենք կարող լինել, թէ ձեռագրում հանդիպող այս կամ այն բառը նա է գրել իր ձեռքով: Խնդիրն այն չէ այսօր, թէ նկատուող անկանոնությունները Եզնիկինն են, թէ՛ գրչինը, յետոյ դարձեալ մի ուրիշ գրչինը եւ վերջապէս Լուսերինը, որ մեզ միակ յայտնին է, կամ հետեւանք են սրբագրողի անուշադրութեան, այլ՝ դրանց զգուշաւոր վերացումը դասական գրաբարի կանոնների օգնութեամբ, առանց ամբողջովին անհետացնելու սխալ համարուող ձեւը. գիտությունը մեզանից ոչ մէկով կանգ չի առնում, ոչ ոք վերջին խօսքը չի ասում:

Եզնիկի երկի բնագիրը սրբագրելու կամ չսրբագրելու անհրաժեշտությունը եւս բանավէճերի առարկայ է դարձել սրբագրութեան կողմնակիցների եւ այն ամենեւին կամ մասամբ մերժողների միջեւ: Գիտենք, որ եւրոպական եւ ամերիկեան բանասիրութեան մէջ եւս կան այդ երկու ուղղությունները: Սրբագրութիւնը մերժողների փաստարկումն այն է, թէ միակ ձեռագրում չենք գտնում առաջարկուած սրբագրութիւնը: Առաջին սրբագրիչը, որին չի խանգարել այս կարգի փափկանը-կատուութիւնը, եղել է առաջին տպագրութեան հրատարակիչ եւ խմբագիր Յ. Նալեանը, որի «գործին» արդէն ծանօթ ենք: Նշուած եւ չնշուած սրբագրութիւններ ունի Ա. Բագրատունին⁶: Պատճառաբանուած կամ գիտակցուած սրբագրութիւններ առաջարկել են Գ. Գալէմբեարեանը, Յ. Տաշեանը, Թ. Թոռեանը, Ն. Ն. Բիւզանդացին, Ե. Դուրեանը, Հր. Աճառեանը, Բ. Կիւլէսէրեանը, Գ. Նահապետեանը, Լ. Մարիէսը, Ն. Աղոնցը, Ա. Վարդանեանը, Ե. Փէչիկեանը (չատ չափաւոր), Գ. Խաչատուրեանը (չատ քիչ), Վ. Առաքելեանը, Ա. Ա. Աբրահամեանը, Մ. Մինասեանը. ուրիշներ արել են մի քանի սրբագրութիւններ: Սակայն չի կարելի ասել, մեր կարծիքով, թէ ամենքի բոլոր առաջարկները կարելի է մտցնել բնագրի մէջ: Ե. Փէչիկեանը յիշատակում է նաեւ «Գարագառ եւ Գուրգէն» («Բագմավէպ», 1928, էջ 289), յղելով նրանց միատեղ հրատարակած «Ճաշակ ոսկեղէն դպրութեան» հանդէսին (Ա եւ Բ հատորներ միայն). սակայն մենք դրանում սրբագրութիւններ չնկատեցինք:

Երկի սրբագրութեան անհրաժեշտութեան շուրջը ծագած բանավէճերից առանձնապէս յայտնի է Ե. Դուրեանի եւ Գ. Գալէմբեարեանի յօդուածափոխանակումը, եւ ապա նոյնը՝ Ե. Դուրեանի եւ Ե. Փէչիկեանի միջեւ:

Մ. Շմիդը Եզնիկի երկի գերմաներէն թարգմանութեան մէջ (1900 թ.) ընդունել էր Գ. Գալէմբեարեանի բնագրային սրբագրութիւնները ու ըստ այնմ թարգմանել որոշ հատուածներ: Լ. Մարիէսը (*De Deo*, էջ 160) նրանում հաշուել է (նշելով թարգմանութեան էջերն ու ծանօթագրութիւնների համարները) 64 սրբագրութիւն K[alemkian] ստորագրութեամբ: Այնուամենայնիւ թարգմանութեան գրախօսութեան հեղինակ Ե. Դուրեանին («Եզնիկի գերմաներէն թարգմանութիւնը», Ամբողջ երկեր 2, 186-188) տուած պատասխանի վերջում Գ. Գալէմբեարեանը գրել է հետեւեալը. «Բնագիրներու ընթերցուածներն «ուղղել» շատ մեծ զգուշութիւն եւ շատ կողմանէ մտադրութիւն կը պահանջէ, եւ լաւագոյն է թողուլ իւր[եանց] վիճակին մէջ, քան խնդրական փոփոխութիւններ ներմուծել» («Մասիս», Կ. Պոլիս, 1900, 26, էջ 406): Ե. Դուրեանն իր գրախօսութեան մէջ առաջարկել էր սրբագրութիւններ. իր պատասխանի մէջ այս տողերը մէջբերելով¹⁴⁸ նա գրել է. «Այս տեսութիւնը շատ ճշմարիտ է, եւ բանասիրական հետազոտութեանց համար լուրջ պայման մը. սակայն՝ մեզի կը թուի թէ հեղինակ մը հասկնալու ո՛չ նուազ կարեւոր պայմաններէն մէկն ալ է՝ յամառ միամտութեամբ մը չկապուել անոր թերի եւ երբեմն անկապակից խօսքերուն, որոնք անհամուտ ձեւերու կամ անողոք պատահարներու բիրտ հարուածը կրնան կրած ըլլալ»: Երկու ականաւոր բանասէրները մի-մի պատասխան եւս հասցէագրեցին միմեանց «Մասիս» նոյն՝

¹⁴⁸ Ամբողջ երկեր, 2, էջ 194. այստեղ Գ. Գալէմբեարեանի «կողմանէ» բառը չկայ, որ թերեւս կար «Մասիս»-ի այն համարում, ուր լոյս է տեսել առաջին անգամ պատասխանը:

1900 տարուայ համարներում, եւ, իրենց իսկ բառերով, «ամուլ պայքարը» դադարեց: Բոլոր սրբագրութիւնների շուրջ ծաւալուած բանավէճերն «ամուլ» են այնքանով, որ սրբագրութիւնները միայն հաւանական են, քանի պակասում են տարբեր ընտանիքի պատկանող ձեռագրեր: Այնուամենայնիւ յետագայում եղան սրբագրութիւններ առաջարկողներ Եզնիկի երկի համար. լաւ է, որ եղան, եւ անհրաժեշտ է, որ լինեն: Մենք նման «պայքարները» հայոց բանասիրութեան համար օգտակար ենք համարում, պայմանով որ «Յարութիւնս քաջութեան վատութիւն մի խառնեցուք», անձնական վիրաւորանքներ եւ դառնութիւններ չպատճառենք միմեանց. աւա՛ղ:

Հր. Աճառեանն իր «Քննութեան» (1904) «Ձեռագրական սրբագրութիւններ Եզնիկայ մէջ» գլխում (Ե, էջ 83-96) առաջարկել է 33 ուղղում. «Այս սխալները, - գրել է նա, - առհասարակ ուղղագրական են. բայց Եզնիկայ բնագրին մէջ մտած են նաեւ այնպիսի սխալներ, որոնք անկարելի է որ Եզնիկայ պէս փառաւոր գրչի մը տակ մուտ գործէին: Ասոնք ոչ այլ ինչ են եթէ ոչ ուրիւր տարիներու ընթացքին մէջ (Ե-ԺԳ Դար) յաջորդական բազմաթիւ արտագրութեանց ժամանակ նախորդ պարզ ուղղագրական սխալէ մը հետզհետէ ձեւափոխուելով յատալ եկած սխալներ» (էջ 83): Լ. Մարիէսն իր *De Deo* աշխատութեան մէջ (1924) մի քանի անգամ գովասանքով է խօսել Հր. Աճառեանի եւ Գ. Տէր-Մկրտիչեանի հրատարակած «Քննութեան» արժէքաւոր բնոյթի մասին. իսկ բուն սրբագրութիւնների վերաբերեալ, որոնք միայն Հր. Աճառեանինն են, ասել է հետեւեալը (էջ 161). «Մի քանիսը շատ տրամաբանական են. [օրինակ]. ուրիշ մի քանիսը վիճելի են. բոլորն էլ պէտք է նկատի առնել» («de toutes il faudra tenir compte»): Հր. Աճառեանին թուացել է, թէ Լ. Մարիէսը բոլորն էլ ընդունել է, ինչպէս գրել է Լ. Մարիէսի այդ աշխատութեան իր գրախօսականում. «Ինքը կ'ընդունի իմ 33 սրբագրութիւններս» («Բագմավէպ», 1926, էջ 170): Համամիտ ենք Լ. Մարիէսին, որ պէտք է «հաշուի» կամ «նկատի առնել», այսինքն ընթերցողներին ծանօթացնել Հր. Աճառեանի եւ ուրիշների առաջարկած բոլոր սրբագրութիւնները, առանց, սակայն, բոլորն էլ ընդունելու բնագրի մէջ, եթէ համոզիչ չեն:

Լ. Մարիէսն իր *De Deo* գրքում (էջ 161-191) պատճառաբանութիւններով առաջարկել է 25 (թէեւ համարակալուած 20) սրբագրութիւն, որոնց ոչ բոլորն ենք գտնում նրա քննական հրատարակութեան մէջ (1959 թ.). գուցէ մասամբ ընդունել էր Աղոնցի քննադատութիւնը («Բագմավէպ», 1926, էջ 108-113), որ իբրեւ եզրակացութիւն գրել էր. «Այսպիսով բացի մի քանի մանրութիւններից, գրեթէ բոլոր առաջարկուած ուղղումներն անվստահելի են, ասեմք մեզ մ'լեզուով» (էջ 113): Իր գրախօսութեան մէջ Հր. Աճառեանը քննադատել էր Լ. Մարիէսի մէկ սրբագրութիւն, որն իրօք չկայ Մարիէսի գիտական հրատարակութեան մէջ:

Եզնիկի 1926 թ. իր վերահրատարակութեան մէջ Ե. Փէչիկեանը, իր ասելով, բնագրում կատարել է 15 սրբագրութիւն, «որոնցմէ մաս մը գրաշարի վրիպակ էր արդէն», իսկ մնացածը «զգուշութեամբ» առել է նորագիտ ձեռագրի ընթերցուածներից Հր. Աճառեանի «Քննութեան» շնորհիւ: Նա իր զգուշութիւնը 1928-ին բացատրել է նրանով, որ բանասէրների «ոչ ամէն սրբագրութիւնները նոյն ոյժն եւ նոյն համոզիչ փաստերն ունին. թէ եւ երբեմն շատ հաւանական, սակայն միշտ ենթակայական կը մնան, քանի որ ձեռագրին հեղինակութիւնը կը պակսի» («Բագմավէպ», 1928, էջ 290): Սակայն, գիտակցելով արդէն տրամադրելի բոլոր միջոցներով քննական մի հրատարակութեան անհրաժեշտությունը, նա մասամբ նախապատրաստել է այդ գործը՝ 1928-1929 թթ. լոյս ընծայած ուսումնասիրութեան մէջ համադրելով եւ քննարկելով Զմիւռնիայի եւ Վենետիկի տպագրութիւնների ու նորագիտ ձեռագրի ընթերցուածներ, համադրութիւն, որից թերեւս լուրջապէս օգտուել է Մարիէսը իր քննական բնագրում:

Ե. Փէչիկեանի՝ Եզնիկի երկի վերահրատարակութեան եւ ուսումնասիրութեան մասին իր մահից առաջ գրած յօդուածում Ե. Դուրեանը (Ամբողջ երկեր, 2, էջ 403-416, 1980 թ.) արտայայտուել է Եզնիկի ձեռագրերի եւ բնագրի սրբագրութեան մասին: Քանի որ, նրա կարծիքով, ձեռագրերը (նա հաւատում էր երկու ձեռագրի, նոյնիսկ երբեք գոյութեանը, Յրդը գոյութիւն չունեցող վենետիկեանն էր նրա համար) «գրչագրական միեւնոյն աղաւաղումներով բժականաւորուած» են, ուստի «յայտնի սխալներու անգիտակից վկաներ ատեան կոչելով՝ ի՞նչ շահ կրնար ակնկալել բանասիրութիւնը, որուն իրաւունքն է անշուշտ արձակել վերջին վճիռը, լեզուի եւ իմաստի գրական

ու տրամաբանական կանոններու համաձայն» (ն. տ., Զ, 404): Մենք կարծում ենք, որ օգտագործելի են թէ՛ ձեռագիրը եւ թէ՛ «բանասիրութեան տրամաբանական կանոնները»: Նա, ըստ մեզ, իրաւամբ է «չափազանց» համարել ձեռագրերի մէջ «մարդկային անուշադրութեան հետեւանքով ցցուած խաչեր[ին] բնաւ չգլխաւոր երկրորդածութիւնը, սա առարկութեամբ՝ թէ Ձեռագիրներ համարձակութիւն չեն տար այդ մասին» (ն. տ., էջ 404), որ Ե. Փէչիկեանի պատճառաբանութիւնն էր: Համամիտ ենք Ե. Դուրեանի առաջարկին. «Լաւ կ'ըլլար գէթ հաւանականագոյն սրբագրութիւնները նշանակել, զոր օրինակ բնագրին անձնիւր էջերուն տակ» (ն. տ., էջ 405). սակայն Ե. Փէչիկեանի վերահրատարակութիւնը քննական չէր: Ե. Դուրեանի արժանիքներից է, որ իր վերջին յօդուածում «Եզնիկի մէջ ցարդ մատնանշուած սխալներուն տեսակ մը համադրութիւնն» է արել, օգտուելով, ինչպէս ինքն է ասել, Ե. Փէչիկեանի «յօդուածաշարքէն», «չեղտելու համար մերագնեայ բանասէրներու կարեւորագոյն ճշգրտումները», իր «տեսածներն ալ աւելցնելով բնագրական ինչ ինչ ուղղումներու մասին» (ն. տ., էջ 405): Ե. Փէչիկեանը 1930 թ. վերջին անգամ բացատրեց, թէ ինչո՞ւ խիստ չափաւոր է եղել սրբագրութիւնների հարցում 1926-ի իր վերահրատարակութեան մէջ:

Ժ. ԱՅՍ ՔՆՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեզ մնում է ներկայացնել մեր պատրաստած բնագրի ձեռագրական հիմքը եւ սկզբունքները:

Ձեռքի տակ ունեցել ենք Մատենադարանի թ. 1907 ձեռագրի՝ Մարիէսի մանրաթապաւէնից մեր հանած լուսանկարները, երկի մեր հիմնական համարած տպագրութիւնները, առաջարկուած այն բոլոր սրբագրութիւնները, որ կարողացանք յայտնաբերել: Ձանտեսեցինք որոշ երկերում կամ յօդուածներում մեր հանդիպած եզնիկեան բնագրի այս կամ այն փոփոխութիւնը, որը կարող էր լինել վրիպակ կամ գիտակցուած, բայց չձանուցուած սրբագրութիւն կամ փոփոխութիւն, ինչպէս ՆՀԲ-ում եւ այլուր, թէեւ զգուշացանք ամէն մի այլընթացում հաշուի առնելուց: Այս է պատճառը, որ աւելորդ համարեցինք համեմատել երկի բոլոր հրատարակութիւնները եւ գրանցել նրանց տարբերութիւնները, քաջ գիտակցելով, որ դրանք վրիպակներ են: Երկի ամբողջական արտատպումներից գլխաւորների հետ հաշուի առանք նաեւ հատուածաձաքար լոյս ընծայուած մասեր, որոնց հրատարակիչները լուրջ մօտեցում են ցուցաբերել բնագրի հանդէպ: Առանձին տեղ են գրաւում նորայր Ն. Բիւզանդացու անտիպ Եզնիկեան նիւթերը, որոնց մասին մանրամասն խօսուեց վերեւում:

ա. Այս հրատարակութեան ձեռագրական հիմքը՝ Մ 1097

Բնագիրը պատրաստելիս մեր տրամադրութեան տակ ունեցել ենք Մ 1097 ձեռագրի մանրաթապաւէնից մեր հանած լուսանկարները: Մանրաթապաւէնը մեզ ժամանակակերպապէս տրամադրել էր հանգուցեալ (28.4.1978 թ.) Շարլ Մերսիէ հայագետ վարդապետը, որ Լուի Մարիէսի հետ նրա կեանքի վերջին 10 տարիներում աշխատակցել է Եզնիկի երկի 1959 թ. հրատարակութեան եւ Քրանսերէն թարգմանութեան պատրաստութեան գործին: Մանրաթապաւէնից առաջ նա մեզ տրամադրել էր նաեւ Մարիէսի հանել տուած լուսանկարները: Ժապաւէնն ու լուսանկարները պատկանել են Մարիէսին: 1925 թ. մարտի 6-ին Նիկ. Յակ. Մառին Փարիզից գրած նամակում (այժմ Լեւինդրադ, Գ-Ա գիււան, Մառի բաժին) նա խնդրել է, որ նրա ազդեցիկ միջամտութեամբ Եզնիկի կամ ձեռագիրը դիւանագիտական ճանապարհով փոխ տրուի Փարիզի «Ազգային գրադարան»-ին, կամ էլ մանրաթապաւէնն ուղարկուի իրեն՝ քննական հրատարակութեան պատրաստութեան համար. առաջարկել է նաեւ Հր. Աճառեանի աշխատակցութիւնը: Մառն ընդառաջել է Մարիէսի նամակին, ինչպէս վկայում է նրա մակագրութիւնը, եւ Մարիէսն ստացել է մանրաթապաւէնը, որն այժմ լուսանկարների հետ հաւանաբար Փարիզի «Institut Catholique» բարձրագոյն ուսումնական հաստատութեան գրադարանում է: Այսպիսով մեր հրատարակութեան էական եւ անհրաժեշտ հիմքը երախտագիտութեամբ պարտական ենք Շ. Մերսիէի անվերապահ բարեացակամութեանը:

Հր. Աճառեանի անմիջական վկայութեան եւ մեր լուսանկարների հիման վրայ վերեւում նկարագրեցինք Մ 1097 ձեռագիրը եւ Եզնիկի երկի ձեռագիրն առանձնապէս: Բնագրի տողատակերում մանրամասնօրէն նշանակեցինք սրա բնագրա-ընթացութեան բոլոր տուեալները, որոնք մեր բնագրում նոյնութեամբ չեն, իսկ ծանօթագրութիւնների մէջ՝ նրա գրչագրական առանձնայատկութիւնները: Ընթերցողներն այսպիսով ի վիճակի են այս հրատարակութեան մէջ գտնելու իրենց հետաքրքրող, բայց մեզ համար աննախատեսելի որեւէ մանրուք այս թանկագին ձեռագրում, որ գրչագրական կամ հնագրական տեսակէտից առանձնապէս ուշագրաւ չէ, այլ արժէքաւոր է եզնիկեան բնագրի համար: Նրա միակ մանրամասնութիւնը, որ արձանագրուած չէ այստեղ, կէտադրութիւնն է, քանի որ դրա հեղինակային լինելը ապացուցելի չէ, եւ չի հապատասխանում կէտադրութեան այսօրուայ կանոններին. շատ անգամ կամայական է եւ չի նպաստում բնագրի լուսաբանմանը, բացառութեամբ որոշ տեղերի, որոնք նկատի առանք:

բ. Նկատի առնուած տպագիրները եւ նրանց առանձնայատկութիւնները

Հետեւեալ մանրամասները, որ նշում ենք, ամեն անգամ արձանագրուած չեն մեր բնագրի էջատակերում կամ ծանօթագրութիւնների մէջ:

1. Զմիւռնեան տպագիր, 1763 թ. (Զ)

Սրա բոլոր տարընթացութեանը նշանակուած են, քանի որ դրանք մեծ մասամբ նրան հիմք ծառայած զմիւռնեան ձեռագրին են անշուշտ, բայց շատերն էլ հրատարակիչ Յ. Նալեանի «սրբագրութիւններն» են, որոնց մեծագոյն մասը, եթէ ոչ բոլորը դարձեալ սրբագրուած է անկասկած Գ. Տէր-Յովհաննիսեանի կողմից: Ուստի կարծում ենք, որ մեր նշումներն աւելորդ չեն եւ օգտակար կը լինեն համեմատութիւնների համար եւ ցոյց կը տան «խմբագիր» Յ. Նալեանի գործի էութիւնը, նամանականդ երբ որոշ բանասէրներ մեծ կարեւորութիւն են տուել այդ առաջին տպագրութեանը: Անտեսել ենք հետեւեալները:

- 1) Հրատարակիչ Յ. Նալեանի քառաբաժանումը եւ 76 ձառերի նոտրատիպ վերնագրերը, ինչպէս էլ 1, «Ճառ Ա: Յաղագս անգնուութեան Այ:» եւ այլն, քանի որ դրանք ձեռագրում չեն եղել, ինչպէս ասուած է տպագրի «Յիշատակարան»-ում, եւ Գ. Տ.-Յովհաննիսեանը ջնջել է դրանց մի մասը սկզբում:
- 2) Բնագրում իսկ գրուած սուրբգրային նորատիպ աղբիւրները, քանի որ դրանք եւս չեն եղել ձեռագրում (եւ էջին կարող լինել), ինչպէս յայտարարուած է տպագրի «Յիշատակարան»-ում:
- 3) Այսօրուայ չափանիշով անորակ տպագրութեան թերիւրները, ինչպէս բառաբաժանումները (օր.՝ առասպելեմ փի առասպելեմ եմ), տողադարձները, նոյն բառի գրերի միջեւ եղած աւելորդ բացերը, ակնյայտ վրիպակները (ինչպ.՝ սր փի ոք, սֆ փի ոք, աւասնեմֆ փի տեսանեմֆ, վնասակտր փի վնասակտր եւ այլն), բացի էական նշանակութիւն ունեցողներից, կամայական կէտադրութիւնը եւ առոգանութեան պատահականօրէն գրուած նշանները, ոչ տողադարձային աւելորդ ը գիրը բառերի մէջ, փակագծերը, բառերի յապաւումները, որ լրիւ ենք գրանցել տարընթացութիւնների բաժնում, աշխարհ եւ երկինգ(ֆ) երկու անունների ծածկագրութիւնը, աւ-ի փոխարէն գործածուած օ-ն եւ այլ աննշան մանրամասներ, որոնց սրբագրիչ Գ. Տ.-Յովհաննիսեանը նոյնպէս չի անդրադարձել իր սրբագրած տպագիր օրինակում:
- 4) Նկատի ենք առել ու նշել յատուկ անունների ուղղագրութիւնը, որոնց սկզբնագիրը, բացի վերջակէտից յետոյ, մեծագոյն մասամբ փոքրատառ է (ինչպէս ձեռագրում), որ նոյնութեամբ թողել է Գ. Տ.-Յովհաննիսեանը, եւ մենք էլ չենք նշել շատ անգամ: Յատուկ անունները նոյնիսկ ՆՀԲ-ում շատ յաճախ փոքրատառ են:

Նշել ենք հայերէն փոքրատառերով գրուած թուերը, ինչպէս «ճ եւ ի ամ», որ Գ. Տ.-Յովհաննիսեանը դարձեալ թողել է անփոփոխ, մինչդեռ դրանք լրիւ են գրուած Մ 1097 ձեռագրում: Ինչպէս տեսնում ենք, որպէս սրբագրիչ Գ. Տ.-Յովհաննիսեանն անթերի չէ, բայց մեզանից ո՞վ է անթերի, կամ էլ տառաթուերը նրա ձեռագրում էին:

2. Գ. Տէր-Յովհաննիսեանի սրբազրութիւնը (Գ) եւ սրանից սրբազրուած ու մեր մերժած երեք տպագիր օրինակներ (Գ¹, Գ², Գ³)

Գ-ն եւ Զ-ն (Զմիւռն. տպ.) նոյն էջերն ունեն: Գ-ի բոլոր սրբագրութիւնները նշեցինք: Դրանք են, որ մեծ մասամբ գաղափար են տալիս զմիւռնեան ձեռագրի բնագրի մասին, եւ դրանց հիման վրայ է 1826 թ. Ա. Բագրատունին⁶ լոյս ընծայել իր հրատարակութիւնը: Սակայն փաստերով կարելի է ապացուցել, եւ այլընթերցումների բաժինն ինքնին ցոյց կը տայ, որ Գ-ն այստեղ էլ թերացումներ է ունեցել, ուստի եւ միայն Գ-ի միջոցով չի կարելի ապացուցել զմիւռնեան եւ Մ 1097 ձեռագրի նոյնութիւնը կամ տարբերութիւնը: Երախտապարտ ենք Հ. Ներսէս Տէր-Ներսէսեանին, որ Ս. Ղազարու՛մ երեք օր շարունակ Գ-ի սրբագրութիւնները մեզ հետ փոխանցեց մեր անձնական օրինակի մէջ:

Գ¹ եւ Գ² կոչեցինք զմիւռնեան հրատարակութեան այն երկու օրինակները, որոնք Ս. Ղազարու՛մ Մխիթարեան մի քանի վարդապետներ թերի սրբագրել են Գ-ից: Դրանք այժմ պահուում են այնտեղ, Ե. Փէչիկեանը ժամանակին դրանք կոչել է Բ եւ Ա օրինակներ: Գ¹-ի (կամ Բ-ի) ամբողջական եւ միւսի կիսատ մեր համբերատար համեմատութիւնը Հ. Ն. Տէր-Ներսէսեանի հետ ցոյց տուեց, որ երկուսի սրբագրութիւններն էլ Գ-ի բաղադատմամբ շատ թերի են: Արդ՝ քանի որ այդ նոր սրբագրիչները ձեռքի տակ չեն ունեցել զմիւռնեան ձեռագիրը, եւ նրանց տարբերակները ոչնչով պատճառաբանուած կամ ծանուցուած չեն, թէ առաջարկուած սրբագրութիւններ են, ուստի ամենեւին ձեռնպահ մնացինք դրանցից եւ չարձանագրեցինք այլընթերցումների բաժնում:

Գ³ կարելի է անուանել զմիւռնեան այն թերի սրբագրուած եւ մասամբ վնասուած օրինակը, որ պահուում է Վիեննայի Մխիթարեան վանքի ձեռագրատանը. զգուշութեան համար հանուած է նաեւ մանրաժապաւենը, որի մի օրինակը մեր ձեռքում է, չնորհու Արքայապետ Բարեպատկաւորութեան: Ստուգուած պարզեց, որ սա սրբագրուած է, լողողուած թանաքով, Ս. Ղազարի Գ¹-ից, այսինքն երկրորդաբար սրբագրուած լաւագոյն օրինակից, սակայն սա էլ իր հերթին թերի է իր սկզբնօրինակի բաղադատմամբ. ուստի մեզ մնում էր այս էլ անտեսել: Սրբագրութիւններ այս օրինակի մէջ փոխանցողը հաւանաբար Գ. Գալէմբարեանն է եղել, քանի որ, ինչպէս ինքն իսկ գրել է Մ. Շմիդի գերմ. թարգմանութեան ներածութեան մէջ, 1897 թ. սեպտեմբերին գնացել էր Ս. Ղազար՝ Եգիպտոս Բագրատունեան⁶ «ձեռագիրը» տեսնելու համար. այս մասին տես՛ ս վերեւում:

Զմիւռնեան հրատարակութեան մեր ուսումնասիրած օրինակներում նկատելի են բնագրային մի քանի տարբերութիւններ. այսպէս Գ-ում եւ Գ²-ում՝ «եւ երկիր», իսկ Գ¹-ում եւ մեր անձնական օրինակում՝ «եւ երկ երկիր». այս կարգի տարբերակները գրանցել ենք նկատելու դէպքում. ամենակարեւորը Գ-ն է:

3. Ս. Ղազարի 1826 թ. (Վ), 1850 թ. (Վ¹) եւ 1863 թ. (Վ²) տպագիրները

Ս. Ղազարի այս երեք տպագիրները, որոնք արտաքինով նոյնական են, նկարագրեցինք երրորդ գլխի երրորդ կէտում եւ տուեցինք նրանց շարուածքային տարբերութիւնների նմուշներ էջ 5-12, ինչպէս նաեւ բնագրային տարբերակներից մի ցանկ: Կանգ առնենք սրանց յարուցած որոշ շփոթութիւնների եւ թիւրիմացութիւնների վրայ, քանի որ օգտագործողները չեն իմացել, թէ ո՛ր տպագիրն ունեն իրենց ձեռքում:

Վ-ի էջերն ու ներքին բաժանումները նշուած են մեր բնագրի լուսանցքներում Վ գլխագրով:

Հր. Անատեանը «Քննութեան» էջ 19-ում գրել է. «Եգիպտոս ձեռագիրը տպագրին հետ համեմատելու ժամանակ գործածած ենք Վենետիկի ՌՄՂԵ [1826] թուականի տպագրութիւնը. այս թուականով Եգիպտոս քանի մը տպագրութիւններ ելած են Վենետիկի [Մխիթարեան] Միաբանութեան տպարանէն՝ տարբեր տարբեր տարիներ, որոնց իւրաքանչիւրը բոլորովին տարբեր տպագրութիւն է. բայց որովհետեւ հրատարակիչները աշխատած են այդ զանազան տպագրութիւնները

բոլորովին նոյն ձեւով դուրս հանել, ուստի անկարելի էր մեզ որեւիցէ նշանով որոշել թէ ո՛ր տպագրութիւնն է մեր ունեցածն ու գործածածը. ուստի կը բաւականանանք միայն ՌՄՂԵ թուականը որոշելով»: Սակայն նա եւ ուրիշ բանասէրներ կա՛մ (տպագիր) տարբեր օրինակներ չեն ունեցել դրանց համեմատութեան համար, կա՛մ շտապել են ու չեն նկատել Վ, Վ¹, Վ² տպագիրների բնագրային մասը տարբերութիւնները, որով արուել են սրբագրութիւններ, որոնք արդէն կային անդրանիկ տպագրութեան մէջ: Մեր ստուգումը պարզեց, որ ամենից շատ գործածուածը եղել է 1850 թ. (Վ¹), առաւել եւս 1863 թ. (Վ²) տպագրութիւնը:

Այսպէս, հնարաւոր եղաւ որոշել, որ Հր. Անատեանն ու Միաբանը ունեցել են Վ²-ը (1863 թ.): Հր. Անատեանը Վ²-ի էջ 217, ն. տ. 18-ի չեն մարք-ի չեն-ն իր «Քննութեան» էջ 93-ում առաջարկել է ուղղել չեն (որ միանգամայն տրամաբանական է). արդ, Վ եւ Վ¹-ն արդէն իսկ ունեն այդ չենը, որ արտատպութեան ժամանակ դարձել է չեն ու վրիպակ է: Կամ «Քննութեան» էջ 76-ում Վ²-ի էջ 95-ի տ. 18-ի ցուցանէ-ն առաջարկել է կարգաւ ցուցանէր, որ տրամաբանական է. բայց Վ-ն ու Վ¹-ն արդէն իսկ ունեն այդ: Այս գաղտնիքին անտեղեակ, Ա. Մադոյեանը, որ ծանօթագրել է Հր. Անատեանի (եւ Միաբանի) «Քննութեան» 1976 թ. երեւանեան վերահրատարակութիւնը, էջ 230-ում, ծան. 3, գրել է, թէ «Հր. Անատեանը ձեռքի տակ ունեցել է Վենետիկի 1826 թ. հրատարակութիւնը»: Սակայն երբ Հր. Անատեանը իր ունեցած տպագրի ցուցանէ-ն առաջարկում է ուղղել ցուցանէր, ապա Ա. Մադոյեանը, որ իր ձեռքում պատահաբար ունեցել է իրօք 1826-ի տպագրութեան մի օրինակ կամ Վ-ն, էջ 230-ի 7-րդ ծան. մէջ հարկադրաբար նշել է, թէ «Եգիպտոս վենետիկեան հրատարակութեան» Հր. Անատեանի մատնանշած տեղում (էջ 95, 18-րդ տող) ցուցանէր է». եւ այսպէս նշել է նաեւ մի քան այլ «ուղղումների» մասին, առանց Հ. Անատեանի սրբագրածի պատճառը որոնելու:

Լ. Մարիէտը եւս չի անդրադարձել, որ իր ձեռքում ունեցածը եւ 1826-ի տպագիր համարածը իրականում 1863 թ. հրատարակութիւնն է: Այսպէս Եգիպտոս երկի իր քննական հրատարակութեան մէջ նշել է, թէ 1826-ի տպագրի էջ 258-ն սկսում է եւ զայն բառերով, որոնք իրականում 1863-ի տպագրի այդ էջի առաջին բառերն են, իսկ 1826 եւ 1850 տպագիրներն ունեն զայն: Նոյնպէս ըստ նրա, 1826-ի էջ 286-ն իբր սկսում է -կուրբն բառամասով, իսկ իրականում՝ մի՛ խորք բառերով, նշուածը լինելով 1863 թ. տպագրի:

Առաւել անսպասելի էր, որ նոյն թիւրիմացութեան մէջ ընկնէր նաեւ Ե. Փէչիկեանը իր «Եգիպտոս Եղծ աղանդոցի բնագրի եւ տպագրութեան համեմատութիւն եւ քննութիւն» (Բագրատունի, 1928 կամ Փ¹ - 1929 կամ Փ²) ուսումնասիրութիւնը գրելիս: Օրինակ՝ Փ¹ 297-ում ասուած է, թէ Բագրատունեան⁶ (1826 թ.) տպ. էջ 8, տ. 3-ում ունենք խորիցէ, որ իրականում Վ²-ինն է, իսկ Վ-ն ու Վ¹-ն ունեն խորիցէ: Ծանօթութեան կարգով, սակայն յանուն ճշմարտութեան ասենք, որ այս ուսումնասիրութեան մէջ, ուր Ե. Փէչիկեանն առաջրել է Զմիւռն. տպ.-ի, Ա. Բագրատունու՛մ իբր 1826 թ. (իրականում 1863-ի) տպագրութեան, իբր Գ. Տ.-Յովհաննիսեանի սրբագրութեան (իրականում սրանից սրբագրուածի) եւ (ըստ Հր. Անատեանի եւ Միաբանի «Քննութեան») Մ 1097 Ձեռ-ի ընթերցուածները, 1-ինի, 3-րդի եւ 4-րդի որոշ ընթերցուածներ վրիպակներով է ընդօրինակել, իսկ ինչ որ ներկայացնում է իբրեւ Գ-ի սրբագրութիւններ, մասամբ թիւրիմացութիւն է, քանի որ Ս. Ղազարի գրադարանում կամ ձեռագրատանը Ե. Փէչիկեանը դեռեւս չէր յայտնաբերել բուն եւ իսկական Գ-ն եւ օգտագործել էր սրանից թերի սրբագրուած Գ¹-ը / Գ²-ը, որոնցից մէկը չունի վրիպակների ուղղման վերջին էջը:

ՆՀԲ-ն եւ Գ. Գալէմբարեանն օգտագործել են Վ-ն (1826 թ.):

Հանրայայտ է, որ գիտաքննական բնագրի տեսակէտից համարժէք են բնագրի լեզուի, քերականական ձեւերի եւ բառապաշարի մեծ ու փոքր, մասն ու խոշոր տարբերութիւնները: Ուստի երբ յայտնաբերեցինք, որ այդպիսիք կան Ս. Ղազարի մեր ընտրած տպ-ներում, հարկադրուեցինք դրանք արձանագրել տարընթերցումների մէջ: Լաւագոյնը մերթ մէկում է, մերթ միւսում: Դա յուշում է, որ Վ-ն, որ գրեթէ նոյնութեամբ Գ-ն է (իսկ սա երբեմն պահպանել է Զ-ի ոչ դասական հոլովածները), վերանայուել են Վ¹-ում, այսինքն 1850-ի տպագրում, որին շատ մօտիկից հետեւում է Վ²-ն, այսինքն 1863-ի տպագիրը, որի միայն տարբերութիւններն ենք նշում նախորդի համեմատութեամբ: Այլընթերցումների մէջ չեն նշուած օ ու և-ի տարբերութիւնը, կէտադրութեան կամ պարբերացման իւրապատկութիւնները:

4. Վենետիկեան 1926 թ. տպագրութիւն (Վ³)

Մանրամասն համեմատութիւնը ցոյց տուեց, որ սա համընթաց է Վ²-ին՝ այսինքն 1863 թ. տպին. սրա 10.9 խորիցէ = 8.3 (1863 թ.)¹⁴⁹: Հրատարակիչ Ե. Փէչիկեանը Փ¹ 290-ում յայտարարել էր, թէ իր կատարած սրբագրութիւնները «հազիւ տասնհինգի կը հասնին [առանց նշելու, թէ որո՞նք էին դրանք], որոնցմէ մաս մը գրաչարի վրիպակ էր արդէն»: Սակայն պարզուեց, որ փոփոխութիւնները աւելին են. որով ստիպուեցինք այս տպագրին էլ ծայրից ծայր համեմատել եւ նշանակել Վ-ի (1826) բաղդատմամբ ունեցած տարբերութիւնները, քանի որ դա վենետիկեան վերջին տպագրութիւնն է եւ դրանով իսկ մեծ կարեւորութիւն ունի ընթերցող ների համար:

5. Գ. Սաչատուրեանի հրատարակութիւն, 1951 թ. (Ս)

Զէինք կարող անտեսել այս տպագիրը: Երկի թարգմանիչները Մարիէան իր ծանօթագրութիւններում, Վ. Չալոյեանը (լուելեայն) եւ Ա. Ա. Աբրահամեանը (կիսալուելեայն) իրենց թարգմանութիւններում, Հր. Աճառեանի (եւ Միսթեանի) «Քննութեան» 1976 թ. վերահրատարակութիւնը ծանօթագրող Ա. Մադոյեանը եւ ուրիշներ ինչ-որ կարեւորութիւն են տուել սրան: Ինքը՝ հրատարակիչը, իր ներածութեան մէջ ցոյց է տուել, որ մասամբ ծանօթ է եղել բնագրային տեսական գրականութեանը. ուստի սպասելի էր, որ վենետիկեան Վ² տպագրութիւնից լուելեայն նրա արտատպած բնագիրը աւելի բարձր վիճակում լինէր: Արդարեւ Ե. Գուրեանի որոշ սրբագրութիւններ նշուած են էջատակում, թէեւ բնագրում վենետիկեանն է: Սակայն մանրամասն համեմատութիւնը պարզեց, որ սա մի անպիտան արտատպութիւն է, եւ չարաչար սխալուել են նրան վստահողները. ոչ միայն վրիպակալից է, այլ եւ բնագրից դուրս են ընկել բառեր ու տողեր: Նկատի առնելով այս բոլորը՝ նշեցինք Վ-ի նկատմամբ նրա ունեցած բոլոր տարբերութիւնները, թէեւ արտատպուած է Վ²-ից, որի 244.1-ի յերկրին վրիպակը ինքն էլ ունի էլ 122-ում: Զենք նշել նրա ներքին բաժանումները:

6. Փարիզեան քննական հրատարակութիւն, 1959 թ. (Մ)

Ձեռագրի համեմատութեամբ սրա ունեցած բոլոր տարբերութիւնները եւ առաջարկած սրբագրութիւնները, որոնք յատուկ նշումով առանձնացուած են, արձանագրել ենք մեր բնագրի էջատակերում, ինչպէս նաեւ նկատի առել նրա այն ծանօթագրութիւնները, որոնք բնագրին են վերաբերում:

Այս հրատարակութեան մէջ ե-ով են թե, եթե, միթե, երբեք, եւ Ե ու Ի լծորդութիւնների անցեալ անկատարի ձեւերը, բացի եզ. 3-րդ դէմքից: Ուղղագրութեան վերջին ձեւը չենք ընդունել, բայց եւ չենք նշել տողատակում որպէս այս հրատարակութեան այլընթերցուած: Զենք նշել նաեւ նրա ընդունած ու մեր դատապարտած և-ը. բարեբախտաբար չունի օ: Մեծատառ սկզբնագրով են Աստուած, Տէր եւ Առաքեալ (Պօղոս), որ աւելորդ էր նշել:

գ. Նկատի առնուած կամ անտեսուած մասնակի արտատպումներ եւ նրանց առանձնաշատկութիւնները

1. Նկատի առնուած մասնակի արտատպումներ

Հատուածային գրեթէ բոլոր արտատպումները կատարուած են վենետիկեան տպագրութիւնների մէկից: Սակայն նկատի ենք առել լուկ կարեւոր արտատպումների միայն այն ընթերցուածները, Վ-ի բաղդատմամբ, որոնք ծանօթագրուած են եւ պատահական վրիպակներ չեն, որովհետեւ այսպիսիք շատ են: Ահա այդ արտատպումները հրատարակիչների ազգանունների կարգով:

¹⁴⁹ Ինչպէս նաեւ սրա էջ 37, ն. տ. 4, էր անարար = 1863 թ. 33.13:

ա) Միւսներից կարեւոր է Վ. Առաքեալի «Գրաբարի հատընտիր»-ի (Երեւան, 1946, 43-97) հատուածների արտատպումը, որովհետեւ ըստ Հր. Աճառեանի «Քննութեան» տարբերութիւնները նշուած են ծանօթագրութիւնների մէջ: Սակայն նկատելի են նաեւ այնպիսիներ, որոնք տեղեկացուած չեն, ուստի եւ պատահական վրիպակներ կամ չպատճառաբանուած փոփոխութիւններ են. սակայն յանուն սկզբունքի միասնականութեան՝ նշել ենք բոլորը, նաեւ այս վերջինները: Պարզուած է, որ այս բանասերն էլ օգտագործել է վենետիկեան 1850 կամ 1863 թ. տպագրութիւնը. այսպէս՝ Չեռ. ի համաձայն էլ 48-ում ունի գրքօքն (Չեռ. աւ-ի փոխ. օ-ով), որի ծան. մէջ նշուած է, թէ տպ. ունի գրքօքն, որ Վ¹⁻²-ինն է, իսկ Վ-ն ունի գրքօքն: Անտեսեցինք այն դատապարտելի հանգամանքը, որ որոշ տողեր գիտակցաբար դուրս են թողնուած, տարբեր հատուածներ իրար են կցուած որպէս միմեանց շարունակութիւն, առանց զգուշացման, ինչպէս Թ. Թոռնեանի «Հատընտիր ընթերցուածք»-ում էլ է յաճախ:

բ) Կարեւոր են նաեւ Գ. Գալէմբարեանի «Նորագոյն աղբիւր»-ում արտատպուած հատուածները, որովհետեւ զուգարուած են Մեթոդի երկի՝ Գ. Գալէմբարեանի գրաբար թարգմանութեանը: Հատուածներում կան ըստ վերջինիս կատարուած ու ծանուցուած սրբագրութիւններ, սակայն կան եւ, որոնք տեղեկացուած չեն, կան էլ, որոնք գուցէ պարզապէս վրիպակներ են: Նկատի առնաք բոլորը, իսկ ինչ որ չենք նշել, ապա Վ-ի համաձայն է, բացի նրա երբեք-ից:

Առանց բացառութեան գրանցեցինք Գ. Գալէմբարեանի այն սրբագրական առաջարկները, որոնք դրուած են Մ. Շմիլի (եւ իր իսկ մասնակցութեամբ) կատարած գերմ. թարգմանութեան էջատակերում իբրեւ ծանօթագրութիւններ K ստորագրութեամբ: Այստեղ էլ նա օգտագործածել է (ինչպէս Շմիլը) Վ²-ը. այսպէս, էլ 153-ի 35-րդ ծան. մէջ նրա նշած չնշաւորաց վրիպակը (փխ շնչաւորաց) Վ² 209.7-ում է: Սակայն դատապարտելի է, որ նա լուկ որպէս իրենն է ներկայացրել բնագրային սրբագրութեան առաջարկներ, որոնք արդէն զմիւսնեան տպագրութեան մէջ են կամ Գ-ի կողմից սրբագրուած են:

գ) Հ. Ենսեմի արտատպած հատուածներում (տե՛ս մեր Մատենագիտք.) Վ-ի բաղդատմամբ կան տարբերակներ, որոնք ծանուցուած են էջատակում, սակայն կան էլ, որոնք յայտարարուած չեն. յամենայն դէպս առնուած են, բայց լռելեայն, Շմիլի գերմ. թարգմանութեան Գ. Գալէմբարեանի սրբագրութիւններից: Կան նաեւ պարզապէս վրիպակներ: Նկատի առնաք եւ նշեցինք բոլորը, անտեսելով առանց զգուշացման բաց թողնուած հատուածները:

դ) Թ. Թոռնեանի «Հատընտիր ընթերցուածք»-ի Ա հատորում (1891 թ., 2-րդ տպ.), արտատպուած հատուածներն իրենց ծանօթագրութիւններով առանձնապէս կարեւոր են, որովհետեւ ուրիշների համար նմուշ են դարձել, իսկ Սերոբ Լազարեանն ամբողջովին արտատպել է նրա ընտրած հատուածները: Այստեղ գիտակցուած սրբագրութիւններ շատ քիչ են, քննադատական վերաբերմունքը փոքր ինչ պակաս է: Իհարկէ, Վ-ի նկատմամբ նկատի առնաք միայն սրբագրութիւնները, որոնք նոտրատառ են: Բայց հակադիտական ենք համարում տարբեր հատուածների չծանուցուած կցումները, այդպիսով խզուած կապը հաստատելու համար փակագծերում երբեմն աւելացուած բառերի ընդմիջարկութիւնը, որոշ բառերի ու տողերի ցատկումները: Նրա բնագրային տարբերակները նշեցինք Վ-ի բաղդատմամբ: Նա քառակուսի փակագծերի մէջ է գրել Վ-ի ըստ իրեն ջնջելի տառերը: Միշտ ունի օ, երբեք չենք նշել կէտադրական տարբերութիւնները: Նա արտատպել է Ս. Լազարի Վ²-ից (1863 թ. տպ.), քանի որ էլ 3-ում ունի խորիցէ, ինչպէս Վ² 8.3-ում, իսկ Վ-ն ունի խորիցէ (ինչպէս Վ¹-ը):

ե) Լ. Խաչիկեանը «Բանբեր Մատենագարանի» 7-րդ համարում (1964 թ.) հատուածներ արտատպել է Լ. Մարիէաի քննական բնագրից, սակայն վրիպակներով: Նկատի առնելով յօդուածի կարեւորութիւնը, նշեցինք տարբերութիւնները, անտեսելով զուտ ուղղագրականները, ինչպէս աստուած փխ Աստուած, թէ կամ եթէ փխ թե կամ եթէ, բայերի անկատարում -էին փխ -էին եւ այլն:

զ) Եզնիկի երկի Համաբարբառ, Երեւան, 1972, կազմող՝ Ժ. Բ. Թոռնեան, խմբագիր՝ Ա. Ա. Աբրահամեան: Հակառակ տիտղոսաթերթում նշուած 1826 թ., այն կազմուած է Վ²-ից (1863 թ. տպ.), քանի որ ունի սրա բնագրային տարբերակները 1826 եւ 1850 թթ. տպագիրների համեմա-

տուժեամբ: Այսպես ունի 33.13-ի էր անարար-ը, 95.18-ի ցուցանի-ն, 115.10-ի որդուցն, 8.3-ի խորիցն-ն, 257.7-ի խորել-ը, 257.21-ի խորելդ եւ այլն: Խիստ վրիպակալից է, չհաշուած հատորի վերջում ուղղումների երկու էջը: Նաեւ պակասաւոր է, եւ «խրատք»-ի բառերը խառնուած են Եզնիկի երկի բառերին: Նկատի առանք միայն այն սրբագրութիւնները, որոնց առաջ նշուած է «ճիշտը», որով գիտակցուած ուղղումներ են եւ հաւանաբար պատկանում են խմբագրին:

է) Նճի-ի եզնիկեան վկայութիւնների մէջ նկատելի են բազմաթիւ վրիպակներ Վ-ի համեմատութեամբ, բառեր ու տողեր են բաց թողնուել առանց զգուշացման կամ բազմակէտի, սակաւ բացառութեամբ. յատուկ անունները փոքրատառ են: Պէտք է զգուշանալ Նճի-ի վկայութիւններից եւ դրանք ստուգելոց յետոյ միայն օգտագործել: Նշեցինք բնագրային կարեւոր տարբերութիւններ առանց սպառելու:

2. Անտեսուած մասնակի արտատպումներ

Անտեսեցինք Թ. Նազարեանի «Հաւաքածոյն յընտիւր մատենագրաց»-ի 2-րդ հատորում արտատպուած հատուածները (Կ. Պոլիս, 1870, էջ 94-125), որովհետեւ ստուգումը պարզեց, որ դրանք խիստ վրիպակալից են, կան էլ փոփոխութիւններ, որոնք երբեմն լաւ են, ինչպէս Քշնամույն (էջ 48) փխ Վ-ի Քշնամույն, Եհաս (էջ 100, տ. 4 ն.) փխ Վ-ի Էհաս եւ այլն: Բնագրի խաթարումներ են՝ մեր (էջ 95) փխ գմեր, բնակիչան (էջ 95) փխ Վ-ի գրնակիչան, յաղթութեան (էջ 98) փխ Վ-ի յաղթութեանն, չլիներ (էջ 100) փխ Վ-ի չլինէր եւ այլն: Դրանի որ այս բոլորը եւ բաց թողնուած բառերն ու տողերը առանց ծանօթութեան են, ուստի նախընտրեցինք ոչ մէկը չգրանցել:

Անտեսել ենք նաեւ վերելում մեր ներածութեան Դ գլխում յիշատակուած, բայց այստեղ չնշուած արտատպումները՝ իրենց փոփոխութիւնների չծանուցուած լինելու պատճառով, ինչպէս, օրինակ, Ն. Ադոնցինը (տե՛ս մեր Մատենագիտութեան մէջ), որ վրիպակներ ունի. այսպէս էջ 322-ում ունի սիբելոյ փխ սերելոյ, դիւաց, փխ դիւացն եւ այլն:

դ. Բանասերների սրբագրութիւններ եւ տարբերումներ

Իրենց քննական բնագիրը պատրաստելիս Մարիէն ու Մերսիէն բաւարարուել են ձեռագրով եւ լոկ վիճելի ընթերցուածների դէպքում են մէջ բերել ու համառօտակի քննարկել Վ² եւ Խ (1951 թ.) տպագիրների, Քրանսերէն եւ գերմաներէն թարգմանութիւնների համապատասխան մի քանի տեղերը, երբեմն միայն անդրադառնալով իրենց ծանօթ շատ աակաւաթիւ սրբագրութիւնների:

Մեր բնագիրը քննական եւ համահաւաք է: Զեռագրի տուեալներին աւելացրել ենք առաջարկուած այն բոլոր սրբագրութիւնները, որոչ կարեւոր յօդուածագիրներին կամ հեղինակների ուսումնասիրութիւնների մէջ հանդիպող կարեւոր տարբերումները, որ կարողացանք յայտնաբերել: Սակայն նկատի չենք առել Եզնիկի երկից կատարուած որեւէ մէջբերման բնագրային տարբերութիւնները, որովհետեւ իրօք պատահական շատ սխալներ են գործուել ընդօրինակութիւնների ժամանակ: Նկատի չենք առել նաեւ վենետիկեան 1-ին կամ 2-րդ հրատարակութիւնից կատարուած ամբողջական որոշ արտատպումներ (ինչպէս Փարիզում, Կ. Պոլսում եւ Թիֆլիսում)՝ իսկպպէս «չատ բան հրատարակչաց կամայականութեամբ փոխուած ըլլալուն» պատճառով:

Նշեցինք 1826 թ. տպագրի մի օրինակում Ա. Բագրատունու նշած սրբագրութիւնները եւ բառերի բացատրութիւնները, այն կոչելով Բագ.:

Նշուած են նաեւ Ն. Ն. Բիւզանդացու բոլոր սրբագրութիւնները, որ թողել է Ս. Ղազարի իր տպագիր օրինակում, իր պատրաստած կիսատ անտիպ բնագրում, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի իր վերամշակման մէջ եւ այլն:

ե. Եզնիկի սուրբգրային վկայութիւնների եւ ակնարկումների նշում

Երբ անհրաժեշտ է եղել համոզել հաւատացեալ կամ հերձուածող քրիստոնեաների, Եզնիկը վկայակոչել է Հին ու Նոր կտակարանների վարդապետութիւնը, մերթ լոկ ակնարկելով, մերթ էլ քիչ թէ շատ բառացի: Խնդիրն այն է մեզ համար, թէ նա որքան համոզիչ է նման դէպքերում, երբեմն հակառակուելով իր ժամանակի աշխարհիկ գիտութեանն ու բժշկութեանը: Բնագրագիտական տեսակէտից խնդիրն այն է, թէ նա ի՛նչ ձեւով է վկայակոչել լոկ ակնարկելով, թէ բառացի կամ յիշողութեամբ մէջբերելով: Այս հարցը յառնում է ոչ միայն հայ, այլեւ ուրիշ հին քրիստոնեայ մատենագիրների առնչութեամբ: Բանասէրները նկատել են, որ Եզնիկի վկայութիւնները մեծագոյն մասամբ չեն համընկնում «ընկալեալ» հայերէն հին թարգմանութեանը: «բացառաբար միայն կը նոյնանան Եզնիկի աստուածաշնչական մէկ երկու վկայութիւնները իր բովանդակ գործին մէջ»¹⁵¹: Դա առաւել եւս զարմանալի է, երբ, ըստ Կորիւնի, յայտնի է Ս. Գրքի հայերէն թարգմանութեան գործում նրա կատարած աշխատանքը Սահակ Պարթեւի հետ:

Եզնիկի ակնարկումները կամ աստուածաշնչական վկայութիւնները քննելով՝ արտայայտուել են որոշ բանասէրներ, ինչպէս Ե. Դուրեանը, Ժ. Կիւէնդէն, Ստ. Կոնէն, Մ. Մինասեանը եւ ուրիշներ, սակայն առանց լուծելու այդ կնճռոտ խնդիրը: Նկատել են, որ Եզնիկի վկայութիւնները մերթ նոյնանում են Գրքի յունարէն, ասորերէն եւ հայերէն թարգմանութիւններին, նոյնիսկ երբայական բնագրին, երբեմն Եփրեմ Ասորու գրուածքների մէջբերումներին, երբեմն էլ Տատիանի «Իիատեսարոն»-ին, բայց յաճախ էլ նրա մէջբերումները զարմանալիօրէն ինքնուրոյն կամ թերի են մնում: Այս բոլորը դուռ է բացել զանազան ենթադրութիւնների. «Եզնիկայ կոչումներն ի Ս. Գրոց մեր սովորական թարգմանութեանն չեն, այլ տարբեր օրինակէ մը, Եբրայականին մանաւանդ համեմատ քան թէ Նօթիանասից Յունականին. նաեւ Նոր Կտակարանը տարբեր թարգմանութիւն է»¹⁵². «Եզնիկ մեր սովորական օրինակէն կոչում է՛ ըներ, այլ միշտ Եբրայականէն» (ն. տ., էջ 340, ծան.): Եզնիկը «սովորաբար կոչումները մտքէն կամ յիշողութեանն էլ ընէ. եւ այսու լաւ կը մեկնուին Կորեան տուած տեղեկութիւններն, թէ Եզնիկ ի՛նչպէս ստացած է այս հմտութիւնը»¹⁵³: Հետեւեալ դիտողութիւնը վերաբերում է Եզնիկի աղբիւրներին. հայ առաջին թարգմանիչները «ասորի կամ յոյն եկեղեցական Հայերու գործերը թարգմանելու ատեն Պէշիթոյէն կամ Նօթիանասիցէն առնուած վկայութիւնները կը պահեն նոյնութեամբ՝ հեղինակին մէջբերումներուն համաձայն»¹⁵⁴:

Դրանի որ իր ժամանակ սովորութիւն չէր, Եզնիկը յանուանէ չի նշել Ս. Գրքի մէջբերուած տեղերը, երբեմն միայն գրելով Գիրք կամ Գիրք, «ասէ առաքեալ» (Պօղոս), «Տէր մեր», (Աւետարան), «աստուածական բարբառն» (ընդհանուր) եւ այլն: Սակայն բանասէրներն այս ուղղութեամբ որոշ աշխատանք կատարել են տեղեր նշելով Զմիւռնիայի տպագրութեան մէջ, գերմաներէն, Քրանսերէն եւ հայերէն թարգմանութիւնների մէջ, թէեւ թերիներ ու բացայայտ սխալներ էլ կան այդ նշումների մէջ: Մենք երախտագիտութեամբ օգտուել ենք բոլորից: Սակայն, ի տարբերութիւն նրանց, Ս. Գրքի (վենետիկեան) 1860 թ. հրատարակութիւնից (Ա. Բագրատունի) եւ Պոլիս, 1895 թ., քաղել ենք այն տողերը կամ բառերը, որոնք այս կամ այն չափով համապատասխանում են Եզնիկի սուրբգրային ակնարկումներին կամ վկայութիւններին: Դրանք իրենց բնագրով մեր ծանօթագրութիւնների բաժնում են, իսկ տեղերն ամփոփուած են վերջում: Ինչպէս յայտնի է, չունենք հայերէն Գրքի գիտական եւ քննական հրատարակութիւն. ուստի բնագրային տարբերութիւններ կան հիմնական երեք հրատարակութիւնների մէջ (Յ. Զօհրապեան, Ա. Բագրատունի, Կ. Պոլիս 1895 թ. կամ Մ. Գարագաշեան), տարբերութիւններ, որոնք ձեռագրերում իսկ են: Այս լուրջ հանգամանքը եւս, ինչպէս նաեւ Եզնիկի երկի բնագրի զարաւոր մասնակի խաթարումը ընդօրինակութիւնների ընթացքում պէտք է նկատի առնել Եզնիկի վկայութիւնները քննելիս:

¹⁵¹ Դուրեան Ե., Նկատողութիւններ, էջ 368-369:
¹⁵² Յ. Հիւնքեարպէյէնտեան, Ստուգաբանական, էջ 213, ծան.:
¹⁵³ Ս. Վեբեր, Եզնիկայ եղծ կամ Ընդդէմ աղանդոց, ՀԱ, 1898, էջ 202:
¹⁵⁴ Ե. Դուրեան, ն. տ., էջ 367: - Նորայր Ն. Բիւզանդացին իր Բ²-ում «վկայութիւն Գրոց խնդրելիք» վերնագրի տակ բերել է սուրբգրային 11 մէջբերում, որոնց միայն մէկի աղբիւրն է նշել, իսկ կազմած անտիպ բնագրի կիսատ սեւագրում եւ մաքրագիր օրինակում ասել է միւսների տեղերը էջատակերում:

Եզնիկի երկի բնագրում չակերտների մէջ ենք առել Գրքի բառերը, նոյնիսկ դրանք, որ այսօր չկան մեր Գրքում: Եզնիկը սուրբ գրքերի այս կամ այն գլխի այս կամ այն տունից կամ համարից երբեմն բառեր է միայն առել ու համադրել իր խօսքի մէջ. նման դէպքերում վկայութիւնների մէջ բազմակէտեր ենք դրել:

գ. Երկին տրուած վերնագրեր եւ մերը

Երկը Մ 1097 ձեռագրում անվերնագիր է, եւ ըստ Գ. Տ.-Յովհաննիսեանի սրբագրած տպագրի, անվերնագիր է եղել նաեւ զմիւռնեան ձեռագրում, որոնք միայն հեղինակի անունն ունեն: Եզնիկը հաւանաբար մի անուն տուել էր դրան, որը ձեռագրի յաջորդական գրչագրութիւնների ընթացքում դուրս է ընկել, քանի որ «Ակամայ աղաւաղումներ ալ անհնար է որ պակսին գրողներու [գրիչներ] անմտադրութեամբ կամ նաեւ անհոգութեամբ, սխալ ենթադրութեամբ գրոց վերնագրերը փոխելով կամ ուղղել կարծելով, վերջապէս նաեւ ժամանակին եւ այլ պարագայից օժանդակութեամբ ջնջելովն» (Տաշեան Յ., Հետազոտ. պատմ. = Ծ՝, էջ 8): Եզնիկի երկը միակ անվերնագիր գործը չէ. վերնագիր չունի Մեթոդի երկը:

Երկի բովանդակութեան իրենց ըմբռման համաձայն երեք հրատարակիչ եւ զանազան բանասէրներ առաջարկել են տարբեր վերնագրեր. ահաւասիկ դրանք ժամանակի կարգով, Մ 1097 եւ Զմիւռ. ձեռագրերի խորագրերը ներառեալ, որոնց յապաւումները բացել ենք, եւ որոնց բառերի սկզբնատառերի փոքրատառ կամ մեծատառ լինելը երկորդական է.

1. «Երանելոյն եզնկայ վարդապետի» (Լուսեր գրչի ձեռքով), «Երանելոյն եզնկ վարդապետին կողբացոյ» (սրբագրողի ձեռքով), Զեռ. Մ 1097, էջ 187 բ, 1280 թ.:

2. «Գիրք ընդդիմութեանց», Յ. Նալեան՝ 1-ին հրատարակող, 1763, թ., տիտղոսաթերթը տե՛ս վերեւում, իսկ բնագրի 1-ին էջում ունի նաեւ «Երանելոյն եզնկայ Կողբացոյ [. . .] Արտադրութիւն ընդդէմ զանազան հերձուածոց»: – Կարծիքներ. Ադոնց Ն., «Բագմավէպ» 1928 թ., էջ 199բ՝ «Թուում է թէ Եզնիկի առաջին հրատարակիչ Աբրահամ իրականում Յ. Նալեանն է վարդապետը աւելի մօտ է խնդրական վերնագրին: Միայն թէ նոյն միտքը պէտք էր արտայայտել Եզնիկեան բառերով եւ նորա ճաշակով: Եղծ բառը հերքման իմաստով նորալուր է եւ խորթ Եզնիկին, ինչպէս դիտել է տուել Հ. Գալէմբարեան»: Ա. Լազիկեան, «Հայկ. նոր մատեն.», էջ 549, ծան. 1՝ «Ընդդիմութիւնք» բառը դասական չէ:

3. «Երանելոյն Եզնկայ վարդապետի Կողբացոյ», 1784 թ., Գ. Տ. Յովհաննիսեան, զմիւռնեան իր սրբագրած տպագրի էջ 1-ում, նրա ձեռքով, ըստ իր տեսած Զ-ի. այս խորագիրը տարբեր է Զեռ-ի երկու խորագրերից (տե՛ս 1):

4. «Եղծ աղանդոց», 1826 թ., Ա. Բագրատունի՞, 2-րդ հրատարակիչ: Այս վերնագիրը պահպանուել է Ս. Լազարի, Փարիզի, Պոլսի եւ Թիֆլիսի արտատպութիւնների տիտղոսաթերթում: – Կարծիքներ. Յ. Նալեանի եւ Ա. Բագրատունու՞ «Երկու վերնագիրներն ալ կամայական են, իսկ ընդդիմութիւնք կամ եղծ բառերը դասական չեն» (Ա. Լազիկեան, «Հայկ. նոր մատեն.», էջ 549, ծան. 1): Ն. Ադոնց, «Բագմավէպ», 1928, էջ 198բ՝ «Արտէս Բագրատունին, Վենետիկի հրատարակութեան նախաձեռնողը, յարմար է դատել անուանել Եղծ աղանդոց»: – «Յակոբ Նալեան Պտրայն բոլոր գլխակարգութիւնները որ հերքումի շուրջ են՝ դրած է «Եղծումն» կամ «Եղծանէ». ասկից ազդուած պիտի ըլլայ անշուշտ Բագրատունի՞ կուռ ու գեղեցիկ ձեւի վերածելով» (Ն. Փէլիկեան, «Բագմավէպ», 1928, էջ 297):

5. «Եզնիկ: Երանելոյն եզնկայ կամ եզնկայ կողբացոյ» [. . .] գիրք յեղծումն հին աղանդոց հեղինացոց, եւ դեմի պարսից, եւ մոլորութեան մանիքեցոց», 1863 թ., ՆՀԲ, հատ. Ա, էջ 11ա: – Կարծիք. «Հիներէն՝ Բագրատունիի հետեւող կրնան համարուիլ Հայկազեան Բառարանի հեղինակները, կոչելով զայն [. . .], էջը վրիպակով նշուած է 21, փխ 11]: Արդի Բանասէրները դեռ համաձայն չեն մէկ անուան մը շուրջ, շիտակն ըսելով շատ համակրութիւն ալ չունին Զմ. կամ Բագրատունեան կոչումներուն» (Ն. Փէլիկեան, «Բագմավէպ», 1925, էջ 296):

6. «Ընդդէմ Աղանդոց», 1866, Թ. Թոռնեան եւ Վիեննայի Մխիթարեաններ, քննադատելով վերնագրի «Եղծ» բառն իբրեւ ոչ դասական: – Կարծիք. Ն. Ն. Բիւզանդացին «Հայկական բառաբանութիւն», 1880, էջ 38 եւ «Քննաւէր», 1-ին պրակ, 15 մայիս 1187, էջ 8, գրել է: «ԶԵզնկայ մատենիկն Եղծ աղանդոց կը կոչեն Վենետիկոյ Մխիթարեանք: Կարծեմ լաւագոյն է ըստ Վիեննայի Մխիթարեանց կոչել Ընդդէմ աղանդոց»:

7. «Ճառք Ընդդէմ Աղանդոց» է կոչել Ն. Ն. Բիւզանդացին Եզնիկի երկը 1888 թ. օգոստոսին Պոլսից ստացած իր սեփական օրինակի էջ 5-ի հանդիպակացում, իր պատրաստած բնագրի կիսատ սեւագրում (Բ՞) եւ մաքրագրութեան նոյնպէս կիսատ բնագրում (Բ՞), իր «Կորիւն վարդապետ եւ նորին քարգմանութիւնք» աշխատութեան մէջ (էջ 18, ծան. 1) եւ իր բոլոր գործերում, նկատի առնելով անշուշտ, որ Եզնիկը երեք անգամ գործածել է նախ բառն իր երկում, նախապէս իր ասածները նկատի առնելով:

9. «De Deo» (հայերէն «Յաղագս Աստուածոյ» կը լինէր), 1924, Լուի Մարիէս, Le De Deo աշխատութեան մէջ, այս նոր վերնագիրը պատճառաբանելով էջ 22 եւ 31-ում: – Կարծիքներ. Ա. Մէյէ, «Հայագիտ. հետազոտ.», էջ 644՝ այդ վերնագիրը կարող է սխալ պատկերացում տալ երկի մասին»: Ն. Ադոնց, «Բագմավէպ», 1925, էջ 198 բ՝ «Մարիէսի ընտրութիւնը եւս անյաջող է ու բռնազբօսիկ»: Ն. Փէլիկեան, «Բագմավէպ», 1928, էջ 297՝ «Շատ բռնազբօս եւ անհիմն է այդ կոչումը. այո՛, կայ Յաղագս Աստուածոյ մաս մ՛ալ, սակայն սկզբնաւորութիւնը միայն [. . .]: Ո՛վ որ գիտակ է Եզնիկի նիւթին եւ դիտման՝ կ՛իմանայ թէ որքան անտեղի է այդ անունը»:

10. «Ճառք յանդիմանութեան», Ն. Ադոնց, «Բագմավէպ», 1925, էջ 199–200. «Հաւանական կը լինէր կարծել, որ Եպիփանի հետեւողութեամբ Եզնիկն եւս իր գործն անուանէր Յանդիմանութիւնք հերձուածոց կամ աղանդոց [. . .]: Մի տեղ Եզնիկն իր գրութիւնը անուանում է Ճառ [. . .]: Իրաւացի կը լինէր կոչել Եզնիկի գործը Ճառք յանդիմանութեան [. . .]: Եզնիկի ապագայ հրատարակչին կարող էինք յանձնարարել ՃԱՌԻ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԵԱՆ գլխագիրը»: – Կարծիք. Ն. Փէլիկեանն այս առնչութեամբ յիշեցրել է, որ Յ. Նալեանն արդէն կիրառել էր նախ-ը, եւ Գ. Գալէմբարեանը (նրանից առաջ Բ. Սպենեանը)՝ Յանդիմանութիւնքը, որով, գրել է նա, «Զիք ինչ նոր ընդ արեգակամբ» («Բագմավէպ», 1928, էջ 297): Նկատել պիտի տանք, որ «Ճառք յանդիմանութեան» համադրութիւնը նորութիւն էր:

11. «Ընդդէմ հերձուածոց» կամ «Ընդդէմ աղանդոց», Ն. Փէլիկեան, «Բագմավէպ», 1928, էջ 297, «Լաւագոյն կոչումը, մեր կարծիքով, Ընդդէմ հերձուածոց կամ աղանդոցն է, քանի որ այդ տիտղոսով են Գ, Դ, Ե դարու Ս. Հարց գրեթէ բոլոր նման երկերը, ինչպէս յայտնի է»: Ծե՛ս վերեւում 6-րդ անուանակոչումը:

12. «Հակաճառութիւն (կամ Յանդիմանութիւն) աղանդոց փիլիսոփայից եւ հերձուածողաց եւ քէչին պարսից», Մ. Աբեղեան, 1944 թ., Երկեր, Գ, էջ 147. «Եզնիկի այս աշխատութիւնն իսկապէս մի «հակաճառութիւն» կամ «յանդիմանութիւն» է, եւ պէտք էր կոչել այն՝ «Հակաճառութիւն (կամ յանդիմանութիւն) աղանդոց փիլիսոփայից եւ հերձուածողաց եւ քէչին պարսից» [Մարկիոնականներին ընդգրկելով, երեւի, «հերձուածողաց» մէջ]: Այդպէս անուանել են 5-րդ դարում նման գրուածքները, որոնք ուղղուած են եղել «ոչ ուղիղ» մտածող հակաակորդների ուսմունքների դէմ: Եւ Եզնիկն իր երկի մասին խօսելիս գործածում է «ճառել, ճատ, յանդիմանել» բառերը»:

13. «Գիրք հերքմանց (Յաղագս բարուոյ եւ չարի)», 1968 թ., Վ. Զալոյեան, երկի ուսման թարգմանութեան անուանաթերթում. իբր, այս վերնագիրը համեմատօրէն աւելի կատարեալ ձեւով է արտայայտում գրքի բովանդակութիւնն ու էությունը եւ Եզնիկի ուսմունքը աստուածաբանութեան վերածելուց գերծ է (անդ, էջ 29):



Մեր ընտրած վերնագիրը. ձեռագրային տուեալի բացակայութեան դէպքում առաջարկուած բոլոր վերնագրերը վիճելի են. ուստի պայմանականօրէն, առանց հեղինակայինը յայտնաբերած լինելու յաւակնութեան, ցարդ առաջարկուածներից ընտրում ենք Նորայրի ընդունած [«Ճառք ընդդէմ աղանդոց»]-ը, որի առաջին բառը մի քանի անգամ է գործածուել երկում, եւ որով Եզնիկը բնութագրել է իր ասածները:

Է. Մեր քննական բնագրի աղբյուրները եւ պատրաստման սկզբունքները

1. Բնագրային հիմքը եւ յարակից աղբյուրները

Ինչպէս ասել ենք, բնագրի հիմքը Երեւանի Մատենադարանի Թ. 1097 ձեռագիրն է, իսկ յարակից աղբյուրներն են՝ ցարդ մեր ներկայացրած եւ հիմնական համարած հրատարակութիւնները, հատուածային կարեւոր արտատպումները, Նորայրի պատրաստած կիսատ սեւագիրը եւ մաքրագիրը բնագիրը, ինչպէս նաեւ ուրիշների եւ մեր առաջարկած բնագրային փոփոխութիւնները կամ «սըրբագրութիւնները», ըստ որում բոլոր տուեալները կամ բնագրում են, կամ այլընթացումների բաժնում, կամ ծանօթագրութիւնների մէջ, յաճախ էլ երեքում միաժամանակ: Յամենայն դէպս ոչ ձեռագրային կամ փոփոխութեան ենթարկուած ընթերցումները բնագրում, եթէ ներմուծել ենք, առնուած են քառակուսի փակագծերի մէջ [], կամ շղատառ են:

Մեր ներածութեան գլ. է-ում եկանք այն եզրակացութեան, որ Եզնիկի երկը ցարդ ծանօթ է նախ՝ զմիւռնեան չնկարագրուած ձեռագրով, որի բնագիրը յայտնի է Գ. Տէր-Յովհաննիսեանի զմիւռնեան տպագրի մի օրինակի սրբագրութեամբ, ըստ այսմ կատարուած վենետիկեան տպագրով, եւ ապա՝ 1904 թ. սկսած, Երեւանեան Թ. 1097 ձեռագրով, որի բնագիրը յայտնի է փարիզեան 1959 թ. տպագրութեամբ: Այս երկու ձեռագրերի եւ մեր յարակից աղբյուրների փոխյարաբերութիւնը եւ յաջորդականութիւնը կարելի է պատկերացրել հետեւեալ ձևով.



2. Երեւանեան ձեռագրի արտացոլումը մեր բնագրում եւ փոփոխութիւններ

Մեր քննական բնագիրը հիմնականում այս ձեռագրին է: Նրա էջերի համարները դրուած են մեր բնագրի ձախ լուսանցքներում, իսկ ամեն մի նոր էջի առաջին տառի տեղը բնագրում ցոյց է տրուած մէկ քառակուսի փակագծով [: Միանգամայն հասկանալի է, որ մեր բնագիրը ձեռագրի պատճէնը չէ. հրատարակութեան այս եղանակը կիրառուած է, բայց մենք կտրականապէս մերժում ենք, կամ էլ հրատարակութիւնը քննական չէ: Զեռագրի բնագրում արել ենք հետեւեալ փոփոխութիւնները:

ա) Զեռագրի միահետ գրութեան բառահատում

Ասել ենք, որ Թ. 1097 ձեռ-ում բառերը անջատուած չեն, սակաւ բացառութիւնները չհաշուած. պարզ է, որ բառերն անջատեցինք: Կարող են լինել վիճելի բառահատումներ. օր.՝ կարէ, կամ կար է, մարթէր կամ մարթ էր, վստախիցեմք կամ վստախ իցեմք եւ այլն: Անհրաժեշտութեան դէպքերում ձեռ-ի անանջատ գրութիւնը յիշատակում ենք այլընթացումների բաժնում կամ ծանօթագրութիւնների մէջ:

բ) Զեռագրում եղած սրբագրութիւնների հաշուառում

Ասել ենք, որ ձեռ-ում նկատելի են գրիչ Լուսերի, մի սրբագրիչի եւ, երբեմն, մի այլ անձի սըրբագրութիւններ: Առաջին երկու կարգի սրբագրութիւնները, որոնք խելացի եւ բանիմաց են, անվերապահօրէն ընդունել ենք, իսկ երրորդը՝ քննադատաբար կամ մերժել ենք, յաճախ դէպս դրանք միշտ արձանագրելով մեր ծանօթագրութիւնների մէջ:

գ) Զեռագրի յապաւումների բացում

Զեռագրում յապաւումները շատ չեն, ուրիշ ձեռագրերի հետ համեմատած: Առատ են, համեմատաբար, -ուքիւն վերջածանցով գոյականների յապաւումները, եւ այն էլ առանց կանոնաւոր եւ հետեւողական սկզբունքի, կան էլ, որոնք լրիւ են գրուած: Բոլոր յապաւումները բացել, ամբողջութեամբ ենք գրել, թէեւ միշտ անառարկելիօրէն վստահ չենք, որ նշուած վերացական անունները ճիշտ կամ հեղինակի գրած ձեւով ենք մեկնաբանել: Յամենայն դէպս բոլոր յապաւումները նշել ենք այլընթացումների բաժնում, իսկ ինչ որ այստեղ յիշատակուած չէ, ձեռ-ում էլ լրիւ է գրուած, թէեւ երբեմն այսպիսիներ էլ ենք մատնանշել: Երկի փարիզեան 1959 թ. քննական հրատարակութեան մէջ ձեռ-ի յապաւումները ամբողջ գրելով են կշատակում, եւ նրանց «պատիւ» նշանը անտեսուած է (ինչպէս Հր. Աճառեանի «Քննութեան» մէջ երբեմն), շատերն էլ անտեսուած են:

դ) Զեռագրի բնագրի համակողմանի բարելաւման անհրաժեշտութիւն

Գիտաքննական հրատարակութեան հակառակ խնդիրներից մէկն այն է, որ ուշ միջնադարեան ձեռագրով յայտնի դարձող դասական բնագիրը հնարաւորին չափ վերադարձուի իր սկզբնական վիճակին: Արդարեւ, եթէ երկը 5-րդ դարի առաջին կեսից է, իսկ ձեռագիրը՝ 1280-ից, ապա անկարելի է, որ բնագիրը եթէ ոչ տառացիօրէն, այլ գոնէ բառացիօրէն անաղարտ մնացած լինի յաջորդական եւ դարաւոր ընդօրինակութիւնների ընթացքում: Բնագրի բարեւորման աշխատանքն ընդգրկում է ուղղագրութիւնը, քերականութիւնը եւ իմաստը: Դա շատ դժուարին, նուրբ եւ անչափ պատասխանատու բանասիրական գործ է, առաւել եւս եթէ երկը միայն մէկ ձեռագրով է յայտնի, ինչպէս Եզնիկինը, իսկ զմիւռնեանը չենք տեսել եւ չենք էլ կարող Գ-ին լրիւ վստահել իրել ձեռագրի: Ուստի մեծագոյն զգուշութիւն է անհրաժեշտ: Տուեալ դէպքում մենք դիմեցինք նոյն ինքն երկին, ուր նոյն բառի ուղղագրութեան եւ քերականութեան տարբերութիւններ են նկատուած: Դիմեցինք դասական գրաբարով գրուած, առաւել եւս թարգմանուած գրականութեան, որի գործերից շատ քչերն են արժանացել քննական հրատարակութեան, եւ եղածներն էլ քննադատական զգուշութիւն են թելադրում: Դիմեցինք դասական գրաբարի ուղղագրութեանն ու քերականութեանը, որքանով սրանք յայտնի են, որպէսզի այս կամ այն բարելաւումն առաջարկենք եւ հաստատենք (գոնէ փորձենք հաստատել) ծանօթագրութիւնների միջոցով: Մեր խորին համոզմամբ շատ բան կայ Եզնիկի երկի ձեռագրում, որ կարօտ է փոփոխութեան՝ ուղղագրութեան, քերականութեան եւ իմաստի տեսակէտից: Սակայն միակ ձեռագրի առկայութեան դէպքում յանդուժութիւն, արուեստական, անարժանահաւատ, «կրկին գրուած» կը համարուէր, եթէ ուրիշների եւ մեր բոլոր փոփոխութիւնները, գոնէ բոլոր «ճիշտ» թուացողները մտցնէինք բնագրի մէջ, իհարկէ []-ի մէջ առած եւ տեղեկացրած կամ շղատառ շարուած: Ընթերցողն անուշտ ազատ էր դրանք ընդունել կամ չընդունելու: Վարագ Առաքելեաններ այդպիսի բնագրի մասին էլ կը գրէին հետեւեալը, ինչպէս Մարիէսի եւ Մերսիէի քննական տպագրի մասին. «Մարիէսը գրեթէ ամեն մի չհասկացած, ժամանակին վէճի առարկայ դարձած նախադասութեան, բառի, արտայայտութեան միջամտել է, աւելացրել, պակասացրել

է, յարմարացրել իրեն»¹⁵⁵: Ուստի խորապէս համոզուած լինելով հանդերձ, որ Եզնիկն այնպէս գրած էր լինի, ինչպէս այսօր կարողու՞մ ենք 1280 թ. Ձեռ-ում, բնագրին եւ բնագրում մեր փաստացի միջամտութիւնները հասցրել ենք նուազագոյնի նուազագոյնին, մեր նախընտրանքը վերապահելով այլընթացումների եւ ծանօթագրութիւնների բաժիններին: Շատ դժուար, յաճախ էլ անկարելի է համոզել մարդկանց, որոնք պահպանողական են եւ տարիներ շարունակ Եզնիկ են կարդացել գոյութիւն ունեցող տպագիրներով (բացի փարիզեան քննականից, որ տարածուած է), թե՛ ձեռագրի յայտնէ ընթերցումն արատաւոր է: Կրկնում ենք. ընթերցողն ազատ է, միանգամայն, ընդունելու կամ մերժելու մեր բնագրային առաջարկը, որ շատ անգամ ուրիշներին էլ է կամ նրանցն է, որ բնագրի մէջ չենք մտցրել ոչ իսկ յատուկ ձեռով, եւ Եզնիկից այդ տեղը մէջբերելիս անտեսելու բնագրային փոփոխութիւնը եւ կրկնելու արդէն գոյութիւն ունեցող տպագրի կամ Ձեռ-ի ընթերցումը, որ մեր այլընթերցումների բաժնում է արձանագրուած կամ բնագրում է թող նուա՞ծ:

ե) *Ձեռագրի բնագրի պարբերացում*

Ձեռ-ում, ուր գրութիւնը միահետ է, պարբերոյթներ չկան, որոնք, սակայն, անհրաժեշտ են: Եղած տպագիրներից երեք գլխաւորները՝ զմիւռնեանը (1763 թ.), վենետիկեանը (1826 թ.) եւ փարիզեան քննականը (1959 թ.) ունեն իրենց սեփական պարբերացումը, ըստ հրատարակչի հասկացողութեան. երեքից ամենամասնատուածը, թերեւս չափազանցութեան աստիճանի, երրորդն է: Մեր բնագիրն էլ ունի իրը, ըստ բնագրի մեր ընկալման, որ գուցէ լաւագոյնը է:

զ) *Ձեռագրի բնագրի ուղղագրական փոփոխութիւնները*

Ուղղագրութեան մէջ ենք առնում նաեւ կէտադրութիւնը եւ առողանութեան նշանները:

1) *Կէտադրութիւն եւ առողանութեան նշաններ*

Ձեռագրի կէտադրական նշանները, որ իր տեղում յիշել ենք, շատ յաճախ եւ մեծագոյն մասամբ կամայական են ու չեն համապատասխանում ո՛չ բնագրի իմաստին, ո՛չ էլ կէտադրութեան այսօրուայ կանոններին: Ուստի բնագրում կէտադրութեան եւ առողանութեան նշանները դրեցինք ըստ երեւանում գործող կանոնների, անհրաժեշտութեան դէպքում միայն յիշատակելով ձեռագրայինները եւ տպագիրներին: Նախօրօք ընդունում ենք. կարող են լինել վիճելի կէտեր, եւ ընթերցողից խնդրում ենք ջնջել իր չհաւանածը:

2) *Յատուկ անունների գլխագիր սկզբնատուերը*

Բացառութիւնները չհաշուած՝ այսօր յատուկ համարուած անունների սկզբնատուերը փոքրատառ են Ձեռ-ում, զմիւռնիայի տպագրում եւ սրա՝ Գ. Տէր-Յովհաննիսեանի սրբագրութեան մէջ, իսկ Վենետիկի եւ Փարիզի հրատարակութիւնների մէջ գրութիւնն աւելի լաւ է, սակայն առանց նոյն սկզբունքի կիրարման: Մենք բոլոր յատուկ անունները կամ մեր յատուկ համարածները գրեցինք գլխագրով: Այլընթերցուածների բաժնում տեղ չհանելու համար այս խնդրում ՁԳ-ն դասեցինք ՎՄ-ի շարքը, որոնք գլխագիր ունեն տուեալ դէպքում. սա էական է իմաստի համար:

Ձեռ-ում գլխագրով սկսող բառերը նշել ենք այլընթերցուածների մէջ, որպէսզի գրչութեան մասին գաղափար տանք:

3) *Ձեռ-ի և նշանագրի փոխարինումը եւ-ով բնագրում*

Ամենուրեք գրեցինք եւ, եւ ոչ թէ և, ի տարբերութիւն տպագիրների եւ Ձեռ-ի. ոչ ոք չի առարկի սրան, քանի որ և տառանշանը մերոպեան այբուբենում չի եղել սկզբնապէս: Այս փոփոխութիւնը անհրաժեշտ չհամարեցինք ամեն անգամ արձանագրել այլընթերցումների մէջ:

¹⁵⁵ Վ. Առաքելեան, Եզնիկի բնագրի վերականգնման հարցը, ՊՀ, 1985, 4, 202: Իր անարդարացի եւ չափազանցուած, ըստ էութեան էլ սխալ դատումով այս բանասէրն ապացուցում է, որ չի ըմբռնել Լ. Մարիէի աշխատանքի էությունը:

4) *Ձեռ-ի աւելորդ -ը-երի վերացում, պակասող յ-երի վերականգնում*

Ձեռ-ում առատ են անհարկի ը-երը. բնագրում դրանք վերացրինք, բայց այլընթերցումների մէջ դրեցինք Ձեռ-ի բնագիրը, տողադարձի աւելորդ ը-ի տեղը ցոյց տալու համար գործածելով ենթանման (-), որ Ձեռ-ում չկայ: Իսկ յատկապէս ա եւ ո ձայնաւորներից յետոյ Ձեռ-ում պակասող յ-ն վերականգնեցինք []-ի մէջ կամ չղատառով եւ այլընթերցումների մէջ դրեցինք Ձեռ-ի ընթերցումը, ինչպէս ուրիշ տառերի դէպքում:

3. *Որոշ բառերի ուղղագրութեան առաջարկներ*

Յայտնի է, որ դասական գրաբարի ուղղագրութեան վերաբերող վիճելի շատ կէտեր կան, քանի որ չունենք 5-րդ կամ 6-րդ դարից մնացած ձեռագրեր: Յայտնի է նաեւ, որ Նոյնիսկ երկաթագիր աւետարանների ուղղագրութիւնն ամբողջովին դասական չէ, բայց դրանք եւ այլ հին ձեռագրեր, մանաւանդ հին կրկնագրեր պահպանել են հատ ու կենտ արտասովոր թուացող բառաձեւեր, որոնք ամենայն հաւանականութեամբ աւելի հին են, ինչպէս այդ փխ այլ, մեւս փխ միւս եւ այլն: Այստեղ էլ դժուար է համոզել, որ «տարօրինակներն» են հնագոյնները, որովհետեւ լեզուի պատմութեան ընթացքում հինն է նորացել, եւ ոչ թէ հակառակը. դ-ն է յ դարձել նախ արտասանութեան եւ ապա գրութեան մէջ:

Եզնիկի երկի այժման Ձեռ-ի ուղղագրութիւնը համեմատաբար եւ ընդհանուր առմամբ քիչ է աղաւաղուել, եւ որոշ սխալներ հետուութեամբ են սրբագրելի, եւ սրբագրուածը բոլորից է ընդունելի: Միւս կողմից մենք համոզուած ենք, որ որոշ բառերի ուղղագրութիւնը միջնադարեան է, եւ անհրաժեշտ է վերականգնել դասականը: Սակայն այս դէպքում էլ մեղադրանքները չէին ուշանայ այլեւայլ պատճառներով, որոնցից մէկն այն է, որ հենց վիճելի ուղղագրութիւն ունեցող բառերի ստուգաբանութիւնը միանգամայն յստակ չէ ըստ Հր. Աճառեանի «Հայերէն արմատական բառարան»-ի կամ նորագոյն ստուգաբանական փորձերի: Այս պայմաններում նախընտրեցինք նոյնութեամբ թողնել Ձեռ-ի ուղղագրութիւնը եւ մեր առաջարկը գրանցել այլընթերցումների կամ ծանօթագրութիւնների մէջ: Շատ վիճելի է յատկապէս յարադիր բարդ բառերի ուղղագրութիւնը. անջատ, թէ միասին գրել երկու բաղադրիչները՝ զիւրից թէ զիւրից, որչա՞փ կամ ո՞րչափ թէ ո՞ր չափ, յայնժամ թէ յայն ժամ, եւթ թէ եւ եթ եւ այլն: Մենք նախընտրում ենք անջատ գրութիւնը: Այսպէս մենք կը գրէինք. այդ (չաղ կապ եւ դերանուն՝ ուղիղ եւ թեք հոլովներում), այդ ազգ, այդ եւ այդ, բիւի, եթ-ե, եւ եթ, երբեք, զի՞ արդ, ընդ է՞ր, թ-ե, թ-ե պէտ եւ, հիւղէ (եւ ոչ հիւղն), գայդ, թոյդ, նշոյդ, մեւս, մեւս անգամ, յայն ժամ, յոր ժամ, նա՛ եւ, Որմզդ (Ձեռ. որմիզդ, որմըզդ եւ որմզդ), ո՞ր չափ (որ չափ). եւ այլն: Բնագրում գրել ենք միայն եթ-ե, թ-ե ու երբեք, քանի որ Ձեռ-ում ե-ն ու է-ն յստակ չեն:

4. *Քերականական սրբագրութիւնների առաջարկներ*

Կարծում ենք, որ քերականութեան տեսակետից էլ դասական բնագրերն անփոփոխ չեն պահպանուել միջնադարեան հայերէն ձեռագրերում, եւ այստեղ էլ պէտք է զգուշութեամբ կատարուեն սրբագրութիւններ, ինչպէս առաջարկել ենք այլընթերցումների եւ ծանօթագրութիւնների բաժիններում, առանց բնագրի մէջ մտցնելու, թէեւ խորապէս համոզուած ենք, որ հարազատ են:

Հայ ակնաւոր բանասէրներ ձեռագրերի քերականութեանը անքննադատօրէն հաւատ ընծայելուն դէմ են եղել. ահա մի քանի կարծիքներ:

ա) Յ. Տաշեանը «Կիլիկեան հայերէնը» յօդուածում (ՀԱ, 1901, էջ 12-16) գրել է (էջ 13). «Ճակաւին շատ հեռու ենք քննադատօրէն գտուած եւ ապահով հարազատ բնագիրներ ունենալէն նոյն իսկ մեր դասական լեզուաւ ընտրելագոյն գործոց համար, ուր քննադատ միւրաքանչիւր քայլին չի կրնար կասկած չունենալ իւր քննածին ճշգրտութեան նկատմամբ, ուր այս կամ այն կէտին վրայ ծանրանալը կրնայ բոլորովին ապարդիւն ըլլալ, քանի որ ապահով չէ անոր ստուգիւ մատնագրին գրչէն ըլլալը, եւ ո՛չ յետսամուտ փոփոխութիւն, բնագրի խանգարում եւ նոյն իսկ գրչի պարզ տգիտական մէկ աղաւաղումն: Ձեռագիրներով զբաղողը լաւ գիտէ այս տխուր պարագայն»:

ըը նոյն իսկ հնագոյն՝ ամէն տեսակէտով կազմակերպեալ դասական լեզուով յիշատակարանաց, որոնք սրբելու համար տակաւին շատ բան ընելու է»:

բ) Ինչպէս յայտնի է, Ա. Այտընեանն իր «Քննական քերականութեան» մէջ ջանացել է փաստերով ցոյց տալ, թէ դեռեւս հինգերորդ դարում դասական գրաբարի կողքին եղել է ժողովրդական հայերէն, որի ձեւերն իբր մտել են դարի մատենագիրներին կամ քարգմանիչների գործերի մէջ: Նորայր Ն. Բիւզանդացին անտիպ մնացած (եւ կիսատ պահպանուած) իր «Տեսութիւն գրքննական քերականութեան» աշխատութեան մէջ մի առ մի հերքել է բերուած մատենագրական «փաստերը», ապացուցելով, որ դրանք գրչագրական միջնադարեան աղաւաղումներ են եւ արտացոլում են միջին հայերէնի ձեւեր:

գ) Ա. Այտընեանի «Գրաբարի հոլովմունք [. . .] ազատութիւն կը ցուցնեն մէկէն մէկաւրին անցնելու՝ որ կրնայ կերպով մ'ըսուիլ թէ որոշ կանոնի տակ չէին» մտքին (Քննական քերականութիւն, էջ 76, ծ. 31) Ա. Վարդանեանը (ՎՊ² 94) պատասխանել է այսպէս. «Ո՛րչափ սակայն յառաջ կ'ընթանան ձեռագրական համեմատութիւնները, այնչափ հաստատ համոզում կը գոյանայ թէ գրաբարի հոլովումները որոշ կանոնի տակ էին»:

դ) Փրանսիացի ակադեմիկոս լեզուաբան եւ հայագէտ Ա. Մեյէն գրել է (ՄԵ 455). «Որքան ճշտութեամբ ուսումնասիրում ենք հայերէնի պէս հարազատութեամբ գրի առնուած մի լեզու, այնքան նրանում նկատում ենք անշեղ կանոնաւորութիւն»:

ե) Վերջապէս ամեն բնագիր հրատարակող պէտք է յիշի Նորայր Ն. Բիւզանդացու հետեւեալ խօսքերը. «Նախնեաց ո՛ր եւ իցէ հին բնագիրը յարգարելու համար, բայց ի Ձեռագրաց համեմատութեան, անհրաժեշտ կարեւոր է լիովին ուսումնասիրել զայն՝ ստէպ ստէպ կարգաւորով: Պէտք է միտ դնել մատենագրին դարուն յորում կը գրէր, իւր գիտութեան աստիճանին, ընդելական դարձուածներուն, բառերուն կազմութեանը, քերականութեանը. միտ դնել այն բառերուն եւ ասացուածներուն՝ որ մերթ այս կերպ գրուած են, մերթ այն կերպ, եւ նորին իսկ մատենագրին օգնութեամբ՝ աստ սխալ գրուածը սրբագրել անդ ուղիղ գրուածով. միտ դնել մատենագրին նա եւ ուրիշ գրուածոց եւ թարգմանութեանց՝ եթէ ունի, եւ իւր ժամանակակից այլ մատենագրութեանց՝ որ փոխադարձաբար կը լուսաւորեն կը պարզեն, կը հաստատեն կամ կ'ուղղեն մէկզմէկ, նոյնպէս եւ այն յետագայ մատենագրութեանց՝ յորս կը գտնուին փոխառութիւնք ի նոյն մատենագրէն: Սովին ոճով ուսումնասիրեալ եւ յարգարեալ բնագրի հրատարակութիւնն կը կոչուի Քննական Հրատարակութիւն» («Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ագաթանգեղոսի եւ Ղազարայ Փարպեցու», «Յուշարձան», 1911, 165):

Բնագրի քերականական սրբագրութեան մեր առաջարկները հոլովական եւ շարահիւսական բնոյթի են. դրանք նշում ենք այբբենական կարգով. տե՛ս նաեւ գլ. Դ, գ-ում «Նորայրի ընդհանուր սրբագրութիւններից» հատուածը:

Ա) Հոլովում

1. Ամենեցուն, երկոցուն հոլովածները Ձ-ում գերազանցապէս այս ուղղագրութեամբ են, սակայն երբեմն իրենց վերջում ունեն -ց յոգնակերտը. մեր կարծիքով սա աւելորդ է, ինչպէս որ ուղղականում նրանք չունեն -ք հոլովակերտը, ոչ էլ հայց-ում -ս: Ամենուրեք ջնջելի է -ց-ն: Բ⁴-ը էջ 164-ում Ագ-ի քննական հրատարակութեան մէջ նախընտրել է առանց -ց-ի ձեւը՝ «Լաւ եւս ամենեցուն», որին կողմնակից ենք, ինչպէս եւ ամենեքին ձեւին (եւ ոչ ամենեքեան), սակայն բնագրի մէջ չենք ներմուծել:

2. Աստուած (քրիստոնէական) անուան ուղիղ եւ թեք հոլովները ձեռագրում յապաւուած են, իսկ տպագրիչներում վերջիններս առանց -ա- ձայնաւորի են, մինչդեռ կարգում ենք աստուածոց: Մենք գրեցինք այս ձայնաւորով բնագրում, առանց յատուկ նշանի, քանի որ ուղղում չենք առաջարկում: Յատկապէս հայագէտ Ա. Մեյէի հետ համակարծիք ենք, որ սղուած ձեւը միջնադարեան է: Ուստի ճիշտ է Աստուածոյ, Աստուածով, որ բնագրում է առանց []-ի:

3. Արիմն ենք առաջարկել ուղղագրել այս յատուկ անունը, սեռ. -տր. -բաց. Արիմնայ:

4. Երկու. մերթելի է ըստ մեզ երկուս հայց-ը, ջնջելի՝ նրա -ս յոգնակերտը, որ հաւանաբար երիս եւ չորս ճիշտ ձեւերի ազդեցութեան հետեւանք է. այս թուականը ուղ-ում երբեք -ք յոգնակերտը չունի: Ձ-ում մի քանի անգամ պահպանուել է հնագոյն՝ հեղինակային երկու հայցականը:

5. -ի > -ւ-, -իւ > -ուոյ, ինչպէս որդի - որդուոյ, անիւ - անուոյ. ամենուրեք վերականգնել ենք այս դասական հերթագայութիւնը, որին, կարծում ենք, չի առարկուի: Դ⁴, էջ 24.6՝ «Բառին վերջը գտնուող -ի գիրը՝ հոլովման ատեն կը փոխուի ի-ի. ինչպէս եկեղեցի - եկեղեցուոյ. իսկ ետեւէն ռ գիրը ունեցած ատեն՝ կը փոխուի ո-ի. գ. օր. պատիւ - պատուոյ, անիւ - անուոյ»:

Բ) Շարահիւսութիւն

1. Որ դերանուն հայց-ը միշտ գրելի է գ- նախդրով: Յոգնակին ըստ մեզ միշտ համաձայնելի է յոգ. յարաբերեալի թուին. Ձ-ում մերթ եգ. է, մերթ յոգնակի:

ա) Ձոր-ի փխ գործածուած որ-ի մասին Ձ 352-ը գրել է, թէ հանդիպում է «Անհոլով եւ աննախդիր որ՝ փխկ գոր, յորում. եւ այլն. (աշխարհաբարի նման)». ու բերել է նաեւ Եզն-ի «գերկիր որ հանապազ բերմք» յայտնի օրինակը: Ընդհակառակն, ՎՊ⁸ 49.20-ում կարգում ենք. «Դասական հայերէնի մէջ փոխանակ գոր. . . կամ յոր. . . գործածելու որ. . . գործածելը ոչ թէ հին մատենագրութեան կամ ընտանեկան լեզուին բնութիւնը կը թուի թէ կը տանէր (Այտընեան, Քննակ. Գեր., Նախաշաւիղ, էջ 90-91), այլ կ'երեւայ թէ յետին դարերու աղաւաղում է, համեմատութեան յայտնի կ'իմացուի թէ դասական լեզուն ունէր իւր բնորոշ օրէնքները», ու բերում է օրինակներ. համակարծիք ենք:

բ) Յոգնակի թուի յարաբերեալ ունենալու դէպքում որ յարաբերական դերանունը Ձ-ում մերթ որք է կամ գորս, մերթ որ կամ գոր. չենք կարծում, որ այս դէպքում հեղինակը երկու կանոն էր կիրառում: Ըստ Ձ 340, է-ի՝ «Յարաբերականն ու յարաբերեալը թուով համաձայնելու են. [աւելի յստակ՝ յարաբերական դերանունն է թուով համաձայնելու յոգ. յարաբերեալի հետ]. միայն որ եզակի ձայնիւ ստէպ կը գործածուի յոգն. ուղղականի եւ նախդրիւ հոլովոց մէջ. մանաւանդ երբ յարաբերեալն ետքը դրուած ըլլայ»: Մենք ամենուրեք յարաբերական դերանունը համաձայնելի ենք համարում յոգ. յարաբերեալի թուին, սակայն մեր առաջարկները թողնում ենք տարընթերցումների մէջ:

2. Համադաս կամ շաղկապուած անդամների յօդը երկում (եւ Աւետարաններում) մի ընդհանուր կանոնի չի հետեւում. յօդը մերթ կրկնուել է, մերթ սոսկ անդամներից մէկի, մանաւանդ 1-ինի վրայ է: Ըստ ՄՐ 24-ի՝ «Երբ համադաս բառեր կան, Եզնիկը յաճախ յօդը դնում է բառերից մէկի վրայ: Եզնիկի երկում համադաս բառերի բազում նշանակալիցը յօդի կրկնութիւնն է, եւ ոչ թէ բացակայութիւնը»: Նման դէպքերում մեզ թուում է, որ յօդը կամ՝ բոլոր համադաս անդամների վրայ էր, կամ՝ ոչ մէկի, եթէ, իհարկէ, յօդն անհրաժեշտ չէր: Մի քանի անգամ նկատելի է նաեւ նախդրի ոչ կրկնութիւն համադաս Չ-րդ անդամից առաջ: Մեր առաջարկները բնագիր չենք մտցրել, շատ անգամ էլ ոչինչ չենք առաջարկել:

3. Ի նախդրի կրկնութիւն յ-ով. ըստ մեզ ջնջելի է Չ-րդը: Ըստ ՎՊ⁸ 47-ի եւ ուրիշների՝ «Դասական հայերէնի մէջ ի եւ յ նախդրներու միասին գործածութիւնը յետսամուտ կը ցուցնեն համեմատութիւնները»: Բ⁴ 172՝ «Միտ չէ դրուած նոյնպէս որ Ձ նախդիր (եւ կրկին Ի եւ Յ նախդիրք) բովանդակ Ագաթանգեղայ գրոց մէջ շատ առատօրէն սփռուած են»:

4. Չ-րդ ուղիղ խնդիր. յոգ. 1-ին ուղիղ խնդրին կապուած Չ-րդ ուղիղ խնդիրը, մանաւանդ երբ ածական է (վերադիր), մեծ մասամբ յոգ. է, մերթ եզակի. նոյնքան անորոշ է այս մասին Ձ 225-ում ձեւակերպուած կանոնը: Մենք ամենուրեք ածական կամ գոյական Չ-րդ ուղիղ խնդիրը համաձայնելի ենք համարում 1-ինի թուին. հմտ. «Յանցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի» (Մղ ճԺԼ 119). «Ոչ արժանիս համարիք զանգ կենացս յաւիտենից» (Գժ ԺԳ 46). «Համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ» (1 ԹԵՍ Ե 13). «Վարեւոր համարեցաւ զնախատինսն Քրիստոսի, քան զմեծութիւն զանձուցն Եգիպտացոց» (Երբ ԺԱ 26), ուր եզակին գուցէ անեզականի եւ զմեծութիւն եզակիի պատճառով է. ՎՊ⁸ 33 «Մարդիկ գաչս քան զսելիս համարին հաւատարիմ». ՎՊ⁸ 126 եւ 213 «Կարի եղուկս համարի գայնութիկ»:

5. Յոգնակի ստորագրելիական վերադիր. ըստ Առ¹ 130-ի՝ երկու «Իբրեւ օրինաչափութիւն, ենթակայի հետ համաձայնում են նաեւ ստորագրելիական վերադիրները, բայց այստեղ եւս նկատուում են անկանոնութիւններ»: Խօսքն իհարկէ յոգնակի ենթակայի հետ թուային համաձայնութեան մասին է: Ինչո՞ւ «անկանոնութիւններով» պիտի գրէր Եզնիկը: Մեզ թւում է, որ նրա գրչի տակ այս համաձայնութիւնը կանոնաւոր էր, քանի որ լեզուի պատմութեան ընթացքում ստորագրելիական վերադիր թուային համաձայնութիւնից անցում է կատարուել անհամաձայնութեան: Ահա մի «անկանոն» նախադասութիւն եւս. «Կէսքն ի նոցանէն խորամանկ, եւ կէսքն՝ միամիտ, կէսքն՝ բարբառող են, եւ կէսքն՝ անբարբառ, կէսքն՝ գեղեցկաձայն եւ քաղցրաբարբառ, եւ կէսքն՝ խստաձայն եւ տգեղաբարբառ» (Թ¹ 71, Վեց.):

5. Այլընթերցումների բաժին

ա) Այս բաժնում նշուած են, ըստ մեր տողատուած բնագրի տողերի համարների, Ձեռագրի այն բոլոր մանրամասնութիւնները, որոնք մեր բնագրի մէջ չեն մտել, մեր հիմնական համարած տպագիրների, Նորայրի կիսատ բնագրի ընթերցումները եւ այլ գործերում նրա թողած նշումները, Գ. Տէր-Յովհաննիսեանի այն սրբագրութիւնները, որոնք չեն մտել Ա. Բագրատունու հրատարակութեան մէջ: Նշուած են բանասէրների առաջարկած եւ մեզ յայտնի ու մեր բոլոր «սրբագրութիւնները»: Ինչ որ այս բոլոր աղբիւրներում կամ դրանցից մէկում նոյնական է մեր կազմած բնագրի հետ, ապա դա չի մտել այլընթերցումների բաժին:

Ձեռագրի, Ձմիւռնիայի տպագրի, Գ. Տ.-Յովհաննիսեանի սրբագրութեան, վենետիկեան հիմնական հրատարակութիւնների եւ Վ. Առաքելեանի հատուածային արտատպումների բնագրային տարբերակներն նշման կամ չնշման հիմքը Ձեռագրի կամ մեր բնագիրն է, իսկ Լ. Խաչիկեանի հատուածի չափանիշը նրա աղբիւր փարիզեան քննական հրատարակութիւնն է: Վենետիկեան 1826-ի տպագրից (Վ) կատարուած արտատպումների՝ Վ¹, Վ², Վ³-ի, Նորայրի բնագրի եւ նշումների ու Բուէնոս Այրէսի հրատարակութեան բնագրային տարբերութիւնների նշման հիմքը կամ չափանիշը այդ անդրանիկ հրատարակութիւնն է, քանի որ նրա կրկնութիւնն են այս կամ այն չափի հարազատութեամբ: Ուստի դրանցից արձանագրել ենք այն, ինչ սրանից տարբերուած է: Այսպէս. բնագրի մեր առաջարկած [յ]այսցը այսց է Վենետիկի տպագիրներում եւ դրանից արտատպուածներում. հետեւաբար նշել ենք միայն առաջին կամ բուն 1826-ի տպագրի ընթերցումը, որ նոյնական է միւսների մէջ էլ: Այսպէս ենք վարուել նաեւ ուրիշ արտատպումների պարագային:

բ) Բնագրային այլընթերցումների նշման հերթականութիւնը ձեռագրի եւ տպագիրների ժամանակագրական կարգն է՝ Ձ, Չ, Գ, Վ, Վ¹, Վ², Վ³, Խ, Մ, այսինքն՝ ըստ 1280, 1763, 1784, 1826, 1850, 1863, 1926, 1951 եւ 1959 թուականների: Սրանց տուեալներին յաջորդում են հատուածային արտատպումների եւ մէջբերումների ընթերցումները, առաջարկուած բնագրային սրբագրութիւնները ոչ թէ ժամանակագրական կարգով, որ կարելի է եզրակացնել ըստ մեր Մատենադարանի, այլ ըստ դրանց հեղինակների անունների մեր յապաւումների այբբենական յաջորդականութեան, որով հեշտ է լինում գտնել այս կամ այն բանասէրի կամ սրբագրութիւն առաջարկողի ազգանունը կամ անունը: Տրուած են նաեւ հանդէսի կամ գրքի այն էջի համարները, ուր առաջարկուած կամ կատարուած է սրբագրութիւնը. դա կարող է օգտակար լինել ստուգումների եւ այլ նպատակների տեսակէտից: Փարիզեան քննական բնագիրը տողատուած չէ. մենք այն տողատեցինք մեր սեփական օրինակում, եւ ըստ այսմ բնագրային տուեալներին ուղեկցում են էջի եւ տողի համարները՝ միջակէտով բաժանուած:

գ) Սրբագրութեան առաջնութիւն. միեւնոյն սրբագրութիւնն առաջարկուել է երբեմն մի քանի բանասէրի կողմից, որոնք կամ միմեանցից անտեղեակ են եղել, կամ չեն տուել առաջին անգամ սրբագրողի անունը: Այսպիսի դէպքերում, ուր մենք հետեւել ենք ազգանունների այբբենական կարգին, առաջնութիւնը կամ ժամանակը կարելի է որոշել մեր Մատենադարանի, որտեղ կարելի է գտնել հանդէսի, գրքի կամ յօդուածի հրատարակութեան տարեթիւրը, որ դրուած է նաեւ մեր յապաւումների ցանկում:

6. Ծանօթագրութիւններու բաժին

Ի տարբերութիւն սովորականի, մեր ծանօթագրութիւնները բնագրում եւ իրենց տեղում համարակալուած չեն, որպէսզի ընթերցողի ուշադրութիւնը չգրաւուէր հարկւարու թուանշաններով: Դրանց նախորդող թուանշանները ցոյց են տալիս այն էջի տողերը, որի համար ծանօթագրութիւնների ամեն մի էջի աջավերեւում է: Ծանօթագրուած բառերը բնագրում աստղանիշ ունեն աջ կողմում:

Ծանօթագրութիւնները միայն ու միայն վերաբերում են բնագրի գրչութեանը, ուղղագրութեանը, քերականութեանը, կէտադրութեանը, ուրիշների եւ մեր առաջարկած բնագրային փոփոխութիւններին, Եզնիկի սուրբգրային մէջբերումներին, ակնարկումներին եւ այլն, սակայն ոչ երբեք՝ հեղինակի մտքերի մեկնաբանութեանը, երկի թարգմանութիւնների մէջ մեր նկատած թերութիւններին, երկի լեզուի ու ոճի մասին արտայայտուած կարծիքներին եւ այլն: Մեր մտահոգութիւնը եղել է միայն բնագրի լեզուական ընկալումը, լոկ բնագիրը: Ի տարբերութիւն Հր. Աճառեանի «Քննութեան» եւ փարիզեան քննական հրատարակութեան, որոնք ձեռագրի բոլոր մանրամասնութիւնները չեն ծանօթացրել, աշխատել ենք ընթերցողին տեղեակ պահել նրա սրբագրութիւններին, սրբագրութիւնների միջոցներին, թանաքի թուլութեան, միահետ կամ անջատ գրութեան հետաքրքրական մանրամասնութիւններին, որքանով դրանք երեւում են մեր լուսանկարներում: Հետու լինելով Վենետիկի, Վիեննայի կամ Երուսաղէմի գրադարաններից՝ չկարողացանք դասական գրականութեան գործերում յայտնաբերել այն նման նախադասութիւնները, արտայայտութիւնները կամ բառակապակցութիւններն ու բառերը, որոնք Եզնիկի երկում են. դրանցով կարելի էր ստուգել լեզուական շատ մանրամասնութիւններ: «Կար մեր այսքան էր»:

Մենք շատ հեռու ենք կարծելուց, թէ մեզ յաջողուել է «վերականգնել» Եզնիկի հարազատ բնագիրը տարբերութիւնների կամ ծանօթագրութիւնների բաժիններում. դա որեւէ երկի նկատմամբ անկարելի է: Լսենք դարձեալ Նորայր Ն. Բիւզանդացուն (Բ⁴ 161). «Անսխտելի պէտք է համարուի՝ որ բնագիրներն դեռ մեծապէս կը կարօտին աւելի մտադրութեամբ ուսումնասիրուելու, աւելի մանր գննուելու, աւելի կշռադատութեամբ եւ հմտութեամբ յարդարուելու [. . .]: Հին բնագրաց Քննական հրատարակութիւնի կը պահանջուին, եւ չեն Քննական ո՛չ Փարպեցոյ չորրորդ տպագրութիւնն¹⁵⁶ եւ ո՛չ Ազգաթանգեղոսի վեցերորդն¹⁵⁷ որ տրուեցան մեզ»: Էջ 165՝ «Կարծեցեալ ուղղութիւններով այլայլած է բնագիրն, մինչդեռ ակնյայտի սխալներ, 100իւ չափ, անփոփոխ մնացած են: Ընդ մեծ եւ ընդ փոքր՝ 500 փոփոխելիք եւ ուղղելիք կան Ազգաթանգեղոսի վեցերորդ տպագրութեան մէջ»: Նա, հաւանաբար, առաւել խիստ կը դատէր մեր համեստ աշխատանքը: Կարծում ենք, որ դեռ շատ ուղղելի կէտեր կան Եզնիկի երկում: Սակայն պահպանողական ոգին նրա երկի նկատմամբ շատ ուժեղ է դեռ, մանաւանդ մի ուրիշ ընտանիքի պատկանող ձեռագրի բացակայութեան պատճառով. Ձմիւռնիայի հրատարակութեան ձեռագիրն այսօրուանը չէ, բայց այն չենք տեսել եւ Գ. Տէր-Յովհաննիսեանին չենք կարող լիովին վստահել:

(Շարունակելի)

¹⁵⁶ Դագարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տիփլիս, 1904:
¹⁵⁷ Ազգաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տիփլիս, 1909: